

ԱՐՄՈ ՀԱՐԵՆՑ

ՍՏԱԼԻՆԸ

ՅԵՎ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1905—1907 թ. թ.

ԱՐԱՐԱՏՈՒՄ

ՊՐԻՆՏՈՒՄԻՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԱԶՈՐԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ Թ 1939

87

СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР



Ի. Վ. ՄՏԱԿԻՆ

24 JAN 2006

ԱՐՄՈ ՀԱՐԵՆՑ

ՍՏԱԼԻՆԸ

ՅԵՎ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԺԱՐԺՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1905—1907 թ. թ.

1889
838

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

91971
Z-39

Սիրով նվիրում եմ Լ. Պ. ԲԵՐԻԱՅԻՆԵ

«Անդրկովկասի բուշևիկյան կազմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի և Վրաստանի հեղափոխական ամբողջ շարժումը՝ նրա ծնունդ առնելու առաջին իսկ օրերից, անխզելիորեն կապված է բնկեր ՍՏԱԼԻՆԻ աշխատանքի և անվան հետ»:

Լ. Պ. Բերիա



4275-91

АРМО АРЕНЦ
СТАЛИН И РЕВОЛЮЦИОННОЕ
ДВИЖЕНИЕ В АРМЕНИИ

в 1905—1907 г. г.

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940



Լ. Պ. ԲԵՐԻԱ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցողի ուշադրութեանը ներկայացվող այս աշխատութիւնը հանդիսանում է Հայաստանի հեղափոխական շարժման պատմութեան յերկար տարիների հետազոտութեան արդյունքը, մի շարժում, յիորը սերտորեն կապված է մեծ ՍՏԱՆԻՆԻ անվան և աշխատանքի հետ:

Մեր դրքի նպատակն է՝ ծանոթացնել ընթերցողների լայն մասսաներին պատմութեան տեսակետից, ճիշտ է, կարճ, բայց բովանդակութեամբ չափազանց հարուստ մի շրջանի՝ Հայաստանի 1905—1907 թվականների հեղափոխական շարժման պատմութեան հարցերի հետ:

Իհարկէ, այս աշխատութիւնը թերութիւններն ունի, և հեղինակն հաճույքով կընդունի ամեն մի արժեքավոր դիտողութիւն:

Հատուկ շնորհակալութիւն եմ հայտնում ակադեմիկոս Յեմ. Յարոսլավսկուն՝ ներկա աշխատութեանը նրա ցույց տված համակրանքի և ուշադրութեան համար:

Ա. Հ.

Գ Լ Ո Ւ Խ Ի

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1905—1907 թ. թ.
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Մեծ Ստալինի լավագույն զինակից ու հետևողական աշակերտ ընկեր Լավրենտի Բերիան Թբիլիսիի կուսակցական կազմակերպության ակտիվի 1935 թ. հունիսի 21—22-ի նիստում տված իր՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» փայլուն զեկուցման մեջ, վերլուծելով Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների հեղափոխական գործունեությունն անցյալում, ցույց տվեց, թե ինչպես՝

«անդրկովկասյան բոլշևիկները, ֆաղափական ինֆուրյուն կուսակցական կազմակերպություն լինելով, զինված լինելով հեղափոխության լենինյան ծրագրով ու ստրատեգիայով, անողոքաբար ջախջախում էին վրացական մենշևիկներին, եսերներին, դաշնակներին, անալիստներին և ֆեդերալիստներին: Յեվ այդ պայքարը հանդիսացավ հեղափոխության մեջ բոլշևիկների խոշոր հաջողությունների վնասկան պայմանը, Անդրկովկասում ռուսական առաջին հեղափոխության վերելքի ու ծավալման վնասկան պայմանը»¹:

Իր հիանալի զեկուցման մեջ ընկեր Բերիան բաց արեց անդր-կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների սկզբնավորման ու ստեղծման իսկական պատմության բացառունչ եջերը:

Լավրենտի Պավլովիչ Բերիան սպառնչ լիակատարությամբ խոսում է

«Քաղաքական պայքարի այն դպրոցի մասին, վորից դուրս է յեկել մեծ Լենինի ամենամտերիմ գործակիցը, ամենանվիրված ու հետևողական զինակիցը, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկեր Ստալինը»:
(«Правда», 10 ոգոստոսի 1935 թ.):

Պերճախոս փաստերով և հսկայական պատմական նշանակու-

¹ Լ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», էջ 116—117:

թյուն ունեցող նյութերով ընկեր Բերիան ամենայն պարզությամբ ցույց տվեց, Վոր

«Անդրկովկասի բուլճերիկյան կաղմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի և Վրաստանի հեղափոխական ամբողջ շարժումը՝ նրա ծնունդը առնելու առաջին իսկ օրերից, անխղելիորեն կապված է ընկեր Ստալինի աշխատանքի և անվան հետ»¹:

Մարքսիստներն լուսաբանելով Անդրկովկասի կուսակցական կաղմակերպությունները կյանքն ու պայքարը, ընկեր Բերիան անողորմաբար մերկացրեց ու ջախջախեց Անդրկովկասի բուլճերիկյան կաղմակերպությունների պատմության նկատմամբ յեղած բոլոր հակամարքսիստական հայացքները:

Վոգելնչված ընկ. Բերիայի այդ ցուցումներով մենք ձեռնամուխ յեղանք Հայաստանի 1905 թվի, մարքսիստական տեսակետից բնավ վրձ լրիվ լուսաբանված, հեղափոխական շարժման հետազոտմանը, շարժում, Վորն անխղելիորեն կապված է ընկեր Ստալինի աշխատանքի ու անվան հետ և կաղմում է Անդրկովկասի հեղափոխական շարժման անբաժանելի մի մասը:

Արխիվային նյութերը, մինչևորհրդային շրջանի բուլճերիկյան մամուլը և բոլոր պատմական փաստերը ցույց են տալիս, թե ինչպես Հայաստանի բանվորներն ու դյուղացիները, ստալինյան խոսքերի ու տողերի հսկայական ուժի ազդեցության տակ, բուլճերիկյան կաղմակերպությունների ղեկավարությամբ, Անդրկովկասի աշխատավորների յեղբայրական ոգնությամբ ու նրանց հետ միասին, հերոսական պայքար են մղել բեկերի, մելիքների, աղաների, բուրժուաների դեմ, ինքնակալության ու նրա բոլոր տեղական օրգանների դեմ:

Փաստերն իրենք մկայում են, թե ինչպես ուսական առաջին հեղափոխության ազդեցությամբ հայ իրականության մեջ հանուն ազատության սկիզբ առած հեղափոխական պայքարը ծալարվել է միայն շնորհիվ մեծ Ստալինի ու նրա ղինակիցների հեղափոխական անդուլ դործունեյության, Կովկասյան Միութենական Կոմիտեյի ղեկավարությամբ:

Սակայն, վորպեսզի պարզ պատկերացնենք այն հերոսական պայքարի ամբողջ բնույթը, վոր մղել է հայ ժողովուրդը 1905—1907 թ. թ. հեղափոխության ժամանակաշրջանում՝ ընդ-

¹ Լ. Բերիա, «Անդրկովկասի բուլճերիկյան կաղմակերպությունների պատմության հարցի շուրջը», էջ 7:

դեմ արյունարբու ցարիզմի, ընդդեմ կապիտալիստների ու կալվածատերերի, — անհրաժեշտ է ընդհանուր դժերով մի հայացք գցել վերջրած պատմական ժամանակաշրջանի՝ վոչ այնքան հեռավոր անցյալի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա:

* *

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության արագ և բուռն զարգացումը Ռուսաստանում սկսվեց հատկապես 90-ական թվականներին:

«90-ական թվականներին արդյունաբերությունը վերելքի չըջան էր ապրում: Բանվորների քանակն աճում էր»¹:

Պետք է նշել, վոր 90-ական թվականներին բանվորներն արմատապես տարբերվում էին ճորտատիրական շրջանի բանվորներից, տնայնագործական և ամեն տեսակի այլ արդյունաբերական բանվորներից ինչպես իրենց համախմբվածությամբ, այնպես և իրենց մարտական հեղափոխական տրամադրություններով:

Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում սկսվեց շատ ավելի ուշ և ընթանում էր համեմատաբար թույլ տեմպով, քան Ռուսաստանում: Կապիտալիզմի զարգացման տեսակետից Անդրկովկասը, վորպես գաղութ, կանգնած էր համեմատաբար ցածր մակարդակի վրա, քան թե Ռուսաստանի կենտրոնական նահանգները:

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր հոչակավոր աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ցույց է տվել կապիտալիզմի զարգացումը նաև Կովկասում: Իր այդ աշխատության մեջ Վ. Ի. Լենինը հանդամանորեն ցույց տվեց, վոր Կովկասը Ռուսաստանի զաղուլթն է, վոր նա իրենից ներկայացնում է մի հետամնաց ազրարային յերկիր:

Վ. Ի. Լենինը գրում է.

«Հետոկֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ զաղութացման էր յենթարկվում, զաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից: Մյուս կողմից՝ տե-

¹ ՀամԿ(բ)ի պատմության համառոտ դասընթաց, էջ 23:

դի յեր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների դուրսագրումը, վորոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին: Ընկնում էր գենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր յերկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր սղնձի, վոսկու և արծաթի, կալի, ճարպի, սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր պրոդուկտները ավելի եփան էյին պատրաստվում ռուսական գործարաններում, վորոնք իրենց շինվածքները Կովկաս էյին ուղարկում: Ընկնում էր յեղջյուրներից դավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ֆեոդալական կարգի և նրա սպտմական խնջույքների կործանման հետևանքով. ընկնում էր գլխարկի արհեստագործությունը՝ ասիական զգեստը յնվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տիկերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, վորն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական արտադրությունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան: Այսպիսով ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ասլըանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական պարփակվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա յեր ստեղծում: Հետոնիորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ այն լեռնականներով բնակավորված յերկիրը, վորոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էյին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկաների յերկիր, և պարոն Կուլպոն անգլիացիներն հանում էր հպարտ լեռնականի վրայից նրա բանաստեղծական աղբային զգեստը և զարգարում էր յեվրոպական լակեյի զգեստով (Գլ. Ուսպենսկի): Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի յեր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցեսը (վորը վարա-

դուրվում էր հողագործական բնակչության աճումով): Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվի 350 հազարից աճեց մինչև 900 հազարի 1897 թվին (Կովկասի ամսորջ բնակչությունը 1851 թ. մինչև 1897 թ. աճեց 95 տոկոսով)¹:

Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում և Հայաստանում ընթանում էր ինչպես ցարական կառավարության, ռուսական և ոտարերկրյա բուրժուազիայի կապիտալի ներգրման, այնպես և բուն Անդրկովկասում կապիտալի կուտակման միջոցով: Առաջին կապիտալիստական ձեռնարկություններն Անդրկովկասում հիմնվեցին անցյալ դարի 60-ական թվականներին:

Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում նոր թափ ստացավ հատկապես շնորհիվ յերկաթուղիների շինարարության և նավթարդյունաբերության զարգացման: Այսպես, որինակ, Թիֆլիս—Փոթի յերկաթուղին, վոր առաջինն էր Անդրկովկասում, սկսեց գործել 1872 թվից: Այնուհետև սկսվեց մի շարք յերկաթուղիների շինարարությունը՝ Բագու—Բաթում (1883 թ.), Բագու—Վլադիկավկազ (1899 թ.), Թիֆլիս—Ալեքսանդրապոլ (1899 թ.), ինչպես նաև Ալեքսանդրապոլ—Յերևան (1901 թ.) և Յերևան—Ջուլֆա (1905 թ.):

Յերկաթուղիների շինարարությունը ներգրավեց բանվորներին նոր մասսաներ: Բանվոր դասակարգն անընդհատ զարգանում էր: Բնորոշ է, վոր Թիֆլիսի, Գուլիստի, Յելիզավետպոլի, Բագվի, Յերևանի նահանգների, Դաղստանի և Սևծովյան մարզերի արդյունաբերական արտադրանքի չափը հասավ 60·765·078 ռուբլու, վորից Յերևանի նահանգի բաժինը կազմում էր 1 միլ. 752 հազ. 578 ռուբլի:

Կապիտալիզմն արագ թափով աճում էր Բագվում՝ ամբողջ Կովկասի արդյունաբերության այդ կենտրոնում: Բավական է հիշատակել, վոր Բագվում 1892 թվին արդյունահանվել էր 298 միլ. փութ նավթ, իսկ 1901 թվին՝ 671 միլ. փութ: Արդյունաբերության զարգացման հետ միասին Անդրկովկասում աճում էր նաև բանվորների թիվը և հետզհետե ավելի ու ավելի յեր համախմբվում ու կազմակերպվում ժամանակակից պրոլետարիատը:

90-ական թվականներին նաև փոփոխություններ են կատարվում Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքում: Մեքե-

¹ Լեոնի, Յերկեր, հատ. III, էջ 463—464:

նաների ներմուծման և արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության հետևանքով աճում է բանվորական ուժը, ուժեղանում է բանվորական շարժումը: Հայաստանում չեն յեղել արդյունաբերական խոշոր կենտրոններ: Այնուամենայնիվ քիչ թե շատ խոշոր արդյունաբերական կենտրոններ էյին Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը:

Մինչև 1887 թիվը Ալավերդու պղնձահանքերն շահագործվում էյին հույն հանքարդյունաբերողների կողմից, իսկ 1887 թվից պղնձահանքերի շահագործումն անցնում է Ֆրանսիական կապիտալիստների ձեռքը: Ալավերդու պղնձարդյունաբերությունն սկսում է բարձրանալ: Այսպես, որինակ, Ալավերդու գործարանի մաքուր պղնձի արտադրությունը կազմում էր 1880 թվին—1082 փութ. 1895 թ.—7418 փութ, 1900 թ.—19·682 փութ, 1901 թվին—59·769 փութ: 1898 թվի տվյալներով, Ղափանում յեղել է պղնձարջասպի 7 ֆիրմա, վորոնք պատկանում էյին կապիտալիստներ՝ Ազարյանին, Լազարել յեղբայրներին, Մելիք-Կարակոչովներին:

Պղնձի արտադրությունը Ղափանի պղնձաձուլական գործարաններում կազմում էր՝ 1892 թվին—22·451 փութ, 1900 թվին—51·783 փութ և 1903 թվին—65·059 փութ:

90-ական թվականներին Հայաստանում հիմնվեցին մի շարք կապիտալիստական մանր ձեռնարկություններ: Հայաստանում արագ կերպով աճում էյին արտադրության այնպիսի ճյուղեր, ինչպես՝ մետաքսամանական, բամբակի, սպիրտի, ողու, կաշվի, լեռնա-հանքային: 90-ական թվականներին բամբակի համախառն միջին բերքը կազմում էր 500—600 հազ. փութ, կամ միջին արժողությունը՝ 4,5—6 միլիոն ռուբլի: Կապիտալիստական խոշոր ձեռնարկություն էր համարվում Շուստովի սպիրտ-կոնյակի գործարանը, վորն արդեն 1895 թ. տալիս էր մեծ արտադրանք: Սպիրտի արտադրության աճման մասին վկայում են հետևյալ թվերը. Հայաստանում յեղած 142 մանր ձեռնարկությունները 1890 թվին տվել էյին 2·474·448 աստիճան սպիրտ, 231 ձեռնարկություններ 1891 թվին տվել էյին 4·541·135 աստիճան, 274 ձեռնարկություններ 1892 թվին տվել էյին 5·701·169 աստիճան և 500 ձեռնարկություններ 1893 թվին տվել էյին 8·569·593 աստիճան սպիրտ¹:

Պետք է նշել, վոր կապիտալիստական արտադրության տե-

¹ Տե՛ս «Կավկասիկի կալենդար», 1898—1910 թ. թ.:

սակարար կշիռը դեռ աննշան էր: Այն նոր էր միայն սկսում զարգանալ Հայաստանում:

Կապիտալիզմն արագ զարգանում էր անդրկովկասյան գյուղում: Ուժեղանում էր գյուղացիության շերտավորումը:

«Գյուղում ամենաունևոր գյուղացիներից առանձնանում էր կուլակային վերնախավը, գյուղական բուրժուազիան, իսկ մյուս կողմից, շատ գյուղացիներ քայքայվում էյին, ավելանում էր գյուղացիական չքավորության, գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների թիվը»¹:

Դեռ հետեֆորմյան ժամանակաշրջանում կապիտալիստական հարաբերություններն սկսում են թափանցել Հայաստանի գյուղը, վորտեղ արդեն յերևան են գալիս Մոսկվայի, Վարչա-վայի, Թիֆլիսի կապիտալիստները: Մասնավորապես, բամբակի արտադրությունը Հայաստանում գտնվում էր այդ կապիտալիստների ձեռքում, ինչպես, որինակ, Մորոզովների և այլ առևտրական ընկերությունների:

Բամբակի տարեկան բերքը Յերևանի նահանգում 1890-ական թվականներին կազմում էր 508 հազ. փութ և դա համարյա թե մոնոպոլ ձևով իրենց ձեռքն էյին վերցրել Մորոզովները, վորոնք Յերևանի նահանգի մի շարք չրջաններում ստեղծել էյին իրենց գրասենյակները:

* * *

Մարքսիզմի առաջին սերմերը Հայաստանում տարածվում էյին դեռ 90-ական թվականներին: Մինչև մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծումը Հայաստանում գոյություն ունեյին միքանի խմբակներ և հայկական լեզվա մամուլ («Կոխ» լրագիրը և այլն), վորոնք գտնվում էյին «Կիվալի», «Մոամբե» թերթերի և Նոյ Ժորջանխայի ազդեցության տակ:

Այդպիսի խմբակների թվին էր պատկանում, որինակ, 1893 թվին Թիֆլիսում գործող՝ «Հայ հեղափոխական բանվորների ասոցիացիան», վորը համարյա թե չեր խաղում պրոգրեսիվ դեր և պատմության մեջ թողել է աննշան հետք:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ 1898—1900 թ. թ. Անդրկովկասում ստեղծվեց և կազմավորվեց սոցիալ-դեմոկրատիա-

¹ ՀամԿ(ր)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 9:



յի լենինյան թևը: Կովկասի բազմազգ պրոլետարիատն ընկեր Ստալինի գլխավորած հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեամբ, Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի հետ միասին, թևակոխում էր մասսայական քաղաքական պայքարի և բացահայտ հեղափոխական յեղույթների ժամանակը ջանք: Որեցոր ամրապնդվում և ծավալվում էր բանվորները ու գյուղացիների քաղաքական պայքարն ընդդեմ ցարական ինքնակալության:

XIX դարի 90-ական թվականները և ներկա դարի 900-ական թվականները մասսայական հեղափոխական շարժման ծավալման տարիներ էյին, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպման ու ամրապնդման տարիներ:

Մարքսիզմի սերմերն Անդրկովկասում լայնորեն տարածվում էյին մեկ կողմից՝ Ռուսաստանի կենտրոնական շրջաններից Անդրկովկաս ու Հայաստան աքսորված հեղափոխական սոցիալ-դեմոկրատները և մյուս կողմից՝ վրացական մարքսիստական սոցիալ-դեմոկրատական «Մեսամե դասի» կազմակերպության միջոցով: 1898 թվին «Մեսամե դասի»-ի ներսում նրա փոքրամասնությունից ծնունդ առավ և կազմավորվեց հեղափոխական խումբ՝ հանձին Ի. Ստալինի, Լ. Կեցխովելու և Ա. Ծուլուկիձեյի:

Սկսվեցին սկզբունքային տարաձայնություններն ու պայքարը «Մեսամե դասի»-ի մեծամասնության ու փոքրամասնության միջև, և «Մեսամե դասի»-ի փոքրամասնությունն էր հենց, վոր ընկեր Ստալինի գլխավորութեամբ դարձավ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի սաղմը և ապա 1904 թվին կազմավորվեց վորսեա լենինյան-խակրայական կազմակերպություն: Յեւ ահա, այդ լենինյան կազմակերպության գաղափարներն արագորեն տարածվում են Հայաստանում: Մարքսիզմի գաղափարները Հայաստանում տարածում, լենինյան-խակրայական սոցիալ-դեմոկրատական խմբակները կազմակերպում և դրանք ղեկավարում էյին Սուրեն Սպանդարյանն ու Ստեփան Շահումյանը: Աշխատելով ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ, Սուրեն Սպանդարյանն Անդրկովկասի բանվորների և գյուղացիների տաղանդավոր կազմակերպիչներից մեկն էր, բանվորներին ու գյուղացիներին վոգեչնչողներից և նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը, Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի դրոշի շուրջը համախմբողներից մեկը:

Ընկեր Ստալինի, Լ. Կեցխովելու և Ա. Ծուլուկիձեյի մոտիկ



Ի. ՍՏԱԼԻՆ և Ա. ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

բարեկամը, այն ժամանակվա կրթված մարքսիստներից մեկը, տաղանդավոր պրոպագանդիստ և պերճախոս հոեատոր էր Սուրեն Սպանդարյանը (Տխմֆեյ), վորը մինչև վերջ նվիրված էր բան-
վոր դասակարգի գործին:

Սուրեն Սպանդարյանն ամենամոտիկ ու բարեկամական հա-
րաբերությունների մեջ էր գտնվում Լենինի և Ստալինի հետ:

«Բարև, Թանկագին Վլադիմիր Իլյիչ,—գրում էր Ս.
Սպանդարյանը,—Հիմա Իոսիֆը հյուր է ինձ մոտ և ուղե-
ցինք մեր վողջույնը հղել Ձեզ: Ինչպե՞ս եք. ի՞նչ եք
անում, ի՞նչպես է Ձեր տրամադրությունը: Գրեք, ինչ
վոր կարող եք, կենդանի խոսքի ծարավ ենք: Կսպասենք
Ձեր նամակին: Սուրեն»¹:

Լենինը և Ստալինը մեծ հոգատարությամբ աճեցրին Սպան-
դարյանին, և նա դարձավ մեր կուսակցության ականավոր մար-
տիկներից մեկը: Սպանդարյանը հսկայական հեղափոխական աշ-
խատանք է կատարում Մոսկվայում, Թիֆլիսում, Բազմում,
աշխատանք, վորի մասին Լենինը և Ստալինը խոսում էին մեծ
գոհունակությամբ: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ, Սուրեն
Սպանդարյանն Անդրկովկասում աչքի ընկնող աշխատանք կա-
տարեց Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ
համերաշխությունն ամրապնդելու համար: Նա ընկ. Ս. Շա-
հումյանի հետ միասին հաստատակամ, կործանիչ պայքար էր
կազմակերպում ընդդեմ դաշնակների, մենշևիկների, անար-
խիստների, կադետների և հակահեղափոխական այլ ուժերի:

Ս. Սպանդարյանը և Ս. Շահումյանը մի շարք մարքսիստա-
կան աշխատությունների ու հոդվածների հեղինակներն են:

Սուրեն Սպանդարյանը՝ Ստեփան Շահումյանի հետ միասին,
ինչպես նաև Մոսկվայից, Պետերբուրգից, Բազմից, Թիֆլիսից,
Բաթումից Հայաստան աքսորված սոցիալ-դեմոկրատները
(Ալեքսանդր Մալխասյան, Ի. Պոլայիս և ուրիշներ), լայնորեն
ծավալում են մարքսիզմի պրոպագանդան:

Անդրկովկասում հեղափոխական շարժման նոր վերելքի և
սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման հա-
մար հսկայական նշանակութուն ունեցավ Բաթումի 1902 թվի
գործադուլը, վոր կազմակերպվել էր Ստալինի կողմից:

«Բաթումի դեպքերը հեղափոխական ալիքի վերելքի

¹ «Պրոլետարիայա ռեվոլյուցիա» № 7, էջ 167:

նախակարգապետները հանդիսացան սմբողջ Անդրկովկասում¹։

Բաթումի բանվորներին այդ հերոսական գործադուլը հսկայական նշանակություն ունեցավ, և նրա ազդեցություն տակ ու նրա որինակով Անդրկովկասում կազմակերպվեցին մի շարք խոշոր քաղաքական ցույցեր։ Բաթումի բանվորներին գործադուլին մասնակցում էին մոտավորապես 6·000 մարդ, վորոնցից ավելի քան 500 հեղափոխական բանվորներ արտաքսվեցին Բաթումից։ Պրանց թվում կային շատ հայ բանվորներ, վորոնք Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն անդամներ էին և սերտորեն կապված էին ընկեր Ստալինի հետ (Խաչիկ Ղազարյան, Մանուկ Համամյան և այլն)։ Ընկ. Խաչիկ Ղազարյանն իր «Ստալինը Բաթումում» հոդվածի մեջ ընկեր Ստալինի հետ ունեցած հանդիպման մասին գրում է.

«Ազատվելուց հետո յես, Մ. Գարունիան, Մ. Համամյանը, Վ. Դադերաշվիլին և Ռոտշիլդի գործարանի ևս չորս բանվորներ գերեզմանոցում տեղի ունեցող խորհրդակցության ժամանակ հանդիպեցին ընկեր Ստալինին։ Քննարկվում էր ձեռնարկատերերի դեմ հետագա պայքարի և նոր գործադուլներ բռնկելու դեպքում փոխադարձ պաշտպանություն անհրաժեշտության հարցը»²։

Իսկ այնուհետև ընկ. Ղազարյանը վերհիշում է ընկեր Ստալինի հետ ունեցած մեկ ուրիշ հանդիպում.

«Մարտի 9-ի յերեկոյան սոցիալ-դեմոկրատական խմբակների ղեկավարները հավաքվել էին ընկեր Ստալինի մոտ։ Նրանց հետ ունեցած զրույցի մեջ ընկեր Ստալինն ասաց. «Այսօրվա ընթացքում մենք առաջ գնացինք մի-քանի տարով»³։

Բաթումի գործադուլին հայ բանվորներին, այդ թվում՝ Յերևանից հենց նոր Բաթում յեկած ընկերների ակտիվ մասնակցության մասին է վկայում Քուլթայի զինվորական նահանգապետի կողմից գրված մի փաստաթուղթ։ Այդ փաստաթղթի մեջ ասված է.

«Սիդերիդիսի գործարանի բանվորները, վորոնք վարձ-

վել էին մինչև հունվարի 1-ը ժամկետով, պահանջ ներկայացրին, վորպեսզի իրենց բավարարեն Մանթաշովի և Ռոտշիլդի գործարանների որինակով... գործադուլավորներն ընդամենը 149 մարդ էին, դրանցից՝ ուսանողատակներ—60 մարդ, այդ թվում՝ Յերևանի հայեր—36 մարդ»¹։

Դեռ 1902 թվին ստեղծվեց «Հայկական սոցիալ-դեմոկրատների միությունը», վորը դրական աշխատանք կատարեց հայ իրականության մեջ մարքսիզմի դադարները տարածելու գործում։

Իր մանիֆեստի մեջ «Միությունը» գրում էր.

«...քանի վոր բոլոր յերկրների բանվորները ճնշվում են միևնույն պայմաններում, քանի վոր նրանց շահերը նույնպես միատեսակ են և քանի վոր նրանք հանձին բուրժուազիայի ունեն մեկ ընդհանուր թշնամի, սոցիալ-դեմոկրատիան բոլոր բանվորներին, առանց ազգի խտրություն, միավորում է մեկ ընդհանուր դրոշի ներքո, վորի վրա գրված է «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»²։

Այն հարցին, թե ինչպես իրականացնել սոցիալիզմի դադարները, «Հայկական սոցիալ-դեմոկրատների միությունը» իր մանիֆեստի մեջ պատասխանում է.

«Արժատական հեղաշրջում՝ սոցիալիստական հեղափոխության միջոցով, վորի նախնական պայմանը պետք է լինի քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից»³։

Դեռ 1903 թվին բուլղարիկյան «Искра» թերթի № 33-ում Վ. Ի. Լենինը ջերմազին վողջումում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ստեղծումը Հայաստանում։

Խոսելով Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության որդանի և նրա № 1-ում դետեղված մանիֆեստի մասին, Լենինը «Հայկական սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» հոդվածի մեջ գրում է.

«Կովկասում յերևան է յեկել մի նոր սոցիալ-դեմ. կազմակերպություն՝ «Հայկական սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Այդ միությունը, ինչպես մեզ հայտնի յե,

1 Լ. Բերիա, «Անդրկովկասի բուլղարիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», էջ 32։

2 «Բաթումի 1902 թվի ցույցը», էջ 77, Համկ(բ)Կ ԿԿ-ի Կուսհրատ։

3 Նույն տեղում, էջ 78։

1 «Բաթումի 1902 թ. ցույցը», էջ 103—104, Համկ(բ)Կ ԿԿ-ի Կուսհրատ։

2 ՏՄՍ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը։

3 Նույն տեղում։

կես տարուց ավելի յե, ինչ սկսել ե իր պրակտիկ դործունեյութունը և արդեն ունի իր որդանը՝ հայերեն լեզվով։ Մենք ստացել ենք այդ որդանի № 1-ը, վոր կոչվում ե «Պրոլետարիատ» և վորի վերնագրում նշված ե՝ «Ռուսաստանի Սոց.—Դեմ. Բանվորական Կուսակցությունը» ...

Մենք ի սրտե վողջունում ենք Հայկական սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստը և հատկապես նրա հիանալի փորձը՝ ճիշտ դրվածք տալու ազգային հարցի վերաբերյալ։ Չափազանց ցանկալի կլիներ, վոր այդ փորձը հասցվեր մինչև վերջ։ Այն յերկու հիմնական սկզբունքները, վորոնցով պետք ե դեկավարվեն Ռուսաստանի բոլոր սոց.—դեմ. ազգային հարցում, միության կողմից նշված են միանգամայն ճիշտ»...

Իր այդ հոդվածը Վ. Ի. Լենինն ավարտում ե հետևյալ նոսքերով.

«Մենք հույս ունենք դեռ վերադառնալու ֆեդերատիվության և ազգայնության հարցին։ Իսկ այժմ վերջացնենք, մեկ անգամ ևս վողջունելով Ռուս. Ս.—Դ. Բ. Կ. նոր անդամին—Հայկական սոցիալ-դեմոկրատների միությանը»¹։

Յեւ իրոք, Վ. Ի. Լենինը 1903 թ. հուլիսի 15-ին «Искра»-յի № 44-ում «Ազգային հարցը մեր ծրագրում» հոդվածի մեջ քննում ե ֆեդերատիվության և ազգայնության հարցը։ Նա նշում ե սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները և միաժամանակ յերևան ե բերում հայկական սոց.—դեմոկրատիայի «Մանիֆեստի» սխալները։

«Սոցիալ-դեմոկրատիան,—գրում ե Լենինը,—վորպես պրոլետարիատի կուսակցություն, իր առաջ դնում ե իրրե դրական և դլլախոր խնդիր՝ աջակցել վոչ թե ժողովուրդների և ազգերի, այլ յուրաքանչյուր ազգության մեջ պրոլետարիատի ինքնորոշմանը։ Մենք միշտ և անսպասան պետք ե ձգտենք բոլոր ազգությունների պրոլետարիատի ամենաանբա միացմանը, և միայն առանձին, բացառիկ դեպքերում կարող ենք առաջադրել և ակտիվորեն պաշտպանել այնպիսի պահանջներ, վորոնք հանգում են նոր դասակարգային պետության ստեղծմանը կամ պետության



¹ Լենին, Յերկեր, հատ. V, էջ 241, 242, 243, 244:

քաղաքական լիակատար միասնության փոխարինմանը ավելի թույլ ֆեդերատիվ միասնությամբ և այլն»¹։

Վ. Ի. Լենինի վերոհիշյալ սրտագին մողջոյնից և ցանկություններից հետո մարքսիզմի դրոշի տակ, ընկեր Ստալինի գլխավորությամբ 1903—1905 թ. թ. Հայաստանում ծնունդ առան ՌՍԴԲԿ լենինյան-խակրայական կազմակերպությունները։

ՌՍԴԲԿ տեղական բջիջներ առաջին հերթին կազմակերպվեցին Հաղարտում, Ալավերդում, Սանահինում, Զալալովում, Յերեանում, Ծամադերիում, Ալեքսանդրապոլում։ Հետագայում ՌՍԴԲԿ բջիջներ կազմակերպվեցին Հայաստանի նաև մի շարք այլ շրջաններում։ Այդ բջիջները կազմակերպորեն ամուր կապված էին ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեյի հետ։

1904—1905 թ. թ. սոց. -դեմոկրատական կազմակերպությունը Յերեանում ուներ չորս բջիջ, վորոնք բանվորների և աշխատավորների մեջ հսկայական աշխատանք էին կատարում՝ նրանց քաղաքական դաստիարակման ուղղությամբ։ Յերեան կայարանի յերկաթուղային բջիջում կային 50-ից ավելի բանվորներ։ Այստեղ մեծ աշխատանք էր կատարում ընկեր Ստ. Ծահումյանը։ Յեւահա, 1906 թվին Յերեանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունն ընկ. Ստ. Ծահումյանին ընտրում է ՌՍԴԲԿ Ստոկհոլմի համագումարի պատգամավոր։ Պատմությանը հայտնի յե այն աղմուկը, վոր Կովկասյան մենչևիկները բարձրացրին ընկ. Ծահումյանին համագումարի պատգամավոր ընտրելու շուրջը։ Մենչևիկները ժխտելով Յերեանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գոյությունը, փորձում էին ապացուցել, թե նա իրավասու չէ համագումարի պատգամավոր ընտրելու։

Հակառակ մենչևիկների աղմուկին, ՌՍԴԲԿ Ստոկհոլմի համագումարն ընկ. Ստ. Ծահումյանին հաստատեց համագումարի պատգամավոր։ Ընկեր Ծահումյանն ակտիվ մասնակցություն է ունենում Ստոկհոլմի համագումարի աշխատանքին։ Նա համագումարում հանդես է դալիս նշանակալից ճառով։

ՌՍԴԲԿ Լոռու կազմակերպությունը, ամուր կապված լինելով մեր կուսակցության հավատարիմ զավակներ՝ Ս. Սալանդարյանի և Ստ. Ծահումյանի հետ և ամենօրյա դեկավարություն ստանալով ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեյից, 1905 թվի հեղափոխության շրջանում հանդես էր դալիս հատուկ ակտիվությամբ։

¹ Լենին, Յերկեր, հատ. V, էջ 337։

1906 թվի դեկտեմբերին կայացավ Լոռու սոցիալ-դեմոկրատական կադմակերպության դաժառային կոնֆերանսը: Կոնֆերանսում ներկայացված էյին ավելի քան 20 բջիջ:

Լոռու սոցիալ-դեմոկրատական կադմակերպության կոնֆերանսը պատգամավորներ ընտրեց կուսակցության Վ համագումարի համար:

Լենինյան դադափարներով ղինված, Անդրկովկասի բուլճերները, ընկեր Ստալինի ղեկավարութամբ, ապրում էյին բուռն աճման և հաղթանակների նոր ետապ:

Անդրկովկասի բանվորները և աշխատավոր գյուղացիները, ընկեր Ստալինի ղեկավարութամբ, հետևելով Ռուսաստանի մյուս շրջանների հեղափոխական բանվորների որինակին, իրագործում էյին կարվածատիրական հողերի բռնադրավումը, հրաժարվում էյին ամեն տեսակ հարկերը վճարելուց, պայքարի էյին յեղում ընդդեմ կարվածատերերի և բոյկոտի էյին յենթարկում կառավարական հիմնարկները:

Ստալինյան պրոպագանդան և ագիտացիան ավելի ու ավելի մեծ չափեր եր ընդունում: Բուլճերկյան թերթերից և պրոկլամացիաներից բանվորներն ու գյուղացիներն իմանում էյին, թե ինչ ե կատարվում Մոսկվայում, Պետրոգրադում, Բազմում, Գուրիայում, նրանք իմանում էյին, թե Թիֆլիսի դաժառի գյուղացիներն ինչպես էյին պայքարի յեղում ընդդեմ կարվածատերերի ու հողեփրականության:

Գյուղացուն ողի պես անհրաժեշտ եր հողը, վորպեսզի նա և նրա ընտանիքը կարողանան դոյություն պահպանել:

Իսկ այդ նպատակին հասնելու ուղիները չափազանց պարզորեն մատնանշվում էյին ստալինյան պրոկլամացիաների մեջ, վորոնք հասնում էյին մինչև Հայաստանի ամենահեռավոր անկյունները:

Գյուղն արձագանգեց քաղաքի կոչին:

Գործադուլների լայն ալիքը տարածվեց ամբողջ Անդրկովկասում: Բուռնտերը, ապստամբությունները, մասսայական ղինված ցույցերը, պայքարը վոստիկանության և ցարական զորքերի դեմ՝ սովորական յերեւույթ էյին Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների համար:

Ընկեր Ստալինի ջանքերով և նրա ղեկավարութամբ տապալվող թերթերն ու պրոկլամացիաները տարածվում էյին նաև Հայաստանում: Բազմից ստացվող բուլճերկյան թերթերի և պրոկ-



Լրագրեր

լամացիաների հեղեղն այն աստիճան մեծ էր, Վոր ցարական պահնորդական բաժինը հատուկ հսկողություն էր սահմանել Վոչ միայն Քարվանսարայում, այլև Աղստաֆա կայսրանում և Ուղունթալա գյուղում: Դավաճանները ոգնությամբ Վոստիկանական բաժանմունքը Քարվանսարայում, «Ծուռ կամուրջ» վայրի թեյարաններից մեկում, բռնազրալեց բոլշևիկյան թերթերի ու պրոկլամացիաների մի ամբողջ կապոց, Վորոնք ուղարկվել էյին Սևքար գյուղի համար: Յերկար Վորոնումներից հետո, Հայտաբերելով թերթերի կապոցը բերող մարդկանց, Վոստիկանությունը ստիպված յեղավ «Ծուռ կամուրջ» վայրում փակել Հորս թեյատուն: Կաշառք տալուց հետո միայն թեյատների տներին հաջողվում է նորից բաց անել իրենց թեյատները:

Իրենց քաղաքական դործադուլներով և հուժկու ցույցերով 1902, 1903, 1904 թվականներին Բազվի, Թիֆլիսի, Բաթումի, Գանձակի (Կիրովաբադի), Ղափանի և Ալալերդու պրովետարները հսկայական ազդեցություն դործեցին Անդրկովկասի գյուղացիների հեղափոխական շարժման վրա:

Հետագայում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման դործում հսկայական դեր խաղացին Լենինի—Ստալինի հավատարիմ աշակերտները՝ Ս. Որջոնիկիձեն, Ա. Մ. Կիրովը, Ս. Սպանդարյանը, Մտ. Շահումյանը, Ա. Զափարիձեն, Ա. Ի. Միկոյանը և ուրիշները:

Մոսկվայից, Ռոստովից, Խարկովից, Բազվից, Թիֆլիսից, Գանձակից, Բաթումից և այլ քաղաքներից ու արդյունաբերական կենտրոններից առաջավոր սոցիալ-դեմոկրատ բանվորները վերադառնալուց հետո, Վորոնք աքսորված էյին հիշյալ քաղաքները հեղափոխական դործունեյության համար, պրոպագանդիստական և կազմակերպական-մասսայական հեղափոխական աշխատանքը Հայաստանում ծավալվում է էլ ավելի լայնորեն: Մարքս-լենինյան ուսմունքի մասսայականացման ու տարածման դործում ընկ. Ստալինի ղեկավարությամբ հսկայական դեր խաղացին Անդրկովկասում հրատարակվող բոլշևիկյան թերթերը:

Հայաստանի համարյա բոլոր շրջաններում թերթերն ու ժուռնալները տարածվում էյին հեղափոխական պրոպագանդիստները և ագիտատորների միջոցով:

1903—1905 թ. թ. ժամանակաշրջանում, ընկերներ Ստալինի, Ծուրլուկիձեյի և Մտեփան Շահումյանի ղեկավարությամբ, վրացերեն ու հայերեն լեզուներով հրատարակվում էր ՌՄԴԻԿ Կով-

կապան Միութենական Կոմիտեյի որդան «Պրոլետարիատի բրձուղա», «Պրոլետարիատի կոխ» թերթը: Ընդամենը լույս ընծայվեց 12 համար: Այդ թերթը տպագրվում էր Կովկասյան Միութենական Կոմիտեյի Հայկաբարի անլեզալ տպարանում:

«Պրոլետարիատի բրձուղա պուրցելի» («Պրոլետարիատի պայքարի թերթիկ»)՝ ՌՄԳԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեյի որդանը, լույս էր տեսնում 1904-ից մինչև 1905 թվականը Վրացերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

Բուլղարիայի կաղմակերպության որդան «Կայծ» թերթը լույս էր տեսնում հայերեն լեզվով, որ ու մեջ: 1906 թվին լույս ընծայվեց ընդամենը 47 համար:

Բուլղարիայի «Նոր խոսք» թերթը հրատարակվում էր հայերեն լեզվով 1906 թվի ուղոստոսի 18-ից սկսած: Ընդամենը լույս ընծայվեց 14 համար:

«Բանվորի ձայնը»՝ Բաղվի բուլղարիկների որդանը, հրատարակվում էր 1906 թվին հայերեն լեզվով:

«Կոչ-դեմետ»՝ Բաղվի բուլղարիկյան կաղմակերպության որդանը, լույս էր տեսնում Բաղվում, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, սկսած 1906 թ. մայիսի 26-ից: Ընդամենը լույս ընծայվեց 19 համար: Այդ թերթը փակվեց Բաղվի գեներալ-նահանգապետի հրամանով, վերաբեր «մասնակար ուղղություն» ունեցող հրատարակության:

Հետևելով ընկեր Ստալինի ցուցումներին, բուլղարիկյան «Կայծ», «Նոր խոսք», «Պրոլետարիատի կոխ» և այլ թերթերը հայ բանվորական և գյուղացիական մասսաներին սխտեմատիկաբար դաստիարակում էին հեղափոխական վոգով, մերկացնում էին բուրժուական սխտեմը, անողորմ պայքար էլին մղում գաղնակցության և հակահեղափոխական այլ կուսակցություններին դեմ:

* *

Յարական կառավարությունը, տարածելով Անդրկովկասում իր քաղաքականությունը, ամրապնդում էր ռուսական բյուրոկրատիան, Անդրկովկասի իր գաղութն էր դարձրել, միայն այն տարբերությունով, վրո տերիտորիալ տեսակետից Անդրկովկասը միակցել էր անմիջականորեն Ռուսաստանին:

Ռուսիֆիկացիայի իր քաղաքականությունը ցարիզմն սկսեց ելլ ավելի բարբարոս մեթոդներով և մասսայական չափերով վաճառել Ռուսաստանի կայսրության կաղմի մեջ մտնող մանր, ճշնված ժողովուրդների նկատմամբ: Ազգային-գաղութային այդ դաժան քաղաքականությունը ցարիզմը վարում էր ինչպես բու-

լոր ժողովուրդներին, այնպես և հայ ժողովրդին նկատմամբ: Դեռ 1885 թվին ցարիզմը ռազմական ուժ գործադրելով փակեց առանց այն ել աննշան թվով հայկական դպրոցներն ու կուլտուրական ընկերությունները: Այդ ակտը հայ ժողովրդին մեջ առաջացրեց ընդհանուր զայրույթ ու մեծ հուզումներ: Ժողովրդական հուզումը և պայքարն ընդդեմ ցարիզի ուժեղացավ այն աստիճան, վրո 1885 թվին դպրոցների փակման առթիվ հայկական «գեմոկրատական» խումբը Թիֆլիսում հանդես յեկավ ցարական ինքնակալության դեմ ուղղված մի կոչով: Հայ ժողովրդի պայքարը ցարական կառավարության դեմ այն աստիճան ուժեղացավ, վրո ցարական կառավարությունն ինքը ստիպված յեղավ 1887 թվին նոր որենք հրատարակել հայկական դպրոցները բաց անելու մասին: Սակայն այդ գիշումը յերկար չչարունակվեց: Շուտով ցարական կառավարությունը նորից փակեց հայկական դպրոցները և արգելեց հայոց պատմություն դասալանդումը:

Յարիզմի ազգային-գաղութային վայրենի քաղաքականությունը հայ ժողովրդին նկատմամբ ամենայն խստություններ կիրառում էր Կովկասի գլխապետ իշխան Գալիցինը: Իշխան Գալիցինն իսկական արչալանք սկսեց հայ ժողովրդին դեմ: Նա ցինիկաբար գանազան լուրեր էր տարածում, թե հայերին պետք է վերադադրեն իրենց ուղարկեն Սիբիր, հայերին նկատմամբ գործադրում էր դաժան ծեծ, բանտ, աքսոր, նա հայտարարում էր, թե այնպես կանի, վրո «Թիֆլիսում չուտով կմնա միայն մեկ հայ և նա ել թանգարանում՝ իբրև չուչելո»: Հայերին նույնպես վայրենի հալածանքների յեր յենթարկում սեհարյուրյակային «կալկազ» թերթի՝ մինչև վոսկրնների ծուծը ռեակցիոն խմբագիր Վելիչկոն:

«Բաժանիր, վրո իշխես» ռեակցիոն իմպերիալիստական լողունգը կենսագործելու համար ցարիզմը աշխատում էր թշնամություն սերմանել հայ և վրացի յեղբայրական ժողովուրդներին միջև: Յարական ինքնակալությունն իր արյունաբուր քաղաքականությունով տանջում և ծանր պայմանների մեջ էր դնում բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին:

Յարական ինքնակալության չեմքերը մաշում էլին հայ ժողովրդի բոլոր թշնամիները, բոլոր նրա «բարեկամները»:

Յարական մինխտրներից մեկը ցինիկաբար հայտնել էր այն միտքը, թե «Հայաստանը մեզ հարկավոր մ առանց հայերի»: Ամբողջ Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը, ցարական

ինքնակալության դադուլթն եյին: Հանդիսանալով Ռուսական ցարիզմի տիպիկ դադուլթը, Հայաստանն ազրաբային, հետամնաց յերկիր եր: «Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ» իր հռչակալուր հողալածի մեջ ընկեր Ստալինը ցույց ե տալիս Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: Ընկեր Ստալինը գրում ե.

«Անդրկովկասը (այդ թվում նաև Հայաստանը—Ս. Հ.) ներկայացնում ե տնտեսապես հետամնաց, աղքատացին յերկիր, դեռևս ուժեղ ճորտատիրական մնացորդներով, բազմաթիվ ազգություններով բնակված մի յերկիր, ազգություններ, վորոնք ասլրում են մեջընդմեջ, իրար խառնված»:

«...Վրացիներ և ռուսներ, հայեր և ադրբեջանական թուրքեր, տաջիկներ ու լեզգիներ, ինգուշներ և ոսեր, չեչեններ և արխագցիներ, հույներ և կալմիկներ—ահա՛ Անդրկովկասի յոթմիլիոնանոց բնակչության ազգային բազմազանության բնավ վո՛չ լրիվ պատկերը: Այդ ազգային խմբերից վոչ մեկը չունի ազգային տերիտորիայի խստորեն նշված սահմաններ, դրանք բոլորն ապրում են մեջընդմեջ, իրար խառնված, ու վոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում»¹:

Յարական կառավարությունը բացառիկ արտոնություններ եր տրամադրում Անդրկովկասի առևտրականներին, կալվածատերերին, հովանավորում եր նրանց, պայմաններ եր ստեղծում նրանց դարգացման համար: Անդրկովկասի առևտրի և արդյունաբերության մեծ մասը գտնվում եր հայկական բուրժուազիայի ներկայացուցիչների ձեռքում, բուրժուազիա, վորը ցարիզմի համար միջնորդի դեր եր խաղում յերկրի դադուլթային շահագործման գործում:

Յարական Ռուսաստանը ժողովուրդների իսկական բանտ եր: Աշխատավորները դարեր շարունակ դաժան շահագործման եյին յենթարկվում ստրկատերերի ու Ֆեոդալների կողմից:

Սակայն ցարական կառավարությունն ամեն վերայ աշխատում եր քողարկել կողոպտուտի ու թալանի քաղաքականությունը, և հենց այդ նպատակով եր, վոր կայսր Ալեքսանդր I-ը Կովկասի նվաճման որերին իր «բարձրագույն հրամանի» մեջ գրում եր.

«Վո՛չ թե մեր ուժերը ավելացնելու համար, վո՛չ թե

շահույթի համար, վո՛չ թե առանց այն ել աշխարհում ամենամեծ պետության սահմաններն ընդարձակելու համար, այլ միայն մարդասիրության զգացմունքից դրդված, վորը մեզ վրա սրբազան պարտականություն ե դնում ունկընդելու ճնշվածների աղերսանքին և վերացնելու նրանց վիշտը, մենք վճռեցինք հաստատել այնպիսի կառավարչություն, վորի վրա հենվելով նրանց յերկրում կստեղծվի արդարություն, որինականություն և անձի անձեռնմխելիություն»¹:

Ինքնապաշտպան հասկանալի յե, վոր ցար Ալեքսանդր I-ի այս «բարձրագույն հրամանը», բացի անսովոր կեղծիքից, իր մեջ վորեւե այլ բան չեր պարունակում:

«Անցյալում, —գրում ե ընկեր Ստալինը,—Ռուսաստանը ցարերի ու դահիճների յերկիր եր: Ռուսաստանն ապրում եր նրանով, վոր կողոպտում եր նախկին ռուսական կայսրության մեջ բնակվող ժողովուրդներին:

Յարական կառավարությունն ապրում եր ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև ռուս ժողովրդի, հյուսիս քամելով»:

Անդրկովկասում ցարիզմն ուժեղացնում եր կալվածատիրական շահագործումը: Ընդարձակվում եյին կալվածատիրական կալվածքները՝ ի հաշիվ աշխատավորների հողային նաեղների: Գյուղացիներից խլում եյին վոչ միայն ավելցուկները, այլ և ամենամահաբեշտը:

Շատ տեղերում գյուղացին կալվածատիրոջն եր տալիս իր բերքի կեսից ավելին:

Լոռու գավառում և Շամշադինում Արամյանը, Մանթաշելը, Իսքյանդար-բեկը, Ղադումյանը, Աղալարովը, Ծատուրովը, Մուսա-Նազիկովը, Սուլթանովը, Վեքելովը, Բերբերյանցը և շատ ուրիշներն իրենց հսկայական կալվածքներով ու ցուփ կենցաղով վոչնչով հետ չեյին մնում ռուս ադնալական-կալվածատիրոջից: Այսպես, որինոսկ, Արամյանը միայն մեկ տարվա ընթացքում Լոռում ձեռք ե բերում 8500 դեսյատին վարելահող, նույն թայդ ժամանակաշրջանում նա դնում ե իր հետևյալ կալվածքները—Լադբադինը՝ 400 հազար ուրբով, Հադպատը՝ 400 հազար ուրբով, յերեք կալվածք Ախթալայում՝ մոտավորապես մեկ միլիոն ուրբով արժողությամբ: Այդ վայրերում նա սկսում

1 Ի. Ստալին, «Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դիմակի տակ», «Պրավդա», № № 55—56, 1918 թ.:

1 Տե՛ս Պետրիկով, գ. № 235:

ե այդ լինել տնկել պողատու ծառերի լավագույն տեսակներով, մտցնում ե գյուղատնտեսական մեքենաներ, կառուցում ե ելեկտրադաշտներ և այլն:

Նույն այդ Լուռում Ֆերդինյանները, չբավականանալով 200 դեսյատին լավագույն հողերով, գլխեր-ցերեկ բացելուց կողոպտում եյին աշխատավոր գյուղացիությանը:

Ամբողջ տերիտորիան, սկսած Դիլիջանի գեղատեսիլ անկյունից, նրա փարթամ անտառներից ու հիանալի լեռնային բարձունքներից մինչև Աղստաֆա գետի ափերը, վորոնք առատորեն ոժտված եյին հսկայական բնական հարստություններով, պատկանում եր յերեք-չորս բեկերի:

Արգավանդ հողերի, անտառների ու այգիների այդ ընդարձակ տարածությունը, հարուստ լեռնային հանածոներով և այլն, գտնվում եր մի բուռ մարդկանց ձեռքին:

Հենց միայն Սուլթանովներն ունեյին 10—15 հազար դեսյատին կալվածատիրական հող:

Իսքրանդար-բեկն իր իշխանության տակ ուներ 5—7 գյուղ: Այդ գյուղերի գյուղացիներն ամեն տարի յերկու-յերեք անգամ Իսքրանդար-բեկի համար սայլերով, ֆուրգոններով, ուղտերով ու ձիերով բերում եյին հսկայական քանակությամբ ցորեն, բրինձ, ձիերով բերում եյին հսկայական քանակությամբ ցորեն, բրինձ, բամբակ, բուրդ, մրդեղեն, յուղ, պանիր և գյուղատնտեսական բամբակ, բուրդ, մրդեղեն, յուղ, պանիր և գյուղատնտեսական ուրիշ շատ մթերքներ. այդ բոլորը կուտակվում եր 24 պահեստներում: Նրանք կապված եյին Գանձակի, Բազլի ու այլ քաղաքների կապիտալիստների հետ և, նրանց հետ կնքված պայմանագրերով, հացահատիկ ու բամբակ եյին մատակարարում նրանց:

Այսպիսով աշխատավոր գյուղացիությունը, վոր գրկված եր հողից, միայն արտաքուստ եր սղատ, իսկ իրականում նա կախման մեջ եր գտնվում բեգերից, խաներից, մեղիքներից և այլ հողատերերից, վորոնք անողորմաբար շահադրժում եյին այդ աշխատավոր գյուղացիներին: Այդ և վկայում Ղազարի վոստիկանական վարչության փաստաթղթերից մեկը, վորի մեջ Զավիլ-յեվսիկին 1902 թվին գրում եր.

«Ղադախում և մնացած գավառներում գյուղացիները միայն արտաքուստ են աղատ, իսկ իրականում, մոտիկից գիտելով, անհնարին ե չնկատել, վոր նրանք գտնվում են բեկերի ու մեղիքների ամենածանր ստրկության տակ»¹:

Գյուղացիությունը տնքում եր կալվածատիրական կամայականությունից: Անընդհատ աճում եյին հարկերը, դանձույթները և սլարհակի դանադան ձևերը:

«Կալվածատիրոջ իշխանությունը կամայականորեն տարածվում եր ինչպես գյուղացու սեփականության, այնպես և նրա անձի, նրա կնոջ ու դուստրերի վրա»: (Յեգեղա):

Ահա մի փաստաթուղթ, վորը վկայում ե այդ.

«Գաղտնի: Պարոն ոգնական: Քեզ հայտնի յե, վոր քեզ գյուղից պետք ե դուրս բերվի ութը սայլ, բայց յես գրել եմ յերեսուն: Խնդր գիտես, թե ինչպես պետք ե գործել. դու անցյալ տարվանից սովոր ես դրան, մտադիր չեմ քեզ սովորեցնելու»:

Յեվ իրոք, գյուղական տանուտերերին սովորեցնելու վորևե անհրաժեշտություն չկար. նրանք արդեն գիտեյին, թե ինչպես պետք ե կողոպտել աշխատավոր գյուղացիներին, նրանք հիանալի տիրապետում եյին իրենց «գործողությունները» բոլոր ձևերին ու յեղանակներին:

Այն ժամանակվա պայմաններում նրանց հեշտությամբ ու հանգիստ հաջողվում եր թալանել գյուղացիներին և հաճախ իրենց հաճույքի համար ծեծի յենթարկել նրանց, հասցնելով կեանամահ դրության, ու նույնիսկ կախել գյուղացիներին, վորոնք այն ժամանակ բաժան-բաժան եյին, չունեյին ամուր կապ և դեկալարություն պրոլետարիատի կողմից:

Վերևում բերված փաստաթղթի հեղինակ Թիրաքովը, վորը իջվածակ գյուղի շուրջը գտնվող 7 գյուղերի տանուտերն եր, իր «գաղտնի» նամակում ավելացնում ե.

«Պարոն ոգնական, քեզ մնաց մոռանայի քեզ հաղորդել ամենադժարությամբ—վոր դու տայլերի հետ անպայման ուղարկես գեղեցիկուհի Սիրունի ամուսնուն, վորպեսզի այն, ինչի մասին յես ու դու գիտենք, յես կարողանամ կատարել: Թանկագին ոգնական, քեզ հայտնի յե, վոր ութ ամիս ե, ինչ աչքս նրա վրա յե. վաղը գլխեր ինչպես ելվոր լինի, յես նրան կտանջեմ»:

Վերլուծելով Անդրկովկասի գյուղացիների ծանր ու ստրկական վիճակը, ընկեր Ստալինը գրում ե.

«Թիֆլիսի, Յելիզավետպոլի¹ և Բազլի նահանգներում

¹ Տե՛ս Ղադախի գավառական արխիվ, Գ. № 20:

¹ Յելիզավետպոլի նահանգի ամենամեծ գավառներից մեկը Ղազարի գավառն եր:

մինչև այժմ ել կան մեծ թվով ճորտատեր թուրք բեկեր ու վրացի ֆեոդալական իշխաններ, վորոնք տիրապետում են հսկայական լատիֆունդիաների, ունեն հատուկ զինված բանդաներ և իրենց ձեռքումն են պահում թուրք-հայ-վրացի դյուղացիների բախտը»¹:

Բավական է, յեթե առնենք, վոր Բորչալուի դավառի բնակչության տասերորդ մասը, վորը չունեն հողային նաղեններ, ստիպված եր ամենածանր պայմաններով «նաղելային» հողեր վերցնել և մշակել:

Բնակչության զգալի մասը, վորը դուրկ եր վորեւ հողից, դանադան պայմաններով ապրում եր կալվածատերերի հողի վրա և յերկար ժամանակ կապված լինելով տեղի հետ, չեր կարողանում հեռանալ ու աղքատի լիակատար կախումն ունեն կալվածատերերից:

Լուու դյուղացիները 42 տոկոսը դուրկ եր բանող անասուններից, սկտական հողերի 72 տոկոսը պատկանում եր արտոնյալ խավերին և հողի միայն 27,1 տոկոսն եր ողտադործվում դյուղական աշխատավորության կողմից:

Հողատիրութունը Հայաստանում ներկայացնում եր հետևյալ պատկերը.

1. Պետական հողեր	1.577.200 հեկտ.	} 70%
2. Կալվածատիրական »	303.000 »	
3. Վանքապատկան »	81.000 »	
4. Գյուղացիական »	859.100 » 30 %	

Ընդամենը՝ 2.820.300 հեկտ.

Գյուղացիները բաղմաթիվ ուղղակի և անուղղակի հարկեր եյին վճարում ինչպես կենտրոնական իշխանությանը, այնպես և կալվածատիրոջն ու բեկին:

Համառոտակի թվարկենք այդ հարկերը:

Բնահարկ (բահրա)՝ գյուղացիները վճարում եյին հողի ողտադործման համար, ամբողջ բերքի մեկ տասերորդից մինչև կեսը:

Գրամական հարկ խոտհարքից, ավելի ճիշտ՝ հարկ արոտատեղի համար և ձմեռանոցներում անասուններ պահելու համար— անասունների յուրաքանչյուր դլխից վճարում եյին 6 ուրբ. 20 կոպեկ (առավելապես անասնապահական շրջաններում):

Քաղաքական հարկ՝ դանձվում եր այն դյուղացիներից, վորոնք ունեյին մեկ դլխից ավելի անասուն և յայլադ եյին դուրս գալիս: Այն հարկը, վոր քոչվորներից դանձվում եր արոտատեղի համար, կոչվում եր անասնահարկ:

Սակայն յերբ քոչվորները վրաններ եյին խփում յայլադում, դրա համար ել հարկ եյին վճարում դանձարանին կամ կալվածատիրոջը:

Հարկ՝ այգիներից: Ամեն տարի աշնան ամիսներին (դլխապուրապես հոկտեմբերին), բացի նախատեսված հարկերից, դյուղացիները պարտավոր եյին «նվերներ» տալ բեկերին, խաներին, դանադան տեղական չինովնիկներին և այլն: Այգեհարկը պարտադիր եր նույնիսկ նրանց համար, ովքեր վորքիկ բանջարանոցներ ունեյին:

Գլխահարկ՝ յուրաքանչյուր դյուղացիական տնտեսութուն վճարում եր ըստ կատեգորիաների. առաջին կատեգորիան՝ 2 ուրբ. 50 կոպ., յերկրորդ կատեգորիան՝ 3 ուրբ., յերրորդը՝ 5 ուրբ., միջին հաշվով՝ 4 ուրբ.:

Բայց այդ դեռ բոլորը չեր. դյուղացին վճարում եր չնախատեսված, ապրիլին, միանգամայն քմահաճ բաղմաթիվ այլ հարկեր:

Տոն որերին (որինակ, նովրուդ-բայրամ, դատկին և այլն), դյուղացիները պարտավոր եյին «նվերներ» մատուցել կալվածատերերին, տեղական չինովնիկներին:

Հասարակական ծախս եյին համարվում կալվածատիրոջ աղջրկա, տղայի, յեղորբ, քրոջ և այլ աղգականների նշանադրության ու հարսանիքի հետ կապված ծախսերը: Պետք ե հիշեցնել, վոր այդ ծախսերը բավականին խոշոր դումարներ եյին կազմում: Հարսանիքի ժամանակ դյուղացիները պարտավոր եյին նվերներ (շարաշ) տալ հողուտ կալվածատիրոջ:

Դեմբետ և Աղստաֆա դետերի ամիսներին դյուղացիները, մեծ մասամբ հայերը և վրացիները, դաշտային աշխատանքների ժամանակ կառուցում եյին հյուղակներ, և դրա համար նրանք նույնպես պարտավոր եյին հարկ վճարել: Դեմբետ և Աղստաֆա դետերը համարվում եյին թալաղի սեփականութունը, և այդ պատճառով ձկան վորսի կեսը նրան եր տրվում:

Անտառներում պտուղ հավաքելու համար դյուղացիները հատուկ դումար եյին վճարում: Չափազանց տարածված եր «անտառի համար» սովորական դարձած կաշառքը:

Յեկեղեցին Հայաստանում տիրապետում եր հսկայական կալ-

¹ Ի. Ստալին, «Անդրկովկասի հակահեղափոխականները սոցիալիզմի դեմակի տակ» (տե՛ս «Правда», 1918 թ. № № 55, 56):

վածքների: Այնպիսի վանքեր, ինչպես, որինակ, Եջմիածնի, Մանազինի, Տաթևի վանքերը և այլն, իրենց տիրապետութան տակ ունեյին բազմաթիվ գյուղեր, վորոնք ամբողջապես յենթարկվում էյին յեկեղեցուն և բազմաթիվ հարկեր ու տուրքեր եյին վճարում նրան:

Գյուղացիները նատուրալ և դրամական պարհակ եյին կրում յեկեղեցու և վանքի համար: Այդ պարհակը հասնում եր հողագործութան արտադրանքի մինչև մեկ հինգերորդ մասին:

Հենց միայն Եջմիածնի վանքը տիրում եր 7—8 գյուղերի: Այդպիսով, ինչպես առաջ, այնպես և 1905—1907 թ. թ. հեղափոխութան ժամանակաշրջանում, յեկեղեցին հանդես եր դալիս վորպես ուսակցին ուժ և սլաքարում եր հեղափոխութան դեմ:

Աշխատավոր գյուղացիութունը մեծ մասամբ ապրում եր լեռնոտ տեղերում, վորտեղ հողագործությամբ զբաղվելն ավելի դժվար եր, քան թե ցածրադիր շրջանների սլաքամաններում. հողի սակավութունը, նրա մշակման դժվարութունը, խղճուկ բերքը՝ մեկ կողմից, տիրապետող վոստիկանական կարգերը՝ մյուս կողմից, գյուղացիներին հասցնում էյին ծայրահեղ չքավորության, նրանց կյանքը դարձնելով անտանելի:

Ահա թե այդ առթիվ ինչ ե գրում ժամանակակիցներից մեկը.

«Խոտը հալածում ենք ժայռերի արանքից և լեռների ստորոտներից. անհնարին ե նույնիսկ մարդավայել ապրելը... և Ղազարի գյուղացին հենց այդպիսի սլաքամաններում ել ապրում եր: Տարին բոլոր սլաքանական արորով փորփրելով քարքարոտ մի հողակտոր, նա մաշում եր իր կյանքը»:

Տարին բոլոր նա քրտինք եր թափում, ուժից վեր աշխատում եր և միշտ մնում եր աղքատ, կիսաքաղց գոյութուն եր քաշ ալիս:

Հողատակավորության հետևանքներն ե'լ ավելի ծանր եյին դառնում այն պատճառով, վոր հողաբաժանության ժամանակ գյուղում չկար վոչ մի արդարութուն:

Հայաստանի լավագույն շրջաններում ցարիզմը բնակեցնում եր կալվածատերերին ու կուլակներին, քչելով վրացի, հայ, ադրբեջանցի և այլ աշխատավորներին հեռավոր ու անբերրի վայրեր:

Մենք տեսնում ենք, վոր կապիտալը գյուղ թափանցելու պատճառով գյուղացիական անտեսութունները մասսայաբար

քայքայման են յենթարկվում: Շատ ընտանիքներ բացարձակապես վոչինչ չունեյին:

Պետական հարկերի և կալվածատիրական դանձումների դժուր ունեցած պարտքերը վճարելու համար սակավահող գյուղացիներն ստիպված էյին բարձր տոկոսներով դրամ փոխ առնել առևտրականներից ու վաշխառուներից, այդպիսով ընկնելով նրանց կեղեքիչ ճանկերը:

Ահա թե ինչպես ե նկարագրել Հայաստանի աշխատավորները ծանր վիճակը հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը.

Են արն եկան քովքի արին,
Հարկ եմ ուզում տերության,
Ի՞նչ տամ կռիւն ու բեգլարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան:

Ձեռս պակաս, ուժքս հատած,
Հագար ու մի ցավի տեր,
Ինձ եմ մայում մերկ ու սոված
Մի տուն լի՛ք մանուկներ:

Ավելի ծանր սլաքամաններում եր գտնվում նաև բանվոր դասակարգը: 11—12-ժամյա աշխատանքային օրն Անդրկովկասի համարյա բոլոր ձեռնարկություններում և չափից դուրս ցածր աշխատավարձը (սղնձաձուլական արդյունաբերության բանվորն ստանում եր օրական 20—ից մինչև 70 կոպեկ), աշխատանքի ծանր սլաքամանները և ծաղրանքը ձեռնարկատերերի կողմից՝ անտանելի եյին դարձնում բանվորների կյանքը:

Այդ ամենը բանվորներին սլաքարի յեր մղում, նրանց ներգրավում եր հեղափոխական շարժման մեջ, իսկ նրանց աղղեցության տակ հեղափոխական շարժման շարքերն էյին կանգնում նաև գյուղացիները:

Բնական ե, վոր Անդրկովկասի ժողովուրդները չեյին կարող յերկար ժամանակ հանդուրժել շահագործումը և նրանք դարերի ընթացքում տարերայնորեն սլաքարում էյին շահագործողների դեմ: Ժողովրդի լավադույն դավալներն աշխատավորների հետ էյին և նրանց սլաքարի էյին կոչում ընդդեմ կեղեքիչների:

Աշխատավորները գտնվում էյին անսահման կարիքի ու աղքատության մեջ: Իր փրկությունը նա տեսնում եր միասնության մեջ, սլաքարի և իր հաղթանակի մեջ: Վրաց մեծ պոետ Շոթա Ռուսթավելու այն խոսքերը, թե «լավ ե մահը, բայց փառավոր, քան անարդանքն անփառունակ օրերի», վոր նա ասել

և հեղափոխութիւնից զեռ շատ առաջ, ամբողջովին վերաբերում էին 1900 թվականներին ժամանակաշրջանի բանվորներին ու գյուղացիներին:

Ռուսթավելու այդ իմաստուն խոսքերը դարերի ընթացքում յեղել են Անդրկովկասի հեղափոխական ժողովրդի մարտական վուզու արտահայտութիւնը:

Անդրկովկասի հեղափոխական բանվորներն ու գյուղացիները բազմիցս ապստամբում էին ինքնակալության դեմ, այլերելով և հրկիզելով կալվածատերերի ագարակները, այգիներն ու գույքը:

Յերբ 1902—1903 թվականներին Արեւմտյան Վրաստանում (Գուրիա, Մինդրելիա) սկսվեց ագրարային շարժումը, վորը վերածվեց ապստամբության ընդհանր ցարական ինքնակալության, Հաղպատ գյուղի աշխատավոր գյուղացիները, Վրաստանի աշխատավորներին որինակով, Ալավերդու բանվորներին և ընկեր Ստալինի կողմից կազմակերպված ու ղեկավարված՝ Բաթումի գործադուլի մասնակիցներին անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ, վորոնք այն ժամանակ գտնվում էին Հաղպատ գյուղում, հանդես յեկան գյուղացիական ագրարային շարժման առաջին շարքերում:

Հողի պահաւը, դարավոր ծանր ճնշումը, չափից դուրս բարձր հարկերն ու դանձումները, «նաղելային» հողերի անտանելի կապալային պայմանները Հաղպատի գյուղացիներին ստիպում էին իրենց գոյութիւնը պահպանելու հնարավորութիւն փնտռել:

Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Հաղպատ գյուղի բնակիչները, կապալառու գյուղացիները, անդուլ պայքար էին մղում տեղական կալվածատեր Բարաթովի դեմ: Սկզբում պայքարը կրում էր դուռ տնտեսական բնույթ: Թեև Հաղպատի գյուղացիներն ունէին «նաղելներ», բայց նրանցից ստացվող յեկամուտները չէին բավարարում գյուղացիներին պահանջներին, վորովհետեւ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսութիւնն ընկնում էր ընդամենը յերկու դեսյատին հող (յուրաքանչյուր տնտեսութիւն մեջ միջին հաշիւով կար 10 շունչ): Ուստի գյուղացիները վարեւահողը, արոտատեղերն ու անտառը կապալով էին վերցնում կալվածատեր Բարաթովից, վորը տարեցտարի բարձրացնում էր կապալավարձը և գյուղացիներին հասցնում էր քայքայման: Գյուղացիները վաճառում էին իրենց անասունը՝ հարկերը վճարելու համար: Վերջապես, համբերության բաժակը լցվեց, և գյուղացիների մեջ խմորում սկսվեց, վորը սպառնադին

չափեր ընդունեց այն բանից հետո, յերբ Բարաթովի կալվածքներին նոր կառավարիչ նշանակվեց համալսարանական դիպլոմավոր լիբերալ իշխան Ավդուշելիշվիլին, վորի գազանային արարքները սահման չունէին: Չնչին առիթով նա ծեծում էր գյուղացիներին, նույնիսկ յեղել են սրախողխող անելու դեպքեր: Գյուղացիներին բողոքները մնում էին անհետեանք: Տեղական վտտիկանութիւնը դրա վրա նայում էր մատերի արանքով: Իշխան Ավդուշելիշվիլին, չբավականանալով դրանով, կրկնակի բարձրացրեց կապալավարձը: Գյուղացիները հրաժարվեցին հողը կապալով վերցնել իշխան Բարաթովից, և գյուղից հեռանում էին, աշխատանք փնտռելով քաղաքներում ու Ղարսի յերկաթուղում, վորպեսզի այդպիսով իշխան Բարաթովին ստիպեն իջեցնել կապալավարձը: Գազան Ավդուշելիշվիլին կապալավարձն իջեցրեց, բայց ուզում էր հողը կապալով տալ հարեան գյուղերի գյուղացիներին:

Մյուս գյուղերի գյուղացիները համերաշխութիւն տածելով ղեպի հաղպատցիները, հրաժարվում էին «սիրալիր» առաջարկից: Բայց պատենտավոր ինտելիգենտն այլ միջոցներ էր գտնում հաղպատցիներին ճնշելու համար: Գյուղացիներին «նաղելները» միմյանցից բաժանված էին իշխան Բարաթովի ձեռքում գտնվող հողակտորներով, և այդ հողակտորներին միջոցով էլ հենց նա նստում էր գյուղացիներին «նաղելներից» ողտվելու ժամանակ: Գյուղացիները պահանջում էին «հողակտորները»՝ իշխան Ավդուշելիշվիլին դիմեց վտտիկանութիւնը: Այդ պահից պայքարն ընդունեց քաղաքական բնույթ: Հաղպատ գյուղը յեկավ գալառապետը՝ կաղակներին մի ջոկատով (50 մարդ) և լիտիաբար հրամայեց հրաժարվել վոչ միայն հողակտորներից, այլև կապալավարձը վճարել իշխան Ավդուշելիշվիլու կողմից սահմանված չափով: Գյուղացիները կտրականապես հրաժարվեցին և հեռագրով գանգատ ներկայացրին Կովկասի գլխապետ իշխան Գալիցինին, բայց գանգատը մնաց անհետեանք:

Գալառապետը պնդում էր իր ասածը, բայց դա գյուղացիներին չվախեցրեց: Այդ ժամանակ նա կաղակներին հրամայում է իլի գյուղացիներին անասունը՝ վաճառքի համար: Կաղակներն անմիջապես ձեռնամուխ են լինում «պաշտոնական պարտականութիւններին» կատարմանը, բայց գյուղացիները քարերով ու մահակներով հարձակվում են ցարական բաշխողներին վրա և հետ են խլում իրենց անասունը: Գալառապետը տեսնելով, վոր հուզումները սուր բնույթ են ընդունում, դիմում է ձերբակալու-

թյունները: Ձերբակալում են բազմաթիվ գյուղացիներ: Դրանից հետո միջանի ամսվա ընթացքում վոստիկանությունն ու Ավդու- շելիշվիլին աշխատում են ամեն կերպ գյուղացիներին ստիպել անձնատուր լինելու, բայց այդ վոչ մի կերպ չի հաջողվում: Գյուղացիների համերաշխությունն որեցոր ամբաստնվում էր: Պրիստավն անվերջ ներկայանում էր, սպառնալով բոլոր գյուղա- ցիներին բանտ ուղարկել: Վերջապես, 1903 թվի դեկտեմբերին պրիստավը ներկայանում է չափարների (ստրաժնիկներին) հետ միասին, և սկսվում է կատաղի կռիվ: Զայրացած գյուղացիները խիստ ծեծում են պրիստավին ու ստրաժնիկներին, վորոնք դե- մում են փախուստի: Բայց հաջորդ օրն իսկ դալիս է դավառա- պետը՝ 200 կազակներով, վորոնց հրահրում է գյուղացիներին դեմ: Ծեծի յենթարկելով բոլոր գյուղացիներին, ամբողջ յերի- տասարդությանը ձերբակալում և լցնում են դոմերը: Անա- սունը քշում են վաճառքի: Ծերունիներն ու կանայք դավառա- պետին խնդրում են խնայել իրենց և վերադարձնել անասունը, բայց դավառապետը պատասխանում է փողոցային հայհոյանքով ու «տղաներին» հրամայում էր դառ տալ «անիրավներին»:

Զայրացուցիչ դեպքեր տեղի ունեցան: Կաղակները ծեծում էյին կանանց ու յերեխաներին, բայց վերջիններս պաշտպանվում էյին մահակներով ու քարերով: Այդ ժամանակ կաղակները դա- վազած սպան հրամայում է կրակել: Կաղակները մեկ համադար- կով սպանում են 8 մարդ (վորից 4-ը՝ կին): Սարսափած բաղ- մությունը ցիրուցան է լինում: Իշխան Ավդուշելիշվիլին և դավառապետը հասնում են իրենց նպատակին—նրանք գյուղացի- ներին հայտարարում են խռովարարներ և սկսում են ձերբակա- լությունները: Ձերբակալվում է 60 մարդ, վորոնցից 40-ին ուղարկում են Թիֆլիս՝ Մետեխի բանտը: Մնացած գյուղացինե- րը շարունակում են բոյկոտի յենթարկել իշխան Բարաթովին:

Հաղպատի իրադարձություններն ունեյին վո'չ միայն տեղա- կան նշանակութուն, այլ դրանք Անդրկովկասի ընդհանուր հե- ղափոխական շարժման մեջ գրավեցին մի եջ, ինչպես այդ մասին գրում էր Լենինյան «Իսկրան» հեռավոր ժնեում:

«Այդ բողոքներին նաև ավելացավ զայրույթը՝ Յելի- դավետայրում, Թիֆլիսում, Բադվում, Ղարսում և Անդեր- կովկասի այլ քաղաքներում տեղի ունեցած դադանային սպանությունների առթիվ: Այսպես, որինակ, Լոռու դա- վառի համարյա բոլոր գյուղերում դեմոնստրատիվ հոգե-

հանդիստներ կատարվեցին վերջին իրադարձությունների ժամանակ սպանվածների համար, վորից հետո նգովք եր հայտարարվում կառավարությանը, արտասանվում էյին ձառեր, յերգվում էյին ազգային-հեղափոխական յերգեր: Վորոշ տեղերում (Հաղպատ և այլն) ընդհարումներ տեղի ունեցան վոստիկանության հետ: Որինակ՝ Զալալոդյում ուղում էյին ձերբակալել ագիտատորին, բայց բազմու- թյունն ուժով պաշտպանեց նրան և նա աղատ ուղևորվեց շարունակելու իր աշխատանքը հարևան գյուղերում»¹:

Յեվ իրոք, վերևում նկարագրված հերոսական իրադարձու- թյուններից հետո Հաղպատ գյուղը պատվով էր կատարում իր հեղափոխական դերը: Դրանից հետո ցարիզմը Հաղպատը համա- րում էր անբարեհույս գյուղ:

Վո'չ բանտերը, վո'չ տանջանքները, վո'չ դաժան հետապն- դումներն ու արյունահեղ դատաստանները չընկճեցին Հաղպատի գյուղացիներին հեղափոխական վոգին և մարտական պատրաստու- թյունը պայքարի համար:

Յարական կառավարությունը Հայաստանում, ինչպես և այլ տեղերում, մշտապես «պատժիչ ջոկատներ» էր պահում:

Իսկ ինչո՞վ էր զբաղվում այդ դորքը:

Անվիճելի փաստերը վկայում են, վոր Հայաստանում, ինչ- պես և այլ տեղերում այդ «պատժիչ ջոկատները» ամենուրեք շարունակում էյին իրենց բարբարոսությունները:

Յերբ Բալքենդ գյուղի ապստամբ գյուղացիները 1905 թվին հարձակվեցին խոշոր կալվածատեր Ալիեվի ագարակի վրա և, դե- կավարվելով հեղափոխական լողուններով, խլեցին նրա հողերը իրենց ոգտադործման համար, «պատժիչ ջոկատը» Ալֆտանի առաջնորդութամբ, դադանաբար դատաստան տեսավ նրանց հետ: Յարական կառավարության այդ վայրենի դատաստանից կենդանի մնացած բալքենդցիները հեռացան իրենց հարազատ ու թանկագին ոջախներից:

Շահալի գյուղի համայնքը դեռ անհիշելի ժամանակներից ողտվում էր Այրում-յուրտ կոչվող տեղական արոտներից: Այդ արոտատեղերը գտնվում էյին գյուղից վոչ հեռու:

1891 թվին Լոռու վոստիկանական պրիստավը հայտա- բարեց, վոր

«Շահալի գյուղի համայնքը զրկվում է Այրում-

¹ «Искра» Թերթ, № 50, 15 հոկտեմբերի 1903 թ.:

յուրա արոտատեղերից ոգտվելու իրավունքից, քանի միւր այդ արոտատեղերը մտնում են պետութեանը պատկանող հողերի մեջ»¹:

Այս դործի տվյալներից յերևում է, միւր արոտատեղերը խելու համար հիմք է ծառայել Ղարաքիլիսայի անտառապետի դեկլացացիոնը, միւրն «սպացուցում էր», թե իբր Այրում-յուրա արոտներից Ղարաքիլիսայի անտառային տնտեսութիւնը, միւրը մտնում էր Յերևանի նահանգի մեջ, մնաս է կրում:

Այրում-յուրա արոտատեղը խելն ուժեղ դժգոհութիւն առաջացրեց միջ միայն Շահալի, այլ և մերձակա մյուս դյուղերի դյուղացիների մեջ:

Մի շարք տարիներ ընթացքում Շահալի դյուղի դյուղացիները տասնյակ պատվիրակութիւններ են ուղարկել դաւառային ու նահանգական հողային վարչութիւնները, ինչպէս և միտարքայի մոտ, բայց միջ մի արդիւնքի չեն հասել:

Ղարաքիլիսայում սկսվեց մասսայական ապստամբական շարժում ընդդէմ ինքնակալութեան և նրա տեղական որդաններին: Յերբ 1903 թ. Թիֆլիսից յերկրորդ անգամ ծանուցում ստացվեց № 2869 գրութեամբ, թե «23 դեսյատին վարելահողը համարվում է պետական և նրանից ոգտվել չի թույլատրւում»², այդ պայքարը բորբոքվեց նոր ուժով և ընդունեց այն աստիճան լայն թափ, միւր ինքնակալութիւնը հատուկ հսկողութեան տակ առավ Ղարաքիլիսա դյուղը և «պատժիչ ջոկատ» ուղարկեց այնտեղ:

Խուզարկութեան ժամանակ «վոստիկանութիւնը մի տան նկուղում հայտաբերեց զենքի մի ամբողջ պահեստ: Գտնվեցին ռումբեր, «Մաուզեր» սրստմի մոտավորապէս 100 ատրճանակ և մեծ քանակութեամբ փամփուլոններ»³:

Այս և դրա նման բազմաթիւ որինակները ցույց են տալիս, միւր Հայաստանի աշխատավորներն ավելի ու ավելի մեծ չափով ելին հեղափոխականանում, դառնում ելին ե'լ ավելի զգուշ, համախմբւում ելին և դիմում պայքարի համարձակ քայլերի ընդդէմ բռնադատիչների ու նրանց վոգեչնչող ինքնակալութեան:

Յարկոմն արդէն զգացել էր Անդրկովկասի հեղափոխական շարժման հզորութիւնը, շարժում, միւրը կազմում էր հզոր ռուսական պրոլետարիատի հեղափոխական ուժերի մի մասը:

Յարկոմը ձեռք էր առնում բոլոր միջոցները, միւրպեսզի ճշնչի հեղափոխական ուժերը, ջլատի և ջախջախի այդ ահեղ շարժումը:

Ստեղծելով բոլոր պայմանները, միտից դիւնելով հարեան բարեկամական ժողովուրդներին, ցարական կառավարութիւնը միմյանց դեմ էր հրահրում նրանց և դիւտավորում էր հայ-թուրքական սարսափելի կոտորածը՝ 1905 թվին:

«Յարկոմի ազգային քաղաքականութիւնը,—գրում է ընկ. Լ. Բերեան, իր «Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան հաղթանակը» հոգւածի մեջ,—գաղութացման, ռուսացման քաղաքականութիւն էր, ստրկացված ժողովուրդներին անողորքաբար ճնշելու և շահագործելու քաղաքականութիւն»¹:

Ահա թե ցարական ինքնակալութեան ազգային նողկալի քաղաքականութեան մասին ինչ է ասված «Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացում»:

«Յարական Ռուսաստանը ժողովուրդների բանտն էր: Յարական Ռուսաստանի բազմաթիւ միջ-ռուս ժողովուրդները կատարելապէս իրավագուրկ ելին, շարունակ յենթարկւում ելին ամեն տեսակ անարգանքի և միտավորանքի: Յարական կառավարութիւնը ռուս բնակչութեանը սովորեցնում էր ազգային մարդերի բնիկ ազգութիւններին նայել միւրպէս ստոր ռասայի մրա, նրանց պաշտոնապէս անվանում էր «այլազգիներ», արհամարհանք և ատելութիւն էր դաստիարակում նրանց հանդեպ: Յարական կառավարութիւնը դիտակցաբար ազգային պառակտում էր հրահրում, մի ժողովուրդը գրգռում էր մյուսի դեմ, կազմակերպում էր հրեաների ջարդեր, հայ-թուրքական կոտորած՝ Անդրկովկասում»²:

Հայ-թուրքական կոտորածների ժամանակաշրջանում ցարիզմն ոգտագործում էր նաև բուրժուա-նացիոնալիստական կուսակցութիւններին: Յարական ինքնակալութեան հանձնարարութեամբ ու պահանջով դաշնակցութիւն կուսակցութիւնն Անդրկովկասի ժողովուրդներին հրահրում էր միմյանց դեմ, նա կատարում էր միտարքա Վորոնցով-Գալիովի և արյունախում Շիրինկինի յուրաքանչյուր պահանջը: Այս տեսակետից բնորոշ է

1 Տե'ս Յերևանի Պետաբխիւ, դ. № 118:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

1 Տե'ս «Правда», 25 փետրվարի 1936 թ.:

2 Տե'ս «Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթաց», էջ 7:

Վորոնցով-Դաշկովի հաղորդագրությունը մինևստր Վիտոեյին:

«Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս Բազմում, ինչպես և ամբողջ Կովկասում, բացառապես զբաղված է թուրքերի դեմ կռիվով»¹:

Դաշնակները ձգտում էին, Վոր ժողովուրդը «չտարվեր հեղափոխության», և այդ նպատակով ցարական ինքնակալության պահանջով այնպիսի գիծ էին վարում, Վոր ժողովուրդին զբաղեցնեյին «տեղական հարցերով»: Յարական ինքնակալության հանձնարարությունը դաշնակցությունն ի լուր բոլորի հայտարարում էր:

«Յեթե այսուհետև Վորեն մեկը համարձակվի խել գենը Անդրկովկասի հայ բնակչությունից, կամ ձեռքակալել նրան, նա անողորմաբար կլիցնչացվի»²:

Փաստերը ցույց են տալիս, թե ցարական ինքնակալությունն ինչպես էր բոլոր միջոցներն ոգտագործում Անդրկովկասի յեղբայրական ժողովուրդների միջև յերկարակալություն առաջացնելու համար: Թեկուզ այն փաստը, Վոր հայերին ու թուրքերին միմյանց դեմ զինելու համար Ղարաբաղում ծախսվել էր 3—3,5 միլիոն ռուբլի՝ Վոսկով, իսկ 2 միլիոն ռուբլի ել զենքի ուժով խլվել էր Զանգեզուրի չքավոր գյուղացիներից, — ասպարեցում է ցարական ինքնակալության ջարդարարական քաղաքականությունը:

Հայ-թուրքական կոտորածն Անդրկովկասում հսկայական անտեսական ու քաղաքական մնաս հասցրեց յեղբայրական ժողովուրդներին: Մոտավոր, Վոչ-լրվ տվյալները ցույց են տալիս, Վոր հայ-թուրքական կոտորածի հետևանքով ամայացան 286 գյուղ, Վորոնցից 128-ը հայ, և 158-ը թուրք բնակչությամբ: Տուժեցին 14·760 գյուղացիական ընտանիքներ, նրանցից 7·265-ը հայկական և 7·495-ը ադրբեջանական: Մեծ կորուստներ պատճառվեցին, Բազմին, Շուշուն, Գանձակին, Յերևանին, Հին Նախիջևանին, Ղազախին, Թիֆլիսին և այլ քաղաքներին ու գյուղերին:

Նկատի ունենալով ջարդի հետևանքները և աշխատավորության ծանր դրկանքները 1905 թվի հայ-թուրքական կոտորածի

¹ Դ. Դ. Ս. Օ. Օ. № 5, մաս 2-րդ, էջ 34, «Ռուսական կառավարության Կովկասյան ադմինիստրացիայի հրամանը»:

² Վրաստանի Պետարխիվ, Ժանդարմական վարչության դործ № 88, էջ 64:

հետևանքով, արյունարբու Շիրինկինը ներքին դործերի մինևստրի անունով ուղարկված զեկուցագրի մեջ գրում էր:

«Հեղափոխական շարժման ընթացքն ինչպես փոխաբայության սահմաններում, այնպես և Թիֆլիսում, Հիկարելի համարել ուժեղացած. ընդհակառակը, այն այժմ նկատելիորեն թուլացել է հայ-թուրքական ընդհարումների ազդեցության տակ, Վորոնք ուշադրությունը չեղեցին այլ կողմ»¹:

Ի պատասխան ցարական կառավարության դադանություններին, Վորն ազգային թշնամանք էր հրահրում, Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատը սոցիալ-դեմոկրատիայի զեկավարության էլ ալելի ուժեղացրեց պայքարն ընդդեմ ինքնակալության, ծավալեց հեղափոխական շարժումը և ամբապնդում էր բոլոր ազգերի բանվորների համերաշխությունը:

Բոլոր բանվորներին ուղղված իր կոչի մեջ Ռուս. սոցիալ-դեմ. բանվորական կուսակցության Կովկասյան Միությունը 1905 թվի փետրվարի 10-ին գրում էր:

«Վերջին չորս ուրվա ընթացքում Բազմի փողոցներում տեղի ունեցող խելահեղ դաժանությունները, դորքի և ադմինիստրացիայի վարմունքը, այն դադարը, Վոր սկսվեց անմիջապես՝ հենց Վոր միջամտեց նահանգապետը—այս բոլորն ակնբախ պարզությունը ասպարեցեց, Վոր ցարական Վոստրիկանությունը զխտակցաբար թուրքերին հրահրում էր հայերի դեմ, Վորպեսզի Բիշնելի, Գոմելի, Մոգելյովի և այլ քաղաքների որինակով փորձեր ազգային թշնամանք հրահրել, պառակտել ու թուլացնել պրոլետարիատի հեղափոխական հուժկու շարժումը: Բազմի արյունահեղ սպանդը Պետերբուրգի բանվորների վերջին ասպստամբության պատասխանն էր: Բայց Ռուսաստանի բոլոր ազգերի պրոլետարներն ինքնակալության այդ նոր մարտահրավերին կպատասխանեն հեղափոխական նոր հուժկու դրոհով, Վորը կտապալի ժողովուրդի արյունով հղիացած ատելի ցարական կառավարությունը: Իսկ մենք դործադուլ ենք անում, Վորպեսզի այժմ իսկ հայտարարենք այդ ցարական կառավարությանը և արտահայտենք բոլոր ազգերի բանվորների լիակատար համերաշխությունը:

Կորչի՛ անարդ ցարական ինքնակալությունը:

¹ Վրաստանի Պետարխիվ, գ. № 11, մաս 2-րդ բ., էջ 190:

Կեցցե՛հ համառուսական աստամբուլթյունը:

Կեցցե՛հ բանվորներին միջազգային միավորումը»¹:

Անդերկովկասի պրոլետարիատն ընկեր Ստալինի գլխավորութ-
յամբ, հայ-թուրքական կոտորածի փաստերի հիման վրա ան-
գուշ կերպով պարզաբանում էր աշխատավորներին ցարական ինք-
նակալության ազգային քաղաքականության վայրենի արարքնե-
րը: Պայքարելով ցարական ինքնակալության և բուրժուա-նա-
ցիոնալիստական կուսակցությունների դեմ, ամբողջ Անդերկով-
կասի աշխատավորներն է՛լ ավելի ելին համախմբվում ինտերնա-
ցիոնալիզմի դրոշի ներքո: Մերկացնելով Ֆեդերալիստներին,
գաշնակներին, ընկեր Ստալինը պրոլետարիատին առաջնորդում
էր դեպի նորանոր մարտեր: Ընկեր Ստալինն ասում էր, Վոր
պրոլետարիատի գլխավոր նպատակն է՝ հաղթանակը, իսկ դրա
համար ամենից առաջ անհրաժեշտ է.

«բոլոր բանվորներին միավորումը, առանց ազգի խտ-
րության»²:

Յարկովի դեմ մղվող պայքարում հաղթանակ տանելու պայ-
մաններից մեկն ընկեր Ստալինը համարում էր պրոլետարական
մարտական հեղափոխական ինտերնացիոնալիզմը: Ընկեր Ստալի-
նը կազմակերպեց և համախմբեց Անդերկովկասի աշխատավորնե-
րին՝ հայերին, վրացիներին, ադրբեջանցիներին, ռուսներին և
այլն, լիկվիդացիայի յենթարկեց ազգային միջնորդները: Ընկեր
Ստալինը բարձր էր պահում ինտերնացիոնալիզմի դրոշը: Ահա
թե՛ վ. Ի. Լենինն այդ առթիվ ինչ էր գրում Ա. Մ. Գորկուն.

«Մեզ մոտ, Կովկասում ս. - դ. վրացիները + հայերը
+ թուրքերը + ռուսներն աշխատում էին մի և նույն, միաս-
նակալ ս. - դ. կազմակերպության մեջ տաս տարազ ավելի:
Սա Ֆրադ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լու-
ծումը»³:

Հայ ժողովուրդը լավ յուրացնելով Ֆ. Ենդելսի այն ցուցու-
մի մեծագույն նշանակությունը, թե նա իր ազատագրումը կոս-
տանա միայն ցարական ինքնակալության տապալման ուրը, իր
բախտը ամուր կապեց ռուս ժողովրդի բախտի հետ: Յեվ յերբ
թերթում ենք հայ ժողովրդի անցյալի պատմության եջերը,

զգում ենք ռուս ժողովրդի, հեղափոխական պրոլետարիատի այն
հսկայական դերը, Վոր նրանք խաղացել են հայ ժողովրդի ազա-
տագրման գործում:

Ի՞նչ է ցույց տալիս հայ ժողովրդի պատմությունը: Բերենք
մի քանի օրինակներ:

Հայաստանը, դանդաղելով յերկրագնդի յերկու մայր ցամաք-
ների՝ Յևրոպայի և Ասիայի սահմանագլխին, անվերջ պատե-
րադմների ու արշավանքների ասպարեզ էր:

Հայաստանի մեկ նվաճողներին փոխարինում էին մյուսնե-
րը. մահ սփռելով անցնում էին հոները, պարսիկները, հոռ-
մայեցիները, արաբները, բյուզանդացիները, սելջուկները, մոն-
ղոլները, ոսմանները:

Ծանր և մղձավանջային է յեղել հայ ժողովրդի անցյալը:
«Հաղիվ էր ժողովուրդը կարողանում ուշքի գալ ամայացնող մեկ
փոթորկից, յերբ վրա յեր հասնում նոր փոթորիկ: Յեվ նորից
ամայանում էին գյուղերն ու քաղաքները, վռնչացվում էր
կուլտուրան, բնաջնջվում էին հայ աշխատավորները»: («Прав-
да»):

Պատմությունից հայտնի յե, Վոր ամեն անգամ, յերբ Հա-
յաստանում կոտորածներ էին տեղի ունենում, դրա դեմ «բո-
ղոքներ» էին լսվում Յևրոպայում, բանաձևեր էին ընդուն-
վում «բաղմաջարչար հայ ժողովրդի» մասին, ստեղծվում էին
կոմիտեներ, բայց դրությունը դրա հետևանքով մազաչափ ան-
դամ չէր փոխվում: Այլ կերպ լինել էլ չէր կարող:

Հայ ժողովուրդը միշտ բարձր է պահել իր ազատության
դրոշը և նա իր պայքարի հաջողությունն ասպանվեց միայն այն
ժամանակ, յերբ իր բախտը կապեց մեծ ռուս ժողովրդի հետ,
յերբ Լենինը և Ստալինն սկսեցին կազմակերպել նրա ազատա-
գրման գործը:

Պրոլետարիատի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի դե-
կավարությամբ 1905 թվին Ռուսաստանում և Անդերկովկասում
ծախալվեց ռուսական առաջին հեղափոխությունը, Վորին ակտիվ
մասնակցություն ունեցան Հայաստանի աշխատավորները:

1 Տե՛ս ՀԿ(Բ)Կ Կենտկոմին կից Կուսարխիվ, դ. № 1082, Յերևան:

2 Ի. Ստալին, «Սոցիալ-դեմոկրատիան իրանչպես և հասկանում ազգային
հարցը», «Պրոլետարիատիս բրձոլա» թերթ, 1904 թ.:

3 Վ. Լենին, Յերկեր, հատ. XVI, էջ 328:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ի

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՈՒ ՎՈԳԵՇՆՁՈՂ

I

Ռուսական առաջին հեղափոխութիւնը մի ամբողջ պատմական շրջան է ներկայացնում մեր յերկրի զարգացման մեջ:

«Հեղափոխութեան ընդամենը մի յերեք տարվա ընթացքում (1905—1907 թվականներին) բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը քաղաքական դաստիարակութեան աշխարհի հարուստ դպրոց են անցնում, վորպիսին չէին կարող անցնել սովորական խաղաղ զարգացման յերեսուն տարում»¹:

Դրա արդիւնքն է մեր յերկրի բազմամիլիոն ժողովրդի հերոսական պայքարը:

Ռուսական առաջին հեղափոխութիւնը հսկայական նշանակութիւն ունեցաւ հեղափոխական շարժման հետագա վերելքի և բանվոր դասակարգի պայքարի համար:

«Առանց 1905 թվի «գլխավոր փորձի», 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխութեան հաղթանակն անհնարին կլինէր»²:

Ռուսական առաջին հեղափոխութեան ժամանակաշրջանում լաշնորեն դրսևորվեց Ռուսաստանի բանվոր դասակարգի՝ պատմութեան մեջ չտեսնված ակտիվութիւնն ու ուժեղ պայքարը:

«Բուրժուական հեղափոխութիւնը Ռուսաստանում առաջին անգամ վրա քաշեց վո՛չ թէ լիբերալ բուրժուազիային, այլ հեղափոխական պրոլետարիատին, նրա շուրջը համախմբելով բազմամիլիոն գյուղացիութիւնը»³:

Պիտակից և քաղաքականապես ակտիվ բանվորները կազմակերպեցին և գլխավորում էին քաղաքի ու գյուղի բոլոր դեմոկրատական ուժերի հեղափոխական սրայեարն ընդդէմ ցարիզմի:

¹ Համկ(բ)ի պատմութեան համառոտ դասընթաց, էջ 126:

² Լենին, Յերկեր, հատ. XXV, էջ 176:

³ Ի. Ստալին, «Լենինի գմբ հարցերը», էջ 68:

Գյուղացիութիւնը, վորն ընկճված էր ճորտատիրութեան բաղ-
մաթիւ մնացուկների հետեանքով, տառացիորեն խեղդվում էր
սակավահողութիւնից: Աշխատավոր գյուղացիութիւնը տնքում
էր կալվածատերերի և կուլակների ստրկութեան տակ:

Ֆարական Ռուսաստանի ժողովուրդները տնքում էին կըրկ-
նակի ճնշման տակ—«իրենց սեփական» և ռուսական կալվածա-
տերերի ու կապիտալիստների:

Բացի դրանից, 1900—1903 թվականների տնտեսական ճգնա-
ժամն ու պատերազմն ե՛լ ավելի ուժեղացրին աշխատավորների
թշվառութիւնները: Ժողովրդի համբերութիւնը սպառվում էր:
Հեղափոխութեան համար ակնբախ էին ավելի քան բալականա-
չափ պատճառներ:

Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիների դրու-
թիւնը ծանր էր: Բանվորները տառապում էին կապիտալիս-
տական շահագործումից, իրավադրկութիւնից և տաժանակիր
աշխատանքից: 1904 թվին սկսվեց ռուս-յապոնական պատերազ-
մը, վորում 300—հազարանոց ռուսական զորքը կորցրեց 120 հա-
զար մարդ: Ֆարական կառավարութիւնը հույս ուներ, թե պա-
տերազմը նրան կոգնի ամբաղնդելու իր քաղաքական դիրքերը և
կասեցնելու հեղափոխութիւնը: Սակայն ցարական կառավարու-
թեան հաշիւները չարդարացան: Ռուս-յապոնական պատերազմի
հետեանքով ցարիզմն ե՛լ ավելի թուլացավ: Յարը ստիպված յե-
ղավ Յապոնիայի հետ կնքել ամթալի հաշտութիւն:

Աշխատավորութեան լայն մասսաներն զգում էին այդ պա-
տերազմի վնասակարութիւնը Ռուսաստանի համար:

Լենինը և բոլշևիկները գտնում էին, վոր «այդ թալանչիա-
կան պատերազմում ցարական կառավարութեան պարտվելն ող-
տակար է, վորովհետև կհասցնի ցարիզմի թուլացման և հեղա-
փոխութեան ուժեղացման»¹:

Յեւ իրոք, ռուս-յապոնական պատերազմն արագացրեց հե-
ղափոխութիւնը: Հեղափոխական շարժումն աճում էր:

Ռուսական առաջին հեղափոխութեան մեջ պատկառելի տեղ
է դրավում Բազլի բանվորների 1904 թվի դեկտեմբերյան դոր-
ծադուլը, վորը կազմակերպել և ղեկավարում էր բոլշևիկների
Բազլի կոմիտեն:

Բազլի բանվորների դեկտեմբերյան ընդհանուր դործադուլը
վերջացավ պրոլետարիատի հաղթութեամբ: Բանվորական շարժ-

ման պատմութեան մեջ առաջին անգամ Ռուսաստանում կրեկ-
տիվ պայմանագիր կնքվեց բանվորների և նավթարդյունաբերո-
ղների միջև:

Արդարացի կերպով նշվում է, վոր Բազլի դործադուլը հան-
դիսացավ հեղափոխական վերելքի սկիզբն Անդրկովկասում և
Ռուսաստանի մի շարք այլ շրջաններում:

«Բազլի դործադուլն,—ասում է ընկեր Ստալինը,—
աղղանշան ծառայեց ամբողջ Ռուսաստանի հունվար-իե-
տըրվարյան պանծալի յեղույթների համար»:

Հեղափոխական պայքարի ուժեղացման համար հսկայական
նշանակութիւն ունեցան 1905 թվի հունվարի 9-ի պատմական
դեպքերը, յերբ բանվորները վաղ առավոտյան դնում էին դեպի
Ձմեռային պալատը, իսկ ցար Նիկոլայը նրանց դիմավորեց ան-
բարյացակամութեամբ և հրամայեց կրակել անոն բանվորները
վրա:

«Այդ որը ցարական զորքերն սպանեցին հազարից
ավելի բանվոր,—ասված է Համկ(բ)ի պատմութեան հա-
մառոտ դասընթացի մեջ,—վիրավորեցին յերկու հազա-
րից ավելի: Պետերբուրգի փողոցները վողողվեցին բան-
վորների արյունով»¹:

Ի՞նչ նշանակութիւն ունեցավ 1905 թվի հունվարի 9-ը:
Ամենից առաջ, հունվարի 9-ն սկսեց կոչվել «արյունոտ կիրակի»,
և հենց այդ կապակցութեամբ էլ բանվորներն ստացան արյու-
նոտ դաս: «Այդ որը զնդակահարվեց բանվորների հավատը դեպի
ցարը»²:

Արդեն հունվարի 9-ի յերեկոյան փողոցներում սկսեցին
բարիկադներ կառուցել: Ամենուրեք բանվորները միահամուռ
կերպով հռչակում էին «Կորչի՛ ինքնակալութիւնը» լողունգը:

Հունվարի 9-ի նշանակութիւնն ե՛լ ավելի յե ուժեղանում
ներանով, վոր մեկ ամսվա ընթացքում դործադուլներին մասնակ-
ցութիւն ունեցան շատ ավելի մեծ թվով բանվորներ, քան թե
նախորդ տասնամյակի ընթացքում:

Յեւ այսպես, «Հեղափոխական մրրիկի սկիզբը հանդիսացան
1905 թ. հունվարի 9 (22)-ի դեպքերը Պետերբուրգում»³:

Տպագրիչների նշանավոր խոշոր դործադուլը Մոսկվայում

¹ Համկ(բ)ի պատմութեան համառոտ դասընթաց, էջ 78:

² Նույն տեղում, էջ 78:

³ Նույն տեղում, էջ 76:

¹ Համկ(բ)ի պատմութեան համառոտ դասընթաց, էջ 75:

1905 թ. սեպտեմբերի 19-ին, վրը տեղ միջանի որ և վերած-
վեց ընդհանուր քաղաքական դործադուլի, հունվարի 9 (22-ի)
դեպքերը Պետերբուրգում, Բազլի և Մոսկվայի դործադուլներն
սկիզբը հանդիսացան ցարական Ռուսաստանում քաղաքական նոր
դործադուլների ծավալման, վորոնք հետագայում վերածվեցին
խակական զինված ապստամբության:

Այնուհետև, դեկտեմբերյան զինված ապստամբությունը
Մոսկվայում ունեցավ խոշորագույն նշանակություն:

«1905 թվականի դեկտեմբերյան ապստամբությունը
հեղափոխության գագաթնակետն էր»¹:

Վերևում թվարկված բոլոր քաղաքական իրադարձություն-
ների աղբյուրության տակ, Լենինի—Ստալինի ղեկավարությամբ,
զինված պայքարի յեղան ցարիզմի դեմ Ռուսաստանի ճնշված ժո-
ղովուրդները:

Հայ ժողովուրդը Ռուսական պրոլետարիատի յեղբայրական
ոգնությամբ պայքարի դրոշ բարձրացրեց ընդդեմ ցարական ինք-
նակալության: Անդրկովկասում այդ պայքարն ընդունեց ե՛լ
ալիւլի սուր բնույթ, յերբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ
ՌՍԴԲԿ Կովկասյան Միության բոլշևիկյան IV կոնֆերենցիան
(1905 թ.) հանրադոմարի բերեց բոլշևիկյան կադմակերպու-
թյունների աշխատանքը ՌՍԴԲԿ III համադոմարի մարտական
վորոշումների կենսագործման ուղղությամբ: IV կոնֆերենցիան
որակարգի մեջ դրեց զինված ապստամբության նախապատրաստ-
ման և անցկացման անհրաժեշտությունը: Կոնֆերենցիան մեկ ան-
գամ ևս հաստատեց զինված ապստամբության վողջ անհրաժեշ-
տությունը, վորպես աշխատավորների ազատագրման միակ մի-
ջոց:

Այդ ժամանակաշրջանում Անդրկովկասի բոլշևիկյան կադմա-
կերպությունների հերոսական աշխատանքների և ընկեր Ստալինի
դերի մասին ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի մեջ
ասված է.

«Այդ ժամանակ ընկեր Ստալինը հեղափոխական հըս-
կայական աշխատանք էր կատարում Անդրկովկասում:
Ընկեր Ստալինը մերկացնում ու ջախջախում էր մենշևիկ-
ներին, վորպես հեղափոխության և զինված ապստամբու-
թյան հակառակորդներ: Նա բանվորներին հաստատակա-

ժորեն պատրաստում էր վճռական մարտի ինքնակալու-
թյան դեմ»²:

ՌՍԴԲԿ Կովկասյան Միությունն ընկեր Ստալինի գլխավորու-
թյամբ, վրը վճռականորեն պաշտպանում էր լենինյան ստրա-
տեգիան ու տակտիկան հեղափոխության մեջ, լենինյան գաղա-
փարը հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի մա-
սին, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիս-
տական հեղափոխության վերաճելու գաղափարը, — հեղափոխա-
կան մասսաներին կոչ էր անում զինված ապստամբության, կո-
չում էր ցարական ինքնակալության վրա դրոհելու:

1905 թ. հունվարին «Կովկասի բանվորներ, ժամանակն է
վրեժ լուծելու» վերնադրով կոչի մեջ, վոր գրել էր ընկեր
Մտալինը, ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն առաջ
քաշեց զինված ապստամբության անհրաժեշտությունը:

Ահա թե ինչ է ասվում այդ կոչի մեջ.

«Ռուսական հեղափոխությունն անխուսափելի յե, և
դա նույնպես անխուսափելի յե, ինչպես վոր անխուսափե-
լի յե արևածագը: Այդ հեղափոխության գլխավոր ուժն է
հանդիսանում քաղաքի և գյուղի պրոլետարիատը, իսկ
նրա դրոշակակիրն է սոցիալ-դեմոկրատական բանվորա-
կան կուսակցությունը, այլ վոչ թե դո՛ւք, սպարոն լիբե-
րալներ:

Յերբ ցարական ինքնակալությունը սատանլի, մեր
պարտականությունն է պատրաստվել վճռական դրոհելու»³:

Ցարական մանիֆեստի հրապարակման որը Թիֆլիսում տեղի
ունեցած միտինգում ընկեր Ստալինը բանվորներին ասում էր.

«Ի՞նչ է հարկավոր մեզ՝ իրոք հաղթելու համար: Դրա
համար յերեք բան է հարկավոր: Առաջին՝ սպառազինու-
թյուն, յերկրորդ՝ սպառազինություն, յերրորդ՝ դարձյալ
և դարձյալ սպառազինություն»³:

Զինված ապստամբություններն սկսեցին ծավալվել ամենու-
րեք: Բանվորներն ու գյուղացիները զինվում և վճռական պայքա-
րի ելին յենում ընդդեմ ցարական ինքնակալության:

«Միայն Մոսկվայում չէր, վոր ապստամբություն էր տեղի
ունեցել: Հեղափոխական ապստամբություններն ընդգրկել էին

1 ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 113:

2 ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 110:

3 Արիւլ, ֆ. № 158, 1905 թ., դ. № 1287, էջ 31:

3 ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 110:

նաև մի շարք այլ քաղաքներ ու շրջաններ: Զինված ապստամբու-
թյուններ յեղան Կրասնոյարսկում, Մոսովիլիսայում (Պերմ),
Նովոռոսիյսկում, Սոբոլովոյում, Սևաստոպոլում, Կրոնշտադ-
տում»¹:

Անդրկովկասի բոլոր շրջանները, ընկեր Ստալինի գլխավորու-
թյամբ, պաշտպանելով լենինյան հայացքները ուսումնական հեղա-
փոխության փայլուն հեռանկարների վերաբերմամբ, անողոքա-
բար մերկացնելով կադետների, մենչևիկների, եսերների, դաշ-
նակների, սպեցիֆիկների և ռեակցիոն այլ տարրերի հակահեղա-
փոխական գործունեությունը, լայնորեն տարածում ելին
մարքս-լենինյան ուսմունքը:

Մենք դիտենք, թե ինչպես ընկեր Ստալինն անդադար հող
էր տանում, վոր յուրաքանչյուր պրոկլամացիա գրված լիներ
լայն բանվորական մասսային հասկանալի լեզվով, պրոկլամա-
ցիան տպագրվեր պարզ ու դյուրընթեռնելի, վորպեսզի բանվորն
ու գյուղացին կարողանային այն ազատ կարդալ:

Հետաքրքրական է բերել հետևյալ փաստը.


«Ընկեր Ստալինը նստեց սեղանի մոտ և գրում է
պրոկլամացիան: Նա հակիրճ, բոցավառ խոսքերով նկա-
րագրեց դեմոնստրացիան, ցարական դահլիճների դադա-
նությունները, պատմեց բանվորական շարժման խնդիրնե-
րի մասին: Պրոկլամացիան վերջանում է հետևյալ բոցո-
վառ կոչով՝ շարունակել պայքարն ընդդեմ կապիտալիզմի
և ինքնակալության: Դժվար էր առանց հուզմունքի կար-
գալ այդ հակիրճ ու շեշտակի տողերը, վորոնց մեջ ընկեր
Ստալինը ներդրել էր այնքա՛ն մեծ յեռանդ, ցասում և
համոզմունք ուժ: Պրոկլամացիան անմիջապես շարվեց:
Ընկեր Ստալինը, ինչպես միշտ, անձամբ և ուշադիր կար-
գում էր սրբագրությունը»:

Ստալինյան այդ ուժը բանվորներին և գյուղացիներին լցնում
էր ցասումով ու ատելությամբ ընդդեմ կեղեքիչների, այն բաց
արեց նրանց աչքերը, ցույց տվեց կալվածատերերի, կապիտա-
լիստների ու ցարական դահլիճների ճնշումից ազատագրվելու
ուղին:

Բոլշևիկյան պրոկլամացիաները ձեռքից-ձեռք անցնելով,
հասնում էին բանվորներին և գյուղացիներին:

Ստալինյան այդ մարտական պրոկլամացիաների ազդեցու-

¹ Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթաց, էջ 112:



Թյան տակ Ալավերդու, Ղափանի և այլ շրջանների բանվորները, բոլշևիկյան բժիշկների ղեկավարութամբ, ուսումնական առաջին հեղափոխության տարիներին գործադուլային շարժում ծավալեցին, իսկ Սեփարի, Հաղպատի և այլ գյուղերի գյուղացիներն սկսեցին գրավել կալվածատիրական հողերը:

Հայաստանում հենց նոր ստեղծված սոցիալ-դեմոկրատական բժիշկներն ընկեր Ստալինի, Սպանդարյանի, Շահումյանի, Զափարիձեյի և շատ այլ բոլշևիկների ղեկավարութամբ սկսեցին ուշադիր ուսումնասիրել և լայնորեն տարածել մարքսիզմի ուսմունքը:

Իր հողվածների տակ շատ հաճախ ընկեր Ստալինը դնում էր Կորա, Բեսոշվիլի, Կ. Ստ. և այլ ստորագրություններ:

Անդրկովկասի և Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները լայնորեն ծանոթանում էին աղբարային հարցի վերաբերյալ ընկեր Ստալինի՝ «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածի և նրա այլ աշխատությունների հետ, վորոնց մեջ նա ամենայն մեծականութամբ պաշտպանում էր հեղափոխության լենինյան գաղափարը և մասսաներին սրայքարի յեր կազմակերպում ընդդեմ ցարական ինքնակալության:

Այդ ժամանակ հայերեն լեզվով տարագրվեցին ընկեր Լենինի «Յերրորդ համագումարը», «Ժամանակավոր հեղափոխական կառավարությունը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածները և այլ հոդվածներ ու բրոշյուրներ:

ՌՍԴԲԿ բժիշկները Լոռիում, Շամշադինում, Քարվանսարայում, Յերևանում, բանվորները և գյուղացիները՝ մասսայական մասշտաբով, չնայած ցարական ինքնակալության հետապնդումներին ու հալածանքներին, վորդեորութամբ ուսումնասիրում էին ընկեր Ստալինի աշխատությունները—«Անկախականների կուսակցությունը և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները» (1906 թ.), «Դասակարգերի սրայքարը» (1906 թ.), «Ընթացիկ մոմենտը և բանվորական կուսակցության միացուցիչ համագումարը» (1906 թ.), «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության լոնդոնյան համագումարը», «Անցողակի կուսակցական տարաձայնությունների մասին» (1905 թ.) և այլն:

Հատկապես պետք է նշել այն փաստը, վոր ընկեր Ստալինի «Անցողակի կուսակցական տարաձայնությունների մասին» բրոշյուրը հրատարակվեց 1905 թվին ուսերեն, վրացերեն ու հայերեն լեզուներով և տարածվեց Անդրկովկասի համարյա բոլոր շրջաններում:

Ընկեր Ստալինի այդ բրոշյուրը հայերեն լեզվով լույս ընծայվեց ավելի քան 5000 օրինակ:

1904 թ. սկսած Ստ. Շահումյանը՝ Ձայալողլում, իսկ 1906 թ. Ս. Սպանդարյանը՝ Գանձակում (ներկայումս Կիրովաբադ) և Բորչալվում պարսպում ելին կադմակերպված սոցիալ-դեմոկրատական խմբակների հետ: Այդ խմբակներում Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը բանվորներին ծանոթացնում էին Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքի հետ:

Ս. Սպանդարյանը Գանձակում և Շամշադինի շրջանի մի շարք վայրերում հատուկ ղեկավարում տվեց Լենինի «Գյուղական չքավորությանը» աշխատության մասին:

«Նոր խոսք» թերթը գրում է, թե Սուրեն Սպանդարյանը, խոսելով Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքի մասին, ներկա գտնվողներին պարզաբանեց Լենինի այն միտքը, Վոր «ցարական ինքնակալությունը վտարիկանական ինքնակալություն է»:

Ժողովների մասնակիցների հետ իր ունեցած զրույցների պահին և առհասարակ Գանձակում սոցիալ-դեմոկրատական խմբակների անդամների հետ անցկացրած պարապմունքների ժամանակ Ս. Սպանդարյանը կոչ էր անում փողոց դուրս գալիս իրենց գրոշները վրա գրել. «Կորչի՛ ինքնակալությունը», «Կեցցե՛ր քաղաքական ազատությունը»:

«Պրոլետարիատի կոլով» թերթում հայերեն լեզվով տպագրված է ընկեր Ստալինի՝ «Ձինված ապստամբությունը և մեր տակտիկան» հոդվածը, վորի մեջ նա անսահման պարզությունով գրում է պրոլետարիատի խնդիրներն առաջիկա հեղափոխության մեջ:

«Վորպեսզի պրոլետարիատը, —ասում է ընկեր Ստալինը,—կարողանա գալիք հեղափոխությունն ոգտադործել իր դասակարգային պայքարի շահերի ոգտին՝ այնպիսի դեմոկրատական կարգերի հասնելու համար, վորոնք ապահովեն նրա հետագա հաջող պայքարը հանուն սոցիալիզմի, նա պետք է դառնա վոչ միայն մի միջուկ, վորի շուրջը համախմբվում է ոպողիցիան, այլև ապստամբության առաջնորդ ու ղեկավար: Հենց համառուսական ապստամբության տեխնիկական կադմակերպում և ղեկավարում—ահա՛ այն նոր խնդիրը, վոր իրադարձությունները դնում են պրոլետարիատի առջև, և յեթե մեր կուսակցությունն ուղում է լինել բանվոր դասակարգի իսկական քաղաքական

ղեկավարը, նա չի կարող և չպետք է իր վրայից վերցնի այդ պարտականությունը...

Ապստամբության այսպիսի բազմակողմանի ծախսապատաստությունը միայն կարող է սոցիալ-դեմոկրատայի համար ապահովել նրա ղեկավար դերը ժողովրդի մոտակա պայքարում ընդդեմ ինքնակալության:

Ի հակադիմ «պոչականներին», կադմակերպված պրոլետարիատն իր բոլոր ուժերը կոգտադործի, վորպեսզի իր ձեռքում պահի ապստամբության թե՛ տեխնիկական, թե՛ քաղաքական ղեկավարությունը և այդ անհրաժեշտ պայմանն ոգտադործի առաջիկա հեղափոխության մեջ՝ հուղում իր դասակարգային պայքարի շահերի»:

«Ի՞նչ պարզվեց» վերնագրով կոչի մեջ, վորը գրվել է 1905 թվի մարտի 26-ին, տպագրվել է հայերեն լեզվով ավելի քան 5 հազար օրինակ և տարածվել է Հայաստանի գանազան շրջաններում, ընկեր Ստալինը գրում է.

«Պրոլետարիատը—ահա՛ այն կորիզը, վորն իք շուրջը կհամախմբի բոլոր նրանց, ովքեր դժգոհ են ներկայիս կարգերից, և նրանց գրոհի կտանի ցարիզմի դեմ: Վերհիշեցեք վերջին ամիսների փաստերը, տեսեք, թե ինչպիսի ակնածություններ են նայում պրոլետարիատին Հարավային Ռուսաստանի, Պոլովյայի, Գուրիայի, Մինգրելիայի, Իմերեթիայի, Քարթլիայի, Կախեթիայի, Կիզիկի հուղված դյուղացիները, լսեցեք, թե ինչպիսի կլանվածություններ նրանք կրկնում են պրոլետարիատի լողունները—«Կորչի՛ ցարական կառավարությունը, Կեցցե՛ր ժողովրդական կառավարությունը», և դուք կհասկանաք, վոր հեղափոխության դրոշակակիրը, նրա հիմնական կորիզը հանդիսանում է հենց պրոլետարիատը»:

Ընկեր Ստալինի այս կոչին բանվորները և դյուղացիներն արձագանգեցին կոնկրետ դործերով: Ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով և նրա ղեկավարությամբ Ալավերդում, Ղախանում, Ալեքսանդրապոլում, Յերևանում և այլ տեղերում կադմակերպվեցին դործադուլներ, վորոնք անցան քաղաքական բարձր կադմակերպվածության նշանաբանի տակ և հսկայական նշանակություն ունեցան Անդրկովկասի հեղափոխական շարժման մեջ:

Ընկեր Ստալինի պահանջով և ցուցումով ՌՄԴԲԿ Բագրի բողոքական կադմակերպությունն իր լավագույն անդամներից շատերին հեղափոխական աշխատանքի ուղարկեց դյուղերը: Բագրից

և Թիֆլիսից Հայաստան ուղարկվեցին մոտավորապես 35 ազիտա-
տորներ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում (Լոռիում,
Շամշադինում) եյին գտնվում ընկերներ Ա. Զափարիձեն,
Ս. Սպանդարյանը, Ստ. Շահումյանը և Խանլարը: Նրանք տե-
ղական աշխատողներին տալիս եյին ստալինյան արժեքավոր խոր-
հուրդներ և ցուցումներ, կազմակերպում եյին բանվորների և
գյուղացիների պայքարն ընդդեմ ցարական ինքնակալության:

Ստալինյան խոսքերի ու տողերի անմիջական ազդեցության
տակ, ամենորոյա պրոպագանդիստական աշխատանքի շնորհիվ,
Հայաստանի բանվորների և գյուղացիների համար պարզ դար-
ձավ, Վոր իրենք պետք է ցարիզմի և նրա տեղական որդանների
դեմ պայքարի յեղենն միայն բոլշևիկների ղեկավարությամբ և
միայն այդ ճանապարհով կարող են ազատություն ձեռք բերել:

1904—1907 թ. թ. ժամանակաշրջանում ընկեր Ստալինը, ղե-
կավարելով Անդրկովկասի բոլշևիկներին, կատարում է տեսական
ու կազմակերպական հսկայական աշխատանք: Ընկեր Ստալինի
այդ աշխատանքն սկսվեց Բադվում, Թիֆլիսում և Բաթումում:

Լենինյան-ստալինյան հեղափոխական ուսմունքը Հայաստա-
նում տարածելու ուղիներ չատ կային:

Լենինյան-ստալինյան ուսմունքն Արարատյան դաշտում տա-
րածելու համար, հիանալի ուղիներ դարձան Բորչալուն, Լոռին
և Ղազախը, Վորոնք գտնվում եյին Թիֆլիսին, Բադվին, Բաթու-
մին—Անդրկովկասի այդ հեղափոխական կենտրոններին մոտիկ և
անմիջական հաղորդակցություն ունեյին նրանց հետ:

1902—1906 թ. թ. ժամանակաշրջանում քաղաքական գործա-
դուններով ընդգրկված եր ամբողջ Անդրկովկասը: Այդ վոչ թե
տարերային շարժում եր, այլ պրոլետարիատի և աշխատավոր
գյուղացիության շարժում, Վորը կազմակերպված եր և ղեկա-
վարվում եր բոլշևիկյան կուսակցության կողմից: Մեր կուսակ-
ցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ կարողացավ աճող
գյուղացիների հեղափոխական ըմբոստությունները կապել բան-
վորական հեղափոխական հուժկու շարժման հետ: Սկսվելով յեր-
կաթուղային արհեստանոցներում և Փարբիկա-գործարանային
ձեռնարկություններում, հեղափոխական պայքարն արագորեն
համակեց նաև գյուղը:

Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները տե-
ղակ եյին այն հեղափոխական իրադարձություններին, Վորոնք

տեղի եյին ունենում Ռուսաստանի հեռավոր մարզերում, Գու-
բիայում և այլ տեղերում:

Նրանք գիտեյին, Վոր ամբողջ յերկիրը պատրաստ է հեղա-
փոխության համար:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, յեղբայրական
մյուս ժողովուրդների հետ միասին, Անդրկովկասի բոլշևիկների
ղեկավարությամբ, ծանոթանում եյին Ռուսաստանում տեղի
ունեցող հեղափոխական իրադարձություններին: Նրանք գիտե-
յին, Վոր բոլշևիկների ղեկավարությամբ, ընկերներ Լենինի և
Ստալինի գլխավորությամբ,

«Ռուսաստանի զանազան քաղաքներում բանվորները
հավաքում եյին բազմահազար մարդկանց միտինգների և
Վորոչում եյին աշխատանքը դադարեցնել: Գործադուլն
ընդգրկում եր Փարբիկա Փարբիկայի հետևից, գործարան
գործարանի հետևից, քաղաք քաղաքի հետևից, ռայոն
ռայոնի հետևից»¹:

Այդ լուրջ պահին Անդրկովկասի մի շարք քաղաքներում և
գյուղերում աշխատավոր մասսաները միասնական ավյունով հան-
գես յեկան ինքնակալության դեմ:

Ընկեր Ստալինն անձամբ կազմակերպում և ղեկավարում եր
Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարն ընդդեմ
ինքնակալության:

Հայ բանվորներին և գյուղացիներին ուղղված կոչի մեջ,
Վոր բաց եր թողել ՌՄԴԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն
ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ ու մասնակցու-
թյամբ, ասվում է.

«Բանվոր և գյուղացի յեղբայրներ: Մենք դիմում ենք
ձեզ: Որը-որին գործարաններում ու Փարբիկաներում և
խուլ գյուղերում մեզ բոլորիս կողոպտում ու ճնշում են գոր-
ծարանատերերն ու կալվածատերերը: Ցարական կառավա-
րությունը մեզ վրա դրել է անհամար տուրքեր ու հար-
կեր. նա մեզանից քամում է այն, ինչ Վոր չեն կարողացել
քամել գործարանատերերն ու կալվածատերերը: Ցարն
ամեն կերպ ձգտում է մեզ պահել տղիտության մեջ, Վոր-
պեսդի մենք խոհեմությամբ կրենք մեր ստրկությունը:
1897 թվին նա մեզանից խլեց դպրոցները, գրադարանները
և կուսավորական այլ հիմնարկները: Այժմ մեզանից խլում

¹ Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթաց, էջ 104:

են տնտրինութիւնը յեկեղեցական դուռքի նկատմամբ...

Բաւական չէ՞ արդո՞ք այդ բոլորը: Դուք վոչ մի տեղ չեք կարող դնել վոչ դատ, վոչ պաշտպանութիւն: Միայն պայքարով, անդուշ, անձնագոհ պայքարով բան-վորներն ու գյուղացիները կթեթեացնեն իրենց ծանր վիճակը: Ուրեմն, շուտով յեկե՛ք պայքարի: Կազմակերպվե-ցե՛ք ձեր մեջ, միացե՛ք կազմակերպված բանվոր և գյուղացի սոցիալ-դեմոկրատներին: Սոցիալ-դեմոկրատներին կարմիր դրոշի տակ այժմ ամբողջ Ռուսաստանում միա-վորվում են բոլոր աղքետի բանվորներն ու գյուղացիները: Գիտակից առաջավոր մարդիկ՝ ռուսները, լեհերը, հրեա-ները, ֆինլանդացիները, վրացիները, հայերը—բոլորը հասկացել են, վոր միայն ընդհանուր ուժերով բանվոր դասակարգը կարող է, վերջապես, իր ուսերից թոթափել ցարին, կալվածատերերին ու դործարանատերերին ամբարշտի լուծը: Ուրեմն, շտապեցե՛ք դուք ևս, չկազմակերպված հայեր, մտնել պրոլետարիատի մեծ բանակի շարքերը: Ինչպես յեղբայրներ, մենք բոլորս միասին վոտքի կկանդ-նենք, և թշնամին սարսափելի չի լինի մեզ համար: Մենք կտապալենք ցարին ու նրա ատելի չինովնիկներին: Մենք կպայքարենք հանուն դեմոկրատական հանրապետութեան, այսինքն՝ հանուն պետական այնպիսի կառուցվածքի, վորտեղ բոլոր դործերը կկառավարեն ամբողջ ժողովրդի կողմից ընտրված մարդիկ: Այն ժամանակ որենքները կհրատարակեն և հարկերը կսահմանեն մեր այդ ընտրյալ-ները, այլ վոչ թե մի բոլո չինովնիկներ. այն ժամանակ կլինի դավանանքի, խոսքի, մամուլի, ժողովների, դործա-դուլների, միութիւնների ազատութիւն. այն ժամանակ չինովնիկները պատժի յերկշուղի տակ չեն համարձակվի վիրավորել ու նեղացնել քաղաքացիներին: Մի խոսքով, այն ժամանակ մեզանում կլինի քաղաքական ազատու-թիւն:

Մենք կտապալենք կապիտալիստների (կալվածատե-րերի ու դործարանատերերի) լուծը: Մենք կպայքարենք հանուն սոցիալիզմի, այսինքն՝ հանուն այն բանի, վոր հողը, դործարաններն ու ֆաբրիկաները պատկանեն իրենց իսկ՝ աշխատավորներին, այն ժամանակ չեն լինի հա-րուստներ և աղքատներ: Այն ժամանակ կսկսվի աշխա-տանքի ազատ թափափորութիւնը:

Կորչի՛ ինքնակալութիւնը:

Կեցցե՛ դեմոկրատական հանրապետութիւնը:

Կորչի՛ կապիտալիզմը:

Կեցցե՛ սոցիալիզմը¹:

Ռուսական առաջին հեղափոխութեան շրջանում ընկեր Սաա-լինը բացառիկ ուշադրութիւն էր նվիրում Բորչալի, Ալաւեր-դու և այլ շրջանների սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-թիւններին աշխատանքին:

Ընկեր Սաալինը որը-որին հսկայական ուշադրութեամբ հե-տևում, ողնում և կոնկրետ կերպով ղեկավարում էր Ալաւերդու բանվորներին պայքարը:

Ընկեր Սաալինի պահանջով և անմիջական ցուցումներով Ս. Սպանդարյանը, Ստ. Շահումյանը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպութիւնների շատ այլ ակառավոր անդամներ լինում էին Ալաւերդում, Սանահում, Բորչալիում և այլ շրջանե-րում:

1904 թվի վերջին ընկեր Սաալինը դնում էր Բադ-վում և աշխատանք էր կատարում կուսակցութեան յեր-բորդ համագումարի հրավիրման ոգտին պայքարն ուժեղաց-նելու, նաև, ինչպես ասում է ընկ. Լ. Պ. Բերիան, մենչևիկների գեմ ու, մասնավորապես, այն ժամանակ Բադվում դնում մեն-չևիկներին ԿԿ-ի ներկայացուցիչ Գլեբովի (Նոսկովի) գեմ պայ-քարն ուժեղացնելու ուղղութեամբ:

Յերբ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպութիւններն ընկեր Սաալինի ղեկավարութեամբ նախապատրաստական աշխա-տանք ծավալեցին կուսակցութեան III համագումարի հրավիրման ուղղութեամբ, այդ ժամանակ Հայաստանում իրենց հակահեղա-փոխական աշխատանքն աշխուժացրին դաշնակները, սպեցիֆիկ-ները, վորոնք հոգևորականութեան հետ միասին ակտիվ պայ-քար էին մղում հեղափոխութեան դեմ, վործելով խեղդել բան-վորներին և գյուղացիներին հեղափոխական տրամադրութիւն-ները:

Հայաստանում սոց.-դեմ. կազմակերպութիւններն ամրա-պնդելու համար, ինչպես նաև դաշնակներին, մենչևիկներին ու սպեցիֆիկներին դեմ պայքարն ուժեղացնելու համար ընկեր Սաա-լինը հսկայական ոգնութիւն է ցույց տալիս և որը-որին ղեկա-վարում է Հայաստանի հեղափոխական շարժումը:

1 ՏՆՍ ՀԿ(Բ)Կ Կենտկոմին կից Կուսարխիվ, դ. № 1082:

Ընկեր Ստալինի պահանջով ՌՄԴԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն Հայաստան ե ուղարկում պրոպագանդիստական ուժեր:

Ընկեր Սուրեն Սպանդարյանը հետագայում լինելով Հայաստանի մի շարք շրջաններում՝ կենսադործում ե ընկեր Ստալինի ցուցումները:

Բոլշևիկյան կադմակերպություն Անդրկովկասում միակ հեղափոխական պրոլետարական կադմակերպությունն եր, վորն ընկեր Ստալինի ղեկավարությամբ կադմակերպում եր հեղափոխությունն ամբողջ Անդրկովկասում:

Հեղափոխության սկզբից հենց բոլշևիկները պաշտպանում ե անց ելին կացնում հեղափոխության, լենինյան տակափկան ու ստրատեգիան:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ բոլշևիկները կադմակերպում ե դիմադրում ելին բանվորների ու դյուղացիների զինված ապստամբությունը: Նրանք պայքարում ելին պրոլետարիատի հաղթանակի համար, սրբոլետարիատի ե դյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հաստատման համար:

Լենինյան այդ պլանն իրագործելու համար 1905 թվի հունվարին Կովկասյան Միութենական Կոմիտեն ընկեր Ստալինի գլխավորությամբ պնդում եր ինքնակալության դեմ զինված գրոհի անցնելու անհետաձգելի անհրաժեշտությունը:

Կովկասյան Միութենական Կոմիտեն բանվորներին ե դյուղացիներին, կադմակերպում ե զինված ապստամբության:

Ընկեր Ստալինը լարված ուշադրությամբ հետևում ե ղեկավարում ե հեղափոխական շարժումը Հայաստանի բոլոր նույնիսկ ամենահեռավոր շրջաններում:

Յերբ հեղափոխության բոցը բռնկվեց ամբողջ Ռուսաստանում, յերբ բոլշևիկները ղեկավարությամբ մասսաները գրոհի յեղան զարական ինքնակալության դեմ, ընկեր Ստալինը հատուկ հոգատարությամբ հանձնարարեց իր մարտական զինակից Սուրեն Սպանդարյանին՝ բացատրել հայ ժողովրդին հեղափոխության փեճակը, ե՛լ ավելի մեծ թվով պրոպագանդիստներ ու ադիուտանտներ, բոլշևիկյան թերթեր ե ժուռնալներ ուղարկել Հայաստան, նրա ամենահեռավոր անկյունները, հետամնաց դյուղերը:

Ընկեր Ստալինը, հանդես գալով բոլշևիկյան մամուլի եջերում, հայ ժողովրդին, բանվորներին ե դյուղացիներին զինված ապստամբության կոչ եր անում: Ընկեր Ստալինը Հայաստանի

բանվորներին ե դյուղացիներին ղեմեց մի շարք կոչերով ու պրոկլամացիաներով:

Ստալինյան խոսքը կայծակի արագությամբ տարածվում եր Անդրկովկասի ե Հայաստանի բոլոր դյուղերում ու քաղաքներում:

Սուրեն Սպանդարյանը բացատրում եր, վոր «հեղափոխությունն ալիքը բարձրանում ե, կյանքը յեռում ե ե հետզհետե ավելի ու ավելի յեն խտանում հեղափոխության ուժերը»: («Կայծ», № 20):

Կովկասյան Միութենական Կոմիտեն բանվորներին ու դյուղացիներին անդուլ կերպով բացատրում եր հեղափոխության խնդիրները:

Բանվորներին ուղղված իր կոչի մեջ Կովկասյան Միութենական Կոմիտեն գրում ե.

«Տասլանցե՛ք ցարական դոման, ստեղծեցե՛ք ժողովրդական հիմնադիր ժողով—ահա՛ թե ինչ են ասում այսօր Ռուսաստանի պրոլետարները:

Յել ահա, Ռուսաստանում ավելի ու ավելի ուժգին ե լավում բանվորների հեղափոխական կոչը—կորչի՛ պետական դոման, կեցցե՛ հիմնադիր ժողովը... Ահա, թե ուր ե ձգտում Ռուսաստանի պրոլետարիատն այսօր... Միայն կեղեքիչների վոսկրների վրա հնարավոր ե ստեղծել ժողովրդի աղատությունը, միայն այն ժամանակ, յերբ զինված ժողովուրդը կդնա պրոլետարիատի հետևից ե կբարձրացնի ապստամբության ընդհանուր դրոշը, միայն այդ ժամանակ ե հնարավոր տապալել ցարական կառավարությունը, վորը պահպանվում ե սվինի ուժի վրա...»

Ցարական ինքնակալությունը փակում ե ժողովրդական հեղափոխության ուղին: Նա փորձում ե յերեկվա մանիֆեստով կասեցնել այդ մեծ շարժումը—պարզ ե, վոր հեղափոխության ալիքները կկլանեն ե հեռու կշարտեն ցարական ինքնակալությունը¹:

Լենինյան-ստալինյան այս վառ դադափարներով ելին համակված Հայաստանի բանվորներն ու դյուղացիները:

Բանվորների ե աշխատավորների ամենալայն մասսաները քննարկում ելին բոլշևիկյան այդ կադմակերպող, վոգեչնչող, աղատության համար պայքարի կանչող բոլշևիկյան կոչերը:

1 Տե՛ս «Բոլոր բանվորներին» կոչը, 1905 թ.:

Անդրկովկասի արդյունաբերական շատ շրջաններում կազմակերպվեցին գործադուլներ:

1905 թվի աշնանը Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա յերկաթուղային մի շարք գծամասերում բանվորները միահամուռ կերպով գաղարկեցին աշխատանքը: Հայտարարվեց խոշոր գործադուլ, վորը շարունակվեց մի քանի օր: Թիֆլիս—Յերևան—Ալեքսանդրապոլ—Ղարս գծամասում մեկ շաբաթից ավելի դադարեցվեց գնացքների յերթևեկութունը:

Բանվորներն առաջադրում են քաղաքական պահանջներ, վորոնք մեծ հետաքրքրութուն եյին ներկայացնում հեղափոխության տեսակետից:

Իրենց մարտական կոչում յերկաթուղայիններն առաջադրում եյին հետևյալ պահանջները.

«Պալետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԸՆԿԵՐՆԵՐ

Մենք, Ալեքսանդրապոլ կայարանի դեպոյի բանվորներս, միանալով Ռուսաստանի յերկաթուղիների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, վոր հարել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր վորոշմանը՝ աշխատանքը չվերսկսել այնքան ժամանակ, մինչև վոր չբավարարվեն ներքոհիշյալ պահանջները, վորոնք հանդիսանում են Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության յերաշխիքը, այն ե.

1) Հիմնադիր ժողովի հրավերում, վորն ընտրված լինի ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ: Այդ ժողովն անհրաժեշտ ե ամբողջ ժողովըրդին նրա համար, վորպեսզի բոլոր որենքները համապատասխանեն ժողովրդի իսկական կարիքներին և վորպեսզի որենքները կազմեն վոչ թե ազնվականներն ու գործարանատերերը, այլ ամբողջ ժողովուրդը:

2) Ընտրական իրավունք տալ յերկու սեռի՝ 20 տարեկանին հասած բոլոր հպատակներին:

3) Ազատել բոլոր նրանց, ովքեր մինչև այժմ տուժել են քաղաքական ու կրոնական հայացքների համար, քանի վոր այդ մարդիկ վոչ թե ներքին թշնամիներ են, այլ ժողովրդի իսկական բարեկամներ:

4) Անխտիր բոլոր աղգերի ու դատարանի հավասարութուն որենքի առջև, այսինքն՝ վորպեսզի բոլորը դատարան

վեն յերդվյալների դատարանով, չբացառելով նաև պետական ծառայության մեջ գտնվողներին:

5) Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և դավանանքի ազատություն:

6) Մահապատժի վերացում:

7) Մշտական կանոնավոր դորքի վերացում և նրա փոխարինումը ժողովրդական միլիցիայով, առանց դատերի խտրության, այսինքն՝ վորպեսզի չպահվի վոչինչ չանող մարդկանց 2-միլիոնանոց բանակ, վորը մի ավելորդ բեռ ե ժողովրդի համար, իսկ այլ պետության հարձակման դեպքում պաշտպանվել ամբողջ ժողովրդի ուժերով:

8) Ամբողջ բնակչության պարտադիր կրթություն պետության հաշվին:

9) Ռադմական դրության, ուժեղ պահպանության և եկզեկուցիաների վերացում ամբողջ Ռուսաստանում:

10) Անձնագրային սխտեմի վերացում:

11) Տ-ժամյա աշխատանքային օր, իսկ մեքենավարների, կոնդուկտորների և նրանց նման ծառայողների համար շաբաթական աշխատանքային ժամերի մաքսիմումի սահմանում:

12) Խստորեն վորոշակի աշխատավարձի սահմանում և ամեն տեսակի վերատալին պրեմիաների վերացում:

13) Յերեկոյան աշխատանքների վերացում, սակայն այն հաշվով, վոր ամսական աշխատավարձը չպակասի, և որավարձի ավելացում:

14) Հոգ տանել հաշմանդամության դեպքում և ծերության ժամանակ բոլոր ծառայողների ապահովման մասին:

15) Բոլոր ծառայողների համար սահմանված աշխատավարձը չպետք ե փոփոխվի վարչության քմահաճույքով, այլ միայն ծառայողների կողմից ընտրվածների մասնակցությամբ:

16) Այն պահանջների բավարարում, վոր ծառայողները հայտարարել են նախորդ գործադուլների ժամանակ¹:

Յերկաթուղայինների այս խոշոր գործադուլը հանդիսանում

¹ Տե՛ս ՀԿ(Բ)Կ Կենտկոմին կից Կուլտբիմի, «ՌՄԴԻԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության նյութեր», 10 հոկտեմբերի 1905 թ.:

էր (ինչպէս իրենք էյին ասում իրենց կոչի մեջ) Անդր-կովկասի և Ռուսաստանի յերկաթուղայինների ընդհանուր գործադուլի շարունակութիւնը:

Յարական ինքնակալութեան տեղական ուղեւորներն սկսեցին յերկաթուղայիններին յենթարկել դաժան հետապնդումներէ, վայրենի հալածանքներէ, բռնութիւններէ և աքսորի:

Ահա թե՛ Ալեքսանդրապոլ կայարանի յերկաթուղային բանվորների գործադուլի մասին ժանդարմական վոստիկանական վարչութեան Ալեքսանդրապոլի բաժանմունքի պետն ինչ էր գրում ժանդարմներէ շեֆի անունով ուղարկված իր գեկուցագրի մեջ.

«...Անդրկովկասի յերկաթուղայիններէ Ալեքսանդրապոլ կայարանի քարշի սպասարկութեան բոլոր ծառայողները, այսինքն՝ շոգեքարշային անձնակազմը, դեսպոյի վարպետներն ու բանվորները խոսքները մեկ անելով, հրաժարվեցին ծառայութեանից, սահանջելով բարեկամել իրենց կենցաղը, ցրվեցին քաղաքում իրենց տները, վորտեղ ժողովներ են կազմակերպում խորհրդակցութեան համար, հայտարարելով, թե՛ չեն վերսկսի աշխատանքն այնքան ժամանակ, մինչև վոր չբավարարվեն իրենց սահանջները:

Թիֆլիս—Յերևան և Ալեքսանդրապոլ—Ղարս գծերում դադարել է բոլոր գնացքների յերթեկութիւնը, վորոնք ուղարկվում են միայն պատահաբար, այն դեպքում, յետ մեքենավարների մեջ գտնվում է այնպիսի մեկը, վորը համաձայնվում է ուղևորվել գնացքի հետ. այսպէս, որինակ, այսօր Թիֆլիսից Յերևան ուղևորվեց № 75 փոստատար գնացքը:

Տարածվում են անոնիմ նամակներ, վորոնք սպառնալիքի տակ գործադուլի յեն գրում նաև մնացած ծառայողներին, ինչպէս, որինակ, նորոգման բանվորներին, հեռագրիչներին, կոնդուկտորներին և այլն. այդ նամակները Յերևանի Ոկրուգային Դատարանի Դատախազի անձնական առաջարկութեամբ յես հանձնում են տեղական դատախազի ոգնականին: Գործադուլավորների թիվը հասնում է մոտավորապէս 300 մարդու: Այն առթիւ, վոր շոգեքարշային անձնակազմը (մեքենավարներ, նրանց ոգնականներ և հնոցապաններ) հրաժարվում է հերթական նաւրդով ուղևեցել գնացքներին, յես կազմում են արձանագրութիւններ, վորոնք բնագրով հանձնվում են հարկ յե-

ղած յերկաթուղային վարչութեանը՝ հանցավորներին պատասխանատուութեան յենթարկելու համար այն կարգով, վորը սահմանված է յերկաթուղային ծառայողների պատեւրագմական ժամանակվա Կանոնադրութեամբ:

Վերահիշալի մասին գեկուցում են ձերդ գերագնացութեանը¹:

Միայն Թիֆլիսի բանտում բանտարկված էյին 250, Յերևանի բանտում՝ 100, Ալեքսանդրապոլի բանտում՝ 65 բանվոր:

Բայց վոչ մի բան չեր կարող կասեցնել բանվորների և գյուղացիների հեղափոխական ավյունը: Ռուսաստանի բանվոր դասակարգը պայքարի յեր յելել, նա կռվում էր բարիկադների վրա հանուն ազատութեան, հանուն լիակատար հաղթանակի:

Հեղափոխութեան ալիքն ալելի ու ալելի յեր բարձրանում: Ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարի հարուստ փորձով զինված, նրա հետքերով գնում էյին քաղաքի և գյուղի դեմոկրատական ուժերը:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հավատարիմ մնալով բոլշևիզմի գաղափարներին, ընկեր Ստալինի գլխավորութեամբ, անդրկովկասյան պրոլետարիատի ոգնութեամբ և նրա հետ միասին, ձեռնարկում են ել ալելի համարձակ քայլեր:

Ընկեր Ստալինը վճռական միջոցներ է ձեռք առնում, վոր պեսզի Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի բանվորների որինակով, բարձրացնեն զինված ապստամբութեան դրոշմը:

Յերբ 1905 թվին Ալավերդու բանվորները խոշոր գործադուլ հայտարարեցին, յերբ միքանի որով դադարեցվեց գործարանի աշխատանքը և մեռավ աշխատանքային կյանքը, յերբ բանվորները դիմեցին ներկայացրին 22 կետից բաղկացած իրենց պահանջները, նույն այդ ժամանակ ընկեր Ստալինի ցուցումով Ալավերդի յե գալիս Սուրեն Սպանդարյանը և կանգնում է գործադուլի գլուխ:

Թիֆլիս կայարանի յերկաթուղային գլխավոր արհեստանոցներում, Չխաթուրիում և այլ տեղերում 1905 թվի ապրիլի 8—10-ը տեղի ունեցած մասսայական գործադուլների հետ միա-

1 ՏՄՈ հեղափոխութեան թանգարանի արխիւ: Մոսկւա, վոստիկանութեան գեղարտածենտի գործ, 4-րդ գործավարութիւն, № 4, մաս 32-րդ:

սին գործադուլ հայտարարեցին Ալավերդու ձեռնարկութուններին բանվորները, Սանահին, Ղարաքիլիսա, Սաղախլու և այլ կայարանների բանվորներն ու ծառայողները: Սոցիալ-դեմոկրատական կոմիտեների ղեկավարութեամբ բանվորները ներկայացնում են իրենց քաղաքական ու տնտեսական պահանջները:

Պայքարը հանուն վերջնական քաղաքական ազատագրման այնպիսի վիթխարի չափեր ընդունեց, Վոր Արալերդու գործարանների և հանքերի կառավարիչ Պալմարինը նամակ գրեց Թիֆլիսի հյուպատոսին, թե՛

«Այսօր յերկաթուղային ծառայողներն ու բանվորները, չըջանի գյուղերի քաղաքական կոմիտեների զինված ուժերի հետ միասին, Սանահին կայարանից շարժվեցին դեպի Մանես, նպատակ ունենալով դադարեցնել գործարանի աշխատանքը... Նրանք պահանջ ներկայացրին՝ սահմանելու ծածամյա աշխատանքային ուր, ավելացնելու որակարժեք և այլն: Յես ի վիճակի չեմ փոփոխելու այն պայմանները, վորոնց մեջ աշխատում են մեր բանվորները»¹:

Հատուկ ուշադրութեան է արժանի Սանահինի գործադուլային կոմիտեի մասսայական-քաղաքական աշխատանքը, վոր կատարվում էր մերձակա գյուղերում՝ Կովկասյան Միութենական կոմիտեի ղեկավարութեամբ:

Գործադուլները, մասսայական ցույցերը, բանվորների կողմից ներկայացվող քաղաքական ու տնտեսական պահանջները և պայքարը դրանց իրականացման համար՝ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Յերևան, Թիֆլիս—Գանձակ—Բաղու յերկաթուղիներում առկորական յերևույթ էյին:

«Այսպես ուրեմն, մենք գործադուլ ենք հայտարարել,—ասում էյին բանվորները,—այսօր մենք աշխատում ենք սովորականի պես, իսկ վաղը մեզանից վոչ վոք աշխատանքի դուրս չի գա, ընդհուպ մինչև հոկտեմբերի 20-ը:

Առաջ, ընկերներ՛ր, ավելի համարձակորեն առաջ՝ համախմբված շարժերով, համերաշխութեան ձեռք մեկնենք միմյանց, անվահեր պայքարի դնանք ընդդեմ կամայական նուլթյան:

Առաջ, ընկերներ՛ր, ուժը միասնութեան մեջ է...»:

¹ Կուսակցության պատմության ինստիտուտի տրեքիվ, Յերևան:

Թյսպիսի յեռանդ ու վոգեորություն էյին առաջացրել Ալավերդում և շատ այլ չըջաններում ստալինյան խոսքերը:

Ընկեր Սպանդարյանը տաղանդավոր տեսական ու պրակտիկ աշխատանք էր կատարում Ալավերդում, Սանահնում և Բորչալում՝ գործադուլի կազմակերպման ու ղեկավարման ուղղութեամբ:

Ընկեր Ստալինի ղեկավարութեամբ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանն Ալավերդու և Սանահինի՝ դեռևս 1906 թվի նոյեմբերին սկսված գործադուլը վերածեցին իսկական զինված պայքարի:

Բանվորներն ընտրեցին գործադուլային կոմիտեներ, վորոնց գլուխ կանգնած էյին Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը:

Իրենց դրոշների վրա գործադուլավոր բանվորները գրել էյին. «Կեցցե՛ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութունը», «Կորչի՛ ինքնակալությունը», «Կեցցե՛ աղատությունը»:

Հայաստանի հեղափոխական շարժման պատմութեան մեջ, վորը սերտորեն կապված է ընկեր Ստալինի անվան և աշխատանքի հետ, հսկայական նշանակութուն ունի Ալավերդու բանվորների 1906 թվի գործադուլը:

1906 թվի նոյեմբերի 30-ին Ալավերդու բանվորները նոր ուժով դիմում են գործադուլի, վորն ընդհատումներով տևում է մոտավորապես յերկու և կես ամիս:

Բանվորական գործադուլները, հեղափոխական շարժման անցնում էյին կազմակերպված և ինտերնացիոնալիզմի վոգով:

Ալավերդում, Սանահնում, Ղափանում, Ալեքսանդրապոլում գործադուլներին մասնակցում էյին հայ, վրացի, ադրբեջանցի, հույն, ռուս բանվորները:

1906 թվի պատմական գործադուլներին մասնակցում էյին Մանեսի պղնձահանքերում աշխատող հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս բանվորները, թվով ավելի քան 3500—4000 մարդ:

Այդ առթիվ «Նոր խոսք» թերթում ընկեր Ստեփան Շահումյանը 1906 թվին գրում է.

«Գործադուլավորների գլխավոր կադրերը վորակապես և քանակապես հասնում էյին 3500-ի»:

Ալավերդու գործադուլին, վորը ղեկավարում էր ընկեր Ս. Սպանդարյանը, գլուխ էյին կանգնած դարբին Վ. Չելիձեն, հայտնի պրոպագանդիստ՝ բանվոր-մեխանիկ Ալեքսանդր Դեվդա-

բիանին, փականագործ Մ. Աղայանը, Մ. Մուրադյանը, Ն. Զաֆարովը, մեքենավար Ա. Խոջիեվը և ուրիշները:

Ալավերդու բանվորներին հարում են Սանահնի, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Ղարսի, Յերևանի բանվորները, գյուղացիները և բոլոր դեմոկրատական խավերը:

Ստեղծվում է միասնական շարժում, վորն ուներ բոլշևիկյան ղեկավարություն և հանդիսանում էր Անդրկովկասի ընդհանուր հեղափոխական շարժման անբաժանելի մի մասը:

Հատկապես 1905—1906 թ. թ. ժամանակաշրջանում, Կովկասյան Միութենական Կոմիտեյի ղեկավարությամբ, գործադուլները Հայաստանի մի շարք քաղաքներում ու շրջաններում (Ալեքսանդրապոլ, Յերևան և այլն) ընդունում են քաղաքական առեր բնույթ:

Ուշագրություն արժանի յն Յերևանի բանվորներին և ծառայողներին գործադուլը 1905 թվին:

Առաջին անգամ Յերևանում գործադուլ Հայտարարեցին Սարաջևի կոնյակի գործարանի բանվորները: Նախքան գործադուլ Հայտարարելը այնտեղ բացատրական մեծ աշխատանք էր կատարվել պրոպագանդիստ-բանվորների կողմից, վորոնք յեկել էին Բաղվից ընկեր Ստալինի ցուցումներով: Պրոպագանդիստ-բոլշևիկները, կազմակերպիչները մանրամասն պատմում էին Մոսկվայի, Պետերբուրգի, Բաղվի և Ռուսաստանի արդյունաբերական այլ քաղաքների բանվորների հերոսական պայքարի մասին ընդհամ ցարական ինքնակալության:

1905 թվին Սարաջևի գործարանի բանվորները թողին աշխատանքը և ներկայացրին մի շարք պահանջներ: Հատուկ սրությամբ նրանք պահանջում էին «բանվորներին աշխատանքի ընդունել և աշխատանքից հեռացնել միայն բանվորական կոմիտեյի միջոցով», սահմանել 9-ժամյա աշխատանքային օր և, վերջապես, անհապաղ հեռացնել աշխատանքից կառավարիչ Զեդզինի-ձեյին:

Կոնյակի գործարանի բանվորները կանգ չառան այդ պահանջների վրա և ձեռնարկեցին ավելի համարձակ քայլեր. այն է՝ 10 օրով դադարեցրին գործարանի աշխատանքը, համախմբվեցին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության շուրջը և դուրս յեկան քողով, կազմակերպեցին լայն ցույց, վորը վերածվեց քաղաքական պայքարի:

Կոնյակի գործարանի բանվորներին և ծառայողներին գործա-

դուլին արձագանգեցին կաշեգործները, փականագործները, քարհանքների բանվորները և այլն:

Յերևանի բանվորների և ծառայողների գործադուլներն ու ցույցերը հատկապես սուր բնույթ ընդունեցին 1906 թվին:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն բաց թողեց հատուկ մի կոչ՝ նվիրված Յերևանի գործադուլներին: Այդ կոչի մեջ անսահման պարզությամբ դրվեցին Հայաստանի հեղափոխական շարժման առաջիկա խնդիրները:

Կոչը Յերևան քաղաքի բանվորներին ու ծառայողներին կազմակերպեց և սլաքարի հանեց ընդդեմ ցարական ինքնակալության, ընդդեմ բուրժուազիայի, ընդդեմ դաշնակների:

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»—այսպես է սկսվում Յերևանի գործադուլի առթիվ ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեյի բաց թողած կոչը:

«Քաղաքացիներ՛ր, ամեն կերպ աջակցություն ցույց տվե՛ք գործադուլավորներին: Դուք տեսնում եք, վոր պայքար է մղվում ձեր ընկերների դրությունը բարելավելու համար: Նրանց հաղթանակը ձեր հաղթանակն է, նրանց պարտությունը կլինի նաև ձեր պարտությունը: Պատրաստվեցե՛ք նաև դո՛ւք, վորպեսզի ամեն մի բուրժուազիական կանգնե՛ք ձեր ընկերներին:

Հաղթանակը համերաշխության, կազմակերպվածության մեջ է:

Յերևանի գործադուլավորներ՛ր,—ասված է կոչի մեջ,—յեղեք կայուն, թող ձեզանից վոչ վոք մինչև վերջին կետը դուրս չդա աշխատանքի: Շահագործողները և նրանց գործակալները կճգնեն խղճուկ վողորմություններով ձեզ թե՛քել իրենց կողմը,—մի՛ հավատաք նրանց, վորպեսզի չընկնեք փակուղու մեջ: Պնդեցե՛ք ձերը մինչև վերջը, մինչև հաղթանակը: Մեր ոգնությունը կապահովվի, շարունակեցե՛ք պայքարը:

Կեցցե՛ք յերևանցիների պայքարը:

Կորչի՛ բուրժուազիան»¹:

Ահա այսպիսի մարտական կոչով դիմեց ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն Յերևանի գործադուլավորներին:

Այդ կոչն իբրև մարտական ծրագիր ծառայեց Հայաստանի հեղափոխական շարժման համար և նրան ամուր կապեց Բաղվի, Թիֆլիսի պրոլետարիատի հետ:

¹ ՏՅԻ՝ ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի Կուսարխիվ, «Կոչ Յերևանի աշխատավորներին»:

Գործադուլային շարժման այդ յեռուն շրջանում Կովկասյան Միութենական Կոմիտեն և անձամբ ընկեր Ստալինը կոնկրետ միջոցներով ապահովեցին ղեկավարութիւնը Յերեւանի բանվորներին ու ծառայողներին պայքարի նկատմամբ, կործանելիչ հարված հասցրին դաշնակներին, մենշևիկներին և հակահեղափոխական այլ ուժերին:

1905—1906 թ. թ. ընկեր Ստալինը Հայաստան ուղարկեց Կովկասյան Միութենական Կոմիտեյի միջանի անդամներին:

Նրա հանձնարարութեամբ Ստ. Շահումյանը կանոնեց Յերեւանի գործադուլային շարժման դլուխ: Նրա ցուցումներով Ստ. Շահումյանը Յերեւանի բանվորներին, ծառայողներին ու բոլոր աշխատավորներին պայքարի հանեց ընդդէմ ինքնակալութեան, ընդդէմ դաշնակներին:

Ստ. Շահումյանը բանվորական բազմամարդ ժողովներում մանրամասն պարզաբանեց ՌՄԴԲԿ Թիֆլիսի Կոմիտեյի կոչը: Նա ասում էր, վոր հաղթանակը բանվորներինը կլինի, վորովհետեւ նրանք պայքարում են հանուն արդարութեան, հանուն ազատութեան ու աշխատանքի, վորովհետեւ նրանց մարտի յետանում բողջեցիկների կուսակցութիւնը, վորովհետեւ Ռուսաստանի բանվոր դասակարգը—միակ հետևողականորեն հեղափոխական դասակարգը—բարձրացրել է հեղափոխութեան դրոշը և իր հետեւից տանում է աշխատավորութեան ամենալայն մասսաներին:

Ստ. Շահումյանի, Լենինի—Ստալինի լավադուլն աշակերտներից մեկի, այս բոցավառ խոսքերը պայքարի հանեցին հազարավոր աշխատավորներին ու ճնշվածներին:

Յերեւանում սկսվեց հեղափոխական կատաղի պայքարը: Պայքարի դրոշ բարձրացրին բոլոր ձեռնարկութիւններին, առևտրական ընկերութիւններին, արհեստանոցների բանվորներն ու ծառայողները...

Վոստիկանութիւնը և վստահելի դորամասերը, նախառակ ունենալով կանխել յեղույթները, ձեռք եյին առնում ամենախիստ միջոցներ և դաժանորեն դատաստան եյին տեսնում բանվորներին ու դյուղացիների նկատմամբ:

1906 թ. սեպտեմբերի 4-ին վոստիկանութիւնը ձերբակալեց Բազմից յեկած բողջեցիկյան ազխատորներին՝ Սուլթանովին, Յե. Հայրապետյանին, Բաղդասարյանին և ուրիշներին¹:

Այդ ժամանակ Ալեքսանդրապոլում, Ղարսում, Ղարաքիլիսա-

յում և այլ տեղերում նույնպես գործադուլներ եյին տեղի ունենում, վորոնց մասին լայնորեն գրում եյին անդրկովկասյան բողջեցիկյան թերթերը:

1906 թիւի ապրիլին տեղի ունեցավ Ղափանի հանքագործների խոշոր գործադուլը: Այդ գործադուլի մասնակիցները պատմում են, վոր Բազմի պրոլետարիատի ոգնութեամբ Ղափանի հանքագործները 1906 թիւի ընթացքում միջանի անդամ Հայտարարեցիկ քաղաքական գործադուլներ և դադարեցրին աշխատանքը:

Յեւ իրոք, Ղափանի հանքագործների գործադուլները 1905—1906 թ. թ. ժամանակաշրջանում նշանակալից են նրանով, վոր դրանք հանդիսանում եյին Բազմի բանվորների գործադուլների շարունակութեամբ և կազմում եյին նրանց անբաժանելի մասը:

«Կայծ» և «Նոր խոսքը» Յերեւանի, Ալեքսանդրապոլի, Ալաշկերտի, Ղափանի գործադուլներին ու ապստամբութիւններին նվիրում եյին առաջնորդող հոդվածներ:

Վճռական նշանակութիւն ունեցան Սուրեն Սպանդարյանի՝ «Գործադուլներին մասին», «Բարձրանում է հեղափոխութեան ալիքը», «Տակտիկական հարցեր» և այլ հոդվածները:

Ս. Սպանդարյանը «Կայծ» թերթում (Ճ 19, 1906 թ.) գրում է, թե «Բանվորներն իրենք արդեն ձեռնարկել են վճռական քայլեր, նրանք ստեղծել են գործադուլների բյուրո և պահանջում են կազմակերպել հասարակական աշխատանքներ»:

Այս խոսքերն ընկ. Սպանդարյանը գրում էր այն ժամանակ, յերբ ընկեր Ստալինի գլխավորութեամբ Հայաստանի գործադուլներն ապահովված եյին բողջեցիկ ղեկավարներով:

Կովկասյան Միութենական Կոմիտեն հետևողականորեն և հաստատակամորեն պարդաբանում էր բանվորներին ու դյուղացիներին հեղափոխութեան խնդիրները, կոչ անելով նրանց անցնելու հետագա վճռական մարտերի ու անձնազոհ պայքարի:

Հալատարիմ մնալով բողջեցիկյան կուսակցութեան բարձր գաղափարներին, Հայաստանի բանվորներն ու դյուղացիները, Անդրկովկասի բողջեցիկների ղեկավարութեամբ, ժողովրդական լայն մասսաների հետ միասին, ուստի ան առաջին հեղափոխութեան շրջանում պայքարում եյին հանուն ազատութեան, հանուն պրոլետարիատի ու դյուղացիութեան հաղթանակի:

Հայաստանի բանվորների և դյուղացիների հեղափոխական շարժման մեջ հսկայական նշանակութիւն ունեցան ընկեր Ստալինի ձեռքով գրված պրոկլամացիաները:

Ընկեր Ստալինի կողմից գրված յուրաքանչյուր պրոկլամա-

¹ Բազմի պետ. արխիւ, դ. № 30, 13:

ցիւս անմիջապէս թարգմանւում եր հայերեն և լայնորեն տարած-
վում հայ աշխատավորութեան մեջ: Հատուկ ուշադրութեան ե
արժանի ընկեր Ստալինի դրած «Ի՞նչ պարզվեց» վերնագրով կո-
չը՝ ուղղված Կովկասի բոլոր բանվորներին, վորը տպագրվեց
հազարավոր որինակներով նաև հայերեն լեզվով:

Խորը կերպով վերլուծելով Ռուսաստանում տիրող հեղափո-
խական սխտուացիան, ընկեր Ստալինը բանվորներին և դյուշա-
ցիներին կոչ եր անում զինված ապստամբութեան.

«... հեղափոխութեան դրոշակակիրը, նրա հիմնական
կորիզը հենց պրոլետարիատն է:

Այո, ընկերներ, հեղափոխութեան առաջնորդը պրոլե-
տարիատն է—ահա թե ամենից առաջ ինչ պարզվեց վերջին
յերեք ամսվա իրադարձութիւններէ:

Յե՛վ ի՞նչ: Պրոլետարիատի մեջ նկատվում է արդէոք
ձգտում դեպի հեղափոխութիւնը, բռնն ցանկութիւն՝
առաջալնելու ցարական կառավարութիւնը: Նա մտադրւո՞ր է
արդէոք ոգտագործելու իր ամբողջ հզորութիւնը: Դիմենք
փաստերին: Բաւական եր միայն, վոր Պետերբուրգից ազ-
դանշան տրվե՞ր, բաւական եր միայն, վոր այնտեղ հեղա-
փոխութեան դրոշը պարզվե՞ր, վորպէսզի Ռուսաստանի ամ-
բողջ պրոլետարիատը՝ ռուսը, լեհը, հրեան, վրացին,
հայը, թուրքը, հույնը և այլն,—բոլորն ել, կարծես խոսք
մեկ արած, յեղբայրական միահամուռ վողջույնով արձա-
գանդեյին Պետերբուրգի բանվորների կոչին և համարձակ
մարտահրավեր ուղղեյին ինքնակալութեանը: «Մեր վողոր-
մածութեանը չես արժանանա աշխատավարձն ավելացնե-
լով: Մենք պահանջում ենք դեմոկրատիկ հանրապետու-
թիւնը»—ասում եյին նրանք: Ի՞նչ է նշանակում այս ամե-
նը: Այն, վոր պրոլետարիատը չի տեղավորվում ժամանա-
կակից քաղաքական խանձարուրի մեջ, վոր նա չնչասպառ
է լինում, նա բռնն թափով ձգտում է դեպի հեղափոխու-
թիւն, վոր «մա՛հ կամ աղատութիւն» դոչյունը նրա
«բա՛ր խորքից ե բլխում:

Այո՛, ընկերներ, պրոլետարիատը դեպի հեղափոխու-
թիւն է նետվում,—ահա թե նաև ինչ պարզվեց ցարիզմի
դեմ մղվող վերջին յեռամայա պայքարից:

...Իսկ այդ բոլորից հետևում է, վոր մեր հեղափոխա-
կան ձգտումներն իրականացնելու համար մեզ ողից ավելի
հարկավոր է միասնական ու անբաժանելի մի կուսակցու-

թիւն, վորն ընդունակ լինի մեզ համախմբելու իր շուրջը,
ըստավորելու մեր ուղին և դրոհի տանելու մեզ ընթացի
ինքնակալութեան:

Այո՛, ընկերներ, պրոլետարիատին հարկավոր է ամբա-
կառ, իրոք ղեկավարող կուսակցութիւն,—ահա՛ թե նաև
ինչ պարզվեց վերջին յերեք ամսվա պայքարից:

...Կազմակերպել ապստամբութիւնը—ահա՛ թե վերե
է մեր խնդիրը, ահա՛ թե ինչ պետք է անի Ռուսաստանի
պրոլետարիատն կուսակցութիւնը: Յերևակայեցե՛ք այս-
պիսի մի պատկեր: Յենթադրենք, թե միջանի խոշոր կե-
տերում ապստամբութեան գործը կազմակերպված է, ա-
յո՛ւնք՝ կոմիտեներն առանձին խմբեր ունեն զինվորների
մեջ աշխատանք կատարելու համար. գոյութիւն ունեն
«մարտական կազմակերպութիւններ», կա զենք, ռումբ և
այլն, կապեր են հաստատված մարտկոցների հետ, զինա-
նոցների հետ. կապեր կան նաև պետական բանկերի, փոս-
տային, հեռագրական հիմնարկների ծառայողների հետ,
կոմիտեները կասված են բանվորական մասսաների հետ,
ձգնաժամն ուժեղանում է և հեղափոխականացնում բա-
նվորներին... Յենթադրենք, թե վերե տեղ՝ Պետերբուր-
գում ապստամբութեան դրոշ է բարձրացված, ինչպէս այդ
յեղով հռնավարի Գլին: Այստեղ կուսակցութիւնն ազդե-
շան է տալիս, և ապստամբութիւնն սկսվում է: Զինված
պրոլետարիատը, ընդհանուր գործադուլից զրգոված, հար-
ձակում է գործում զինանոցների, պետական բանկի, փոս-
տի, հեռագրատան, յերկաթուղիների վրա: Այդ բոլորն
ըստ հնարավորութեան միաժամանակ է կատարվում հիշյալ
զլխավոր կետերում, վորպէսզի կառավարութիւնը ժամա-
նակ չգտնի «ձեռնարկումների» համար: Այդ առաջավոր
քաղաքներին հետևում են մյուս քաղաքները, նրանց հետե-
վից գնում են գյուղերը... Հենց այդ է, վոր նշանակում է
կազմակերպել ապստամբութիւնը: Յեթե մենք մինչև այժմ
չեյինք աշխատել ապստամբութիւն կազմակերպել, ապա
այժմ, յերբ պրոլետարիատը դեպի հեղափոխութիւն է
նետվում, յերբ պրոլետարիատի դասակարգային շահերը
նրան պարտավորեցնում են առաջնորդի դեր կատարել,—
պրոլետարիատն կուսակցութիւնը պարտավոր է կազմա-
կերպել ապստամբութիւնը և դրանով իսկ ամբողջել
պրոլետարիատն առաջնորդութեան հողը:

Այո՛, ընկերներ, ապստամբությունը կազմակերպելը մեր կուսակցության ուղղակի պարտքն է, ահա թե նաեմնչ պարզվեց յերեք ամսյա արյունահեղ պայքարից:


Միայն այն ժամանակ, յերբ մեր կուսակցությունն ապստամբություն կկազմակերպի, և, հետևապես, պրոլետարիատը գործնականում իր ձեռքը կվերցնի հեղափոխությունն ղեկավարի դերը, միայն այն ժամանակ մենք կկարողանանք հարկ յեղած ոգուտը քաղել հին կարգերի կործանումից, միայն այն ժամանակ մենք ապագա ազատ Ռուսաստանում ամուր հող կունենանք մեր վտառի տակ և կկարողանանք արժանավայել կերպով ճանապարհ հարթել դեպի «ամբողջ յերկիրը», վերը կոչվում է սոցիալիստական հասարակարգը:

Ուրեմն ամբաշնորհներ կուսակցությունը, համալրվենք կուսակցական կազմակերպությունները շուրջը և պատրաստվենք համառուսական ապստամբության համար: Յերբ ցարական կառավարությունը քայքայվում է, մեր պարտականությունն է շարքեր կազմել և պատրաստվել ցարական դահի դեմ կազմակերպված դրոհի համար»¹:

Ընկեր Ստալինի կողմից գրված և հայերեն թարգմանված այս հիանալի կոչը, վերը պարունակում է զինված ապստամբության կազմակերպման մարքսիստական պլանը, արտասովոր վաղեորությունը ուսումնասիրում եյին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները: Այդ կոչով զինված, նրանք բարձրացրին զինված ապստամբության դրոշը: Այդ ապստամբության վկաները, վոր ներկայումս աշխատում են Ալավերդու և Ղախանի պղնձաձուլական գործարաններում, պատմում են, վոր բանվորներն ու գյուղացիները խումբ-խումբ կարդում և ուսումնասիրում եյին ընկեր Ստալինի դրած պրոկլամացիան, այդ արժեքավորագույն ավանդը մարքսիզմ-լենինիզմի դանձարանում: Նրանք զինված ապստամբության եյին ղեկում ընկեր Ստալինի «Ի՞նչ պարզվեց» պրոկլամացիան կարդալուց անմիջապես հետո, ինչպես նաև նախապատրաստված լինելով բուլչեիկյան կազմակերպական աշխատանքի չնորհիմ:

Ալավերդու և նրա մերձակա գյուղերի աշխատավորության

¹ Տե՛ս ՌՍԴԲԿ կոլկոտյան Միութենական կոմիտեի 1905 թվի մարտի 20-ի «Ի՞նչ պարզվեց» կոչը:



Ալեքսանդրապոլի ս.-դ. կազմակերպության բառցիկը, 1905 թ.

զինված ապստամբությունից վախեցած, Արամյանցը և Յերզընկյանները սարսափահար վախճում եյին Ռուսաստանի խորքը:

1906 թվի հոկտեմբերին Ալավերդու բանվորներն ու աշխատավոր գյուղացիները միջանի որվա ընթացքում զինված դեմադրություն եյին ցույց տալիս ցարական «սպառօժիչ ջոկատներին»:

Ալավերդու բանվորները և շրջակայքի գյուղերի աշխատավորները այդ զինված յեղույթը ղեկավարում եր ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն: Այդ ժամանակաշրջանում ընկեր Ս. Սպանդարյանի ղեկավարությամբ զինված յեղույթները կազմակերպման գործում մեծ աշխատանք եյին կատարում Սեմյոնովը (Գոնբասի նախկին բանվոր), Չանտուրաշվիլին (մեխանիկ՝ Թիֆլիսից), Ս. Փիլրուդյանը և ուրիշները: Ալավերդու բանվորները զինված յեղույթներին մասնակցում եյին ավելի քան 4000 մարդ: Պայքարն Ալավերդում կրում եր համառ և կատաղի բնույթ:

Բազմաթիվ բանվորական ջոկատները համառ դեմադրություն եյին ցույց տալիս ցարական կառավարության դորքերին:

Բորչալվի զինվորական պետ զենեքալ Չոլտարյովի կարգադրությամբ Ալավերդու բանվորները դեմ ուղարկվում են չորս հրանոթ, բազմաթիվ զնդացիներ և խոշոր դորամասեր: Նրանք միջանի որ շրջապատում են Ալավերդու հանքերն ու Մանեսի բարձունքները, վորտեղ տեղավորվել եյին բանվորները զինված ջոկատները, և կոխվներ եյին տեղի ունենում:

Խոշոր զինվորական ուժեր կենտրոնացնելուց հետո միայն ցարական կառավարության տեղական որդաններին հաջողվում ե ճնշել Ալավերդու բանվորները և մերձակա գյուղերի աշխատավոր գյուղացիության այդ հերոսական զինված յեղույթը:

Յերևանի, Կոտայքի, Դիլիջանի և բազմաթիվ գյուղերի աշխատավորները հրաժարվեցին հարկեր վճարելուց:

Թոռալի բանվորներն ու գյուղացիները զինված ուժով դավառից վճռեցին կալվածատեր Նազովմովին, հայտնի կապալառու Ղադումյանին և նրանց պահակախումբը:

Վիճակագրական տվյալներով, 1904—1906 թվականների ընթացքում Հայաստանում տեղի յե ունեցել 31 գործադուլ, վորոնց մասնակցողները ընդհանուր թիվը հասնում եր մոտավորապես 15 հազար բանվորի, ըստվորում գործադուլների տեղությունը միջին հաշվով կազմում եր 13 օր: Գործադուլների թիվն ըստ տարիների ներկայացնում ե հետևյալ պատկերը.

1904	Թիվին—1	դործադուլ, մասնակցել են 120 մարդ
1905	Թիվին—8	» » 5700 »
1906	Թիվին—22	» » 7700 »

Փոխարքայի կարգադրութեամբ Հայաստանի համարյա բոլոր շրջաններն ուղարկվեցին պատժիչ ջոկատներ: Սակայն չնայած ցարական կառավարութեան և նրա տեղական որդանների կողմից ձեռք առնված ամենադաժան միջոցներին, այնուամենայնիվ ինքնակալութեանը չհաջողվեց հանդցնել հեղափոխութեան հրդեհը: Հեղափոխական յեղույթները, դործադուլները, գյուղացիների հրապարակելի հարկեր վճարելուց, շատ տեղերում շարունակվում էին ընդհուպ մինչև ստոյիպլինյան սև ուսկիցիայի շրջանը:

II

Լավատեղյակ լինելով Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիներին դրութեանը, ընկեր Ստալինը սոցիալ-դեմոկրատական կազմակերպութուններին կոնկրետ ցուցումներ և առաջիկ գյուղացիական շարժման նկատմամբ ուղղորդութունն ու թեղադրությունը և ամենորոյա բանվորական ղեկավարութունն ապահովելու անհրաժեշտութեան մասին:

Թիֆլիսի բուլժևիկյան կազմակերպութեան մարտական որդան «Դրո»-յում ընկեր Ստալինը մի հոգոված դրեց Բորչալուի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան հերթական խնդիրների մասին:

Այդ հոգովածի մեջ նա մատնանշում է հեղափոխական շարժման կազմակերպման կոնկրետ ձևերը, նրա բուլժևիկական շրջանը և պահանջում է անհաշտ պայքար ծավալել ընդդեմ ուսկիցիոն ուժերի՝ դաշնակների, մենշևիկների, հնչակյանների, եսերների և ուրիշների:

Հատուկ ուղղորդութուն նվիրելով հայկական գյուղում սկսված հեղափոխական շարժմանը, ընկեր Ստալինը սոցիալ-դեմոկրատական կազմակերպութուններին պահանջում է յերեսը դարձնել դեպի գյուղը, ուժեղացնել այդ շարժման կոնկրետ ղեկավարութունը:

Ընկեր Ստալինը միջանի անդամ Հայաստան է ուղարկում Կովկասյան Կոմիտեյի անդամներին (Սպանդարյանին, Զափարի-ձեյին, Շահումյանին և ուրիշներին):

Շնորհիվ ընկեր Ստալինի կողմից ցույց տրվող աջակցի հոգատարութեան ու ջերմ աջակցութեան, ինչպես նաև բանվոր դաշակարդի ոգնութեամբ, շարժումը Հայաստանում պետք է վերածվեր իսկական հեղափոխական շարժման:

Այդպես էլ յեղալ: Հետզհետե ավելի ու ավելի յեր ամբապնդվում բանվորական շարժումը Հայաստանում և, ստալինյան իմաստուն խոսքերի աղբյուրութեամբ, ուժեղացնում եր իր ղեկավարութեանը գյուղացիական շարժման նկատմամբ, վորը լրջորեն վախեցրել եր ցարական կառավարութեանը:

Այս հանդամանքը նշվեց ընկեր Լենինի կողմից և արժանացավ նրա փայլուն գնահատականին:

ՌՄԴԻԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն մի շարք միջոցներ ձեռք առավ Հայաստանում գյուղացիական շարժումն ուժեղացնելու ուղղութեամբ:

Հայաստանի գյուղացիներին ուղղված իր կոչի մեջ ՌՄԴԻԿ Կովկասյան Միութենական Կոմիտեն գրում է.

«...և յերբ քաղաքի ու գյուղի աշխատավորները ձեռք-ձեռքի տված, յեղբայրական միասնութեամբ ու ընդհանուր ջանքերով դրոհի կղնան ցարական դահլիճը, իմացե՛ք, հայ գյուղացիներ, վոր վոչ մի ուժ այն ժամանակ նրանց չի կարող խանդարել այդ դործում»¹:

Անդրկովկասի գյուղացիներին հեղափոխական շարժումը առանձնապես լայն է ծավալվում կուսակցութեան Կովկասյան Միութեան 1905 թվի նոյեմբերին կայացած 4-րդ կոնֆերենցիայի կոնկրետ ձեռնարկումների հիման վրա:

Կովկասյան Միութեան 4-րդ կոնֆերենցիան, յենելով գյուղացիական շարժման կազմակերպման հարցի վերաբերյալ յերբորդ համադրմարի լենինյան դրույթներին ու մարտական վորոշումներին, նշեց.

«ՌՄԴԻԿ Կովկասյան Միութեան 4-րդ կոնֆերենցիան, նպատակ ունենալով է՛լ ավելի ուժեղացնել գյուղացիութեան հեղափոխական շարժումը և դեմոկրատականութուն ու կազմակերպվածութուն մտցնել նրա մեջ, հանձնարարում է կազմակերպութուններին անհապաղ ձեռնամուխ լինել գյուղացիական հեղափոխական կոմիտեներին կազմակերպմանը (վորտեղ այդպիսիք դեռ չկան) և դրանով իսկ մինչև վերջը հասցնել գյուղի փաստացի ազատագրման գործը: Ընդամին, առաջարկվում է նման կազմակերպութունները չխառնել սոցիալ-դեմոկրատական կազմակերպութունների հետ, այլ նրանց յենթարկել վերջիններին աղբյուրութեանը»:

¹ ՏԵՄ 24(Բ) ԿԿ-ի կուսարխիվ, Արհավերդու դործ. № 1219:

Ստալինյան այդ ցուցումները համաձայն Հայաստանում հատուկ ուղադրութիւն նշխարեց զյուզացիական հեղափոխական կոմիտեները ստեղծմանը:

Ճիշտ է, այդ կոմիտեները մեծ չափով տարածված չէին և չէին ծավալել ուժեղ դրոշմակցութիւն, ինչպէս այդ Վրաստանում երևալ տեղերում, սակայն Հայաստանի մի շարք վայրերում այդ կոմիտեները վորոշ աշխատանք կատարեցին աշխատավոր զյուզացիներին համալսելու ուղղութիւնով:

Լոռիում, Ղազխում, Շամշադինում, Քարվանսարայում, Կոտայքում և Ն.-Բայազետում աշխատավորներն սկսեցին ներկայացնել մասսայական պահանջներ:

Չորրորդ կոնֆերենցիայի վորոշումներով թևակոխած, Անդրկովկասի աշխատավոր զյուզացիները, բանվոր դասակարգի հետ միասին, բոլշևիկյան կուսակցութեան ղեկավարութեամբ սկսեցին դրախտ կալածատիրական հողերը, դադարեցրին ամեն տեսակ հարկերի վճարումը, բոլոր հայտարարեցին հողեւորականութեանն ու կառավարական հիմնարկներին:

Սրանք էյին զյուզացիութեան հեղափոխական պայքարի ձևվերն ու բովանդակութիւնը: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների ղեկավարութեամբ՝ զյուզացիները հեղափոխական պայքարն ընդդէմ ինքնակալութեան եւ ավելի լայն ծավալվեց ընկեր Ստալինի «Ագրարային հարցը» հոդվածից հետո, վորը լույս տեսավ 1906 թիւի մարտին:

«Ագրարային հարցը» հոդվածի մեջ ընկեր Ստալինը լենինյան պարզորոշութեամբ հիմնավորում է բոլշևիկյան ծրագիրը ագրարային հարցում և ամենայն պարզութեամբ դնում է սոցիալ-դեմոկրատիայի հերթական խնդիրները զյուզում:

Ընկեր Ստալինը հանդիսանում էր 1905 թիւի հեղափոխութեան առաջավոր ջոկատի կազմակերպիչն ու ղեկավարն Անդրկովկասում: Նա մարմնավորեց կյանքում լենինյան ուսմունքը պրոլետարիատի հեղեմոնիայի մասին և պրոլետարիատի՝ վորպէս զյուզացիական շարժման ղեկավարի՝ մասին:

«Ագրարային հարցը» հոդվածում ընկեր Ստալինը վորոշակի կերպով հայտարարեց, վոր Անդրկովկասի պրոլետարիատը պետք է անհապաղ ուժեղացնի իր ղեկավարութիւնն ու ոգնութիւնը նույնիսկ ամենահեռավոր զյուզական անկյունում:

Ագրարային հարցում բոլշևիկյան ծրագրի առթիւ ընկեր Ստալինը, ինչպէս մատնանշում է ընկ. Լ. Բերիան, 1906 թիւի

ժարտին Ի. Բեստշիլիի ստորագրութեամբ «Եւլա» թերթում լույս ընծայեց մի շարք հոդվածներ, վորոնց մեջ նա վճռականորեն պաշտպանում էր հողի բռնագրավման լողունը:

Ընկեր Ստալինը կործանիչ հարված էր հասցնում նրանց, ովքեր համառարեն կանգնած էին մնում ագրարային հարցը միայն այսպէս կոչված՝ հողակտորների բռնագրավման միջոցով լուծելու հին մեթոդների կողմը, և առաջ էր քաշում ամբողջ կալվածատիրական հողի բռնագրավման լողունը: Այդ բոլորից հետո ընկեր Ստալինը գալիս է այն հետեւութեան, վոր «միայն դա (բռնագրավումը) կարող է մինչև վերջը հասցնել զյուզացիական շարժումը, միայն դա կարող է ուժեղացնել ժողովրդի յեռանդը, միայն դա կարող է հողմացրիլ անել՝ ճորտատիրութեան հին մնացորդները»¹:

Ագրարային հարցի վերաբերյալ ընկեր Ստալինի բոլշևիկյան լողունը հայկական մինչև ամենահեռավոր զյուզը հասցնելու և աշխատավոր զյուզացիներին այդ լողունը կենսադրոծման համար պայքարի հանելու ուղղութեամբ մեծ աշխատանք ծավալեցին Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը:

Ագրարային հարցի վերաբերյալ լենինյան-ստալինյան լողուններով ղինված, նրանք բոլշևիկյան մամուլում տպագրեցին մի շարք հիանալի հոդվածներ, Հայաստանի զյուզերում բոլշևիկյան յեռանդուն աշխատանք ծավալեցին հանուն զյուզացիների քաղաքական ազատագրման, հանուն հողի բռնագրավման: Ընկեր Ստալինի ցուցումով դեռ 1904 թիւի Գանձակում (իսկ 1905—1906 թ. թ. նաև մերձակա շրջաններում) կազմակերպվեցին ՌՄԴԲԿ բոլշևիկյան խմբակներ, վորոնց ղեկավարում էյին Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը:

Մասնավորապէս խմբակի անդամների քաղաքական դաստիարակութեան ուղղութեամբ կատարվող աշխատանքն իր վրա վերցրեց Ս. Սպանդարյանը:

Ս. Սպանդարյանը, մեծ Ստալինի լավագույն աշակերտներից ու ղինակիցներից մեկը, հիանալի ըմբռնելով հողի բռնագրավման լենինյան-ստալինյան լողունը իմաստը, հաստատականորեն կենսադրոծում էր այդ լողունը հայ իրականութեան մեջ:

Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ և նրա ցուցումներով Ս. Սպանդարյանը բոլշևիկյան մամուլում տպագրեց

¹ «Ագրարային հարցը», հոդված առաջին, «Եւլա» թերթ, 1906 թ. մարտի 17:

մի շարք հոգւածներ՝ «Մեր դերը գյուղում» սերիայով: Այդ հոգւածների մեջ Ս. Սպանդարյանը նկարագրելով դյուղում տիրող դրութիւնը, պարզ ու վորոշակի պարզաբանում եր ընկեր Ստալինի (Ի. Բեսուշվիլու) «Ագրարային հարցը» հոգւածի ելութիւնը և Հայաստանի աշխատավորներին կոչ եր անում իրականացնել հողի բռնագրավման ստալինյան լուղունդը:

Ընկեր Ստալինի ողնութիւնը Ս. Սպանդարյանն այն հարցին, թե «Ի՞նչ պետք ե անի ս. - դ. կաղմակերպութիւնը դյուղում», պատասխանում ե.


«Հասկանալի յե, վոր սոցիալ-դեմոկրատիան, վորպես վորոշ դասակարգային շահերի և ձգտումների դիտակից արտահայտողն ու պաշտպանը, իբրեւ գլխավոր նպատակ՝ պետք ե կարողանա կաղմակերպել դյուղի արդետարական ու կիսարդետարական մասսաներին, դյուղական բանավորներին ու հողագործի դյուղացիներին»¹:

Ս. Սպանդարյանը, մինչև վերջը հավատարիմ մնալով Լենինի—Ստալինի դործին, լավ յուրացրած լինելով ընկեր Ստալինի արժեքավորագուէն ցուցումներն Անդրկովկասում հեղափոխական շարժման մասին, պահանջում եր, վոր Հայաստանի աշխատավոր դյուղացիները, Գուրիայի հեղափոխական դյուղացիութիւնն որդենակով, հայկական դյուղում սկսված պայքարն ուղղեն արյունարբու ինքնակալութիւն և ամեն տեսակ շահագործման դեմ: Դրանից յենելով, նա գրում ե.

«Մեր պարտականութիւնն ե—հեղափոխականացնել ամբողջ դյուղը, ներգործել ամբողջ դյուղացիութիւնն վրահեռեյալ լուղունդով՝ ամբողջապես նվաճել հողն ու աղատութիւնը»²:

Այդպիսով, ռուսական առաջին հեղափոխութիւնն չրջանում հայկական դյուղում կատարվող աշխատանքի հիմնական խնդիրներից մեկն եր—ժողովրդի տարերային, չձևավորված շարժումն ու դայրութիւնն ուղղել վորոշակի հունով, այն դարձնել դիտակցական, կաղմակերպված շարժում, խուսափելով եքսցեսներից և ավելորդ գոհեր տալուց:

Տարերային դյուղացիական շարժումը կաղմավորելու մասին ընկեր Ստալինի ցուցումները կենսագործելու նպատակով Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը նախապատրաստական մեծ աշ-



Ս. Սպանդարյանը. Այվերդի միտնցում

¹ ՏՆՍ «Նոր խոսք», № 6, 1906 թ.:

² Նույն տեղում:

խատանք են ծավալում գյուղացիության լայն մասսաների մեջ այն հաշվով, վոր «գյուղացիությանը հետ պահեն բաժան-բաժան և մասնակի յեղութիւններից ու հաջորդութիւններից և մասսային նախապատրաստեն ընդհանուր միաժամանակյա պայքարի ու առաջխաղացման համար: Դրանումն է հաղթանակի գրավականը»¹:

Ստալինյան ցուցումների հիման վրա Ս. Սպանդարյանը, յերևան բերելով Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կադմակերպութիւնների աշխատանքի մեջ յեղած թերութիւնները, միաժամանակ գյուղացիներին պարզաբանում եր Լենինի—Ստալինի պարզ ու վորոշակի ցուցումները գյուղացիության հետ ունենալիք փոխհարաբերութիւնների հարցի մասին:

«Մեր գործողության հիմքը,—ասում ե Ս. Սպանդարյանը,—մենք պետք է դարձնենք ագրարային շարժումը, նրա նկատմամբ ապահովելով պրոլետարիատի ամուր դեկավարութիւնը: Սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի, վոր շարժումը չլինի տարերային, անձե ու անկադմակերպ, քանի վոր այդպիսի տարերային ու անսպասելի պոթկումները միշտ ջախջախւում են, գյուղացու հոգու մեջ թողնելով հիասթափութիւն, դժգոհութիւն, յուրատեսակ պեսիմիզմ»²:

Ս. Սպանդարյանը մեծ ոգնութիւն ցույց տվեց Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կադմակերպութիւններին: Նրա յեռանդուն աշխատանքի շնորհիւ բանվորներն ու գյուղացիները հսկայական ուշադրութիւնով ծանոթանում էին Լենինի—Ստալինի ուսմունքին: Մասնավորապես Ալավերդու շրջանում տեղի ունեցած մի շարք գյուղացիական ժողովներում Ս. Սպանդարյանը պարզ ու հասկանալի բացատրում եր ընկեր Ստալինի՝ «Ագրարային հարցը» հոդվածի բովանդակութիւնը, նա ցույց եր տալիս մի շարք գյուղերի (Հաղպատ, Շահալի, Սեփար և այլն) աշխատավոր գյուղացիների աշխատանքը, նրանց բուռն հետաքրքրութիւնը դեպի Գուրիայի, Թիֆլիսի, Բազվի, Գանձակի և այլ շրջանների հեղափոխական շարժումը:

«Մեր դերը գյուղում» վերնադրով իր հոդվածի մեջ Ս. Սպանդարյանը գրում ե. «Անցյալ հոգվածի մեջ, խոսելով գյուղում սոցիալ-դեմոկրատիայի գործունեյության մասին, մենք առաջ քաշեցինք յերկու հիմնական գրութ»:

¹ Տե՛ս «Նոր խոսք», № 8, 1906 թ.:

² Նույն տեղում:

1. Մեր կուսակցութեան շարքերում կազմակերպել միայն պրոլետարական և կիսապրոլետարական տարրերին:

2. Հեղափոխականացնել ամբողջ գյուղացիութեանը, նրան լողունք տալով՝ «Ամբողջ հողը և լրիվ ազատութեանը»: Այժմ հարց է ծագում, թե ի՞նչպե՞ս իրականացնել, ի՞նչպե՞ս կենսադրածել այս յերկու հիմնական թեզիսները. հայտնի չէ, Վոր գյուղացիները լայն հորձանքով ձգտում են դեպի մեր կուսակցութեանը, և գյուղում աշխատող մեր ընկերները և մեր կուսակցութեանն աշխատող կազմակերպիչին գյուղացիներին ու պայքարի դուրս բերին նրանց ընդդէմ ինքնակալութեանը»¹:

Ստալինյան ցուցումների հիման վրա Ս. Սպանդարյանը գյուղացիներին կոչ էր անում բանվորների հետ միասին պայքարի յենել հանուն քաղաքական ազատութեան, հանուն հողի:

Ռիդայից վերադառնալուց հետո Ստ. Շահումյանն այցելեց Հայաստանի մի շարք շրջաններ:

«Նա (Ստ. Շահումյանը:—Ա. Հ.) Զալալոյլիում (այժմ՝ Ստեփանավան:—Ա. Հ.) շարունակում էր իր պարապմունքը հեղափոխական խմբակի հետ: Պարապմունքի թեմաներ հասարակական սոցիալական խնդիրներից մեկը»²:

Ս. Սպանդարյանը, Ստ. Շահումյանը, Ա. Զախարիձեն և Կովկասյան Կոմիտեյի այլ անդամներ, ունենալով ընկեր Ստալինի հատուկ ցուցումներն ու դիրեկտիվները, լինում էին Անդրը-կովկասի զանազան շրջաններում, վորտեղ, չնայած ամեն տեսակ դժվարութեաններին, հաջողութեամբ անց էին կացնում գյուղական ժողովներ՝ նվիրված աղբարային հարցին:

Գյուղական ժողովներից մեկում Ստ. Շահումյանն ասում է.

«Գյուղացիութեան իր դրոշի վրա գրել է «հանուն ամբողջ հողի, հանուն լիակատար ազատութեան» լողունքը, իսկ այդ նպատակին հասնելու համար գյուղացիներն աշխուհեան, պրոլետարիատի գեղավարութեամբ, պետք է պայքարեն մինչև վերջ ու պրակտիկ կերպով լուծեն... բոլոր ցարական, ուղեւային, կարինետային, բոլոր վանքապատկան և դրանց հետ միասին բոլոր մասնավոր-սեփականատիրական հողերի բռնազրավումը»³:

Ստ. Շահումյանը, ստալինյան ցուցումների հիման վրա,

ամփոփելով գյուղացիների միանգամայն արդարացի հեղափոխական պահանջները, ասում էր նրանց.

«Այդ պահանջներն անխուսափելիորեն յենում են Ռուսաստանի ներկայիս սոցիալ-տնտեսական դրութեանը, և հեղափոխութեանը կանգ չի առնի վոչ մի բանի առջև, 100 միլիոն գյուղացիների կենսական պահանջներն իրականացնելու համար»⁴:

Գյուղում հեղափոխական շարժման նոր վերելքով վողեւնչված, Ստ. Շահումյանը, Լենինի—Ստալինի ուսմունքի լավագույն ու հետևողական կիրառողներից մեկը, «Ապարդյուն ջանքեր» վերնագրով իր հոդվածի մեջ գրում էր.

«Կառավարութեանն առաջադրում է գերմարդկային հարցեր գյուղացիական ահեղ շարժումը կասեցնելու համար: Միակ բանը,—շարունակում է Ստ. Շահումյանը,—վոր կարող է կասեցնել աղբարային շարժումը, դա ամբողջ հողը ձրի ու առանց վորեւ վերկալճարի գյուղացիներին հանձնելն է: Կարող է արդոք ցարական կառավարութեանն անել այդ, առանց իր դոյութեան և իր պաշտպան ազնվականութեան դոյութեան միակ հիմքը վոչնչացնելու: Վո՛չ, չի կարող»⁵:

Գիտենալով իրերի իսկական դրութեանը կովկասյան գյուղում, ընկեր Ստալինն արժեքավորագույն ցուցումներ տվեց և իբրև գյուղում կատարվող աշխատանքի հիմնական խնդիր առաջադրեց.

«Գյուղացիների ազատադրման համար անհրաժեշտ է վոչնչացնել ճորտատիրութեան մնացորդները, իսկ այդ մնացորդները վոչնչացնելու համար անհրաժեշտ է բռնադրաւել կալվածատիրական ու կառավարական ամբողջ հողը»⁶:

Ընկեր Ստալինի այս պարզ ու վորոշակի ցուցումներից հետո Անդրկովկասի և Հայաստանի գյուղացիներին պայքարը հանուն հողի ու ազատութեան՝ նոր թափ ու բովանդակութեանն ստանում է:

Կալվածատիրական ու պետական ամբողջ հողի բռնադրաւման մասին ընկեր Ստալինի այս մարտական-հեղափոխական լողունքի

¹ «Նոր խոսք» № 7, 1906 թ.:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Նոր խոսք», № 15, 1906 թ.:

⁴ Տե՛ս «Նոր խոսք», № 3, 1906 թ.:

⁵ Տե՛ս «Նոր խոսք» № 5, 1906 թ.:

⁶ «Աղբարային հարցը», հոդված 2, «Նվա» թերթ, 22 մարտի, 1906 թ.:

իրականացման դործում դյուղացիներին հսկայական ողնություն ցույց տվեց բանվոր դասակարգը:

Գյուղական ժողովներում դրվում եր հողի բռնադրաման ստալինյան լողունգն իրականացնելու հարցը: Այդ են վկայում դյուղական ժողովների բանաձևերը: Այդ ժողովներն իրենց իրավունք վերադասեցին քննարկելու հողային հարցը և դյուղացիներին հուզող այլ հարցեր, ըստօրոք ընդունված վորոշումները պարտադիր եյին կենսադործման համար:

Ժողովները դառնում եյին, վոր պետութայնը դիմելը, տվյալ ուժի տիրապետութայն պայմաններում, չի կարող եֆեկտ ունենալ, և վոր «հողն ու աղատությունը նվաճելու համար դյուղացիները պետք ե ընթանան ուսմ մոտիկի ուղիով»¹:

Հայաստանում արձադանդ դառավ ընկեր Ստալինի այն հստակ միտքը, վորի համաձայն, հողի բռնադրաման արդարացի պահանջի հետ պետք ե կապված լինել նաև քաղաքական աղատութայն պահանջը:

Յենելով ընկեր Ստալինի մարտական ցուցումներից, ՌՄԴԿ Բորչալվի կադմակերպությունը կոնկրետ կերպով դրադեց հողի բռնադրաման հարցերով:

1906 թվի դարնանը, ընկեր Ստալինի «Ադարային հարցը» հոդվածի հրապարակումից հետո, Ալավերդու ս.-դ. կադմակերպությունը կոնֆերենցիա հրավիրեց, վորտեղ կոնկրետ միջոցառումներ մշակվեցին ադարային հարցի վերաբերյալ ընկեր Ստալինի ցուցումներն իրականացնելու ուղղությամբ: Մասնավորապես, կոնֆերենցիան դրադեց կուրթան, Ակորի, Ղաչաղան, Մղարթ, Ծաթեր, Վարդաբլուր և այլ դյուղերի հողային վեճերի հարցով:

Հիանալի յուրացրած լինելով ընկեր Ստալինի մարտական լողունգը հողերի բռնադրաման մասին, Բորչալվի ս.-դ. կադմակերպությունն աշխատավոր դյուղացիներին ուղղված իր կոչի մեջ դրում ե.

«Դուք պետք ե դիմադրեք նրանց հավակնություններին²: Ձեր միահամուռությամբ և համերաշխությամբ դուք պետք ե ցույց տաք, վոր հեշտ չե՞ ձեզանից խլել այն, ինչ դուք նվաճել եք: Ընդհակառակը, դուք պետք ե դիմա-

դրեք և շարունակեք պայքարն արյունարբու կալվածատերերի ու վաշխառուների դեմ»¹:

Անդրկովկասի պայքարող հեղափոխական պրոլետարիատի զեկավարությամբ Հայաստանի աշխատավորները հերոսական պայքարի յեղան հանուն աղատության:

Հեղափոխական շարժման պատմության մեջ հսկայական դեր եյին խաղում ս.-դ. կադմակերպությունները, վորոնք անդուլ աշխատանք եյին կատարում նաև դյուղում: Նրանց դերն ել ավելի նշանավոր ե դառնում Հայաստանում տեղի ունեցող ամենորայ պայքարով, վորի նպատակն եր իրականացնել հողի բռնադրաման լողունգը:

Իերենք միջանի որինակներ:

Հողի բռնադրաման ստալինյան լողունգի իրականացման նշանաբանով, Արամյանցի կալվածքում աշխատող բանվորներն ու դյուղացիները, մերձակա դյուղերի աշխատավորության ակտիվ մասնակցությամբ, 1906 թ. սեպտեմբերի 17-ին խոչոր ցույց զադմակերպեցին: Այդ որը ցուցարարները վորոշեցին.

1. Անհապաղ դյուղից վոնդել կալվածատերերին ու ստրաժնիկներին և դյուղացիներին միջից ընտրել 1—2 մարդ, հենց դյուղացիների ընտրությամբ:

2. Կտրել անտառը՝ վառելափայտի ու շինարարության համար, ինչքան վոր կուղենա յուրաքանչյուր դյուղացի:

3. Ընտրել հողաբաժանության կոմիտե:

4. Այս տարի բերքից վոչինչ չտալ (խոսքը կալվածատերերին վճարվող հարկերի մասին—Ա. Հ.)²:

Ցուցարարների բանաձևը վերջանում ե հետևյալ խոսքերով. «Յերբ հեռադիրը Ռուսաստանի բոլոր ծայրերից ամեն որ տեղեկություններ ե բերում բանվորական ու ադարային շարժման մասին, հողի ու աղատության համար մղվող պայքարի մասին, յերբ արդեն մոտեցել ե դահիճների նկատմամբ ժողովրդական դատաստանի ժամը—հենց այս պահին կալվածատեր Արամյանցը նոր ուժով սարափի ե տարածում դյուղացիների մեջ»:

Ապստամբած հեղափոխական աշխատավորները, ստալինյան խոսքերով ու ցուցումներով զինված, ավելի ու ավելի սերտորեն են համախմբվում և կոչ են անում ել ավելի ուժեղացնել

¹ «Նոր խոսք» № 13, 1906 թ.:

² Խոսքը վերաբերում ե կալվածատերերի վտանգություններին: Ա. Հ.:

¹ Տե՛ս Հայաստանի կուսարխիվ:

² Տե՛ս «Կայծ» № 30, 1906 թ.:

կապերը Բագվի ու Թիֆլիսի հետ՝ ամեն տեսակ կեղեքիչներին կործանիչ հարված հասցնելու համար:

«Շարունակի՛ր, Արամյանց,—ասում էյին իրենց բանաձևի մեջ ցուցարարները,—բայց լմացի՛ր, վրո այս ուրը քեզ համար եժան չի նստի»:

Ապստամբած դյուղացիները չէյին վախենում վոչ մի բանից և ընդորինակելով մոտիկ ու հեռավոր շրջանների հեղափոխական շարժման փորձը, վողեորվելով նրանց և իրենց սեփական հեղափոխական պայքարով, նրանք ավելի զգաստ կերպով էյին կոչում հանուն հողի բռնազրավման, հանուն խակական աղատության:

Ապստամբած դյուղացիները բուն դայրույթով դիմելով Արամյանցին, ասում էյին նրան.

«Պատրաստվի՛ր սլատասխան տալու քո յուրաքանչյուր վոճրադործության համար»:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բանվորների և դյուղացիների հեղափոխական շարժումը 1905—1906 թ. թ. ժամանակաշրջանում ընդունում է կազմակերպված բնույթ, ընդգրկելով քաղաքի և դյուղի աշխատավորների ավելի ու ավելի լայն մասսաներին:

Հենց այդ են վկայում Ղոշղոթան, Սեքար, Հաղսրատ, Գոթի, Գոշի, Զարխեչ, Շամշադին և այլ դյուղերում միաժամանակ սկսված դյուղացիական յեղույթները ընդգեմ կալվածատերերի:

Հիշյալ վայրերում դյուղացիների պայքարն այն աստիճան հուժկու յեր, վոր կալվածատերեր՝ Արամյանցը, Վեքիլովը, Թիրաբյանցը և ուրիշները փախան իրենց կալվածքներից:

Գյուղացիների այդ պայքարն ու հեղափոխական շարժումն ընդունեց այն աստիճան լայն ու սպառնալից չափեր, վոր Բորչավի՛ դլուխը կորցրած դավառապետ կապիտան Ռյազանովը հեռադրեց Կովկասի վոստիկանական վարչությանը, թե

«Բորչալուն համակված է պայքարով, դրությունը սարսափելի յե: Հրկիղել են Արամյանցի, Յուրինովի և ուրիշների կալվածքները: Այժմ անում են ամեն բան: Խնդրում ենք դորք ուղարկել»¹:

Հայ հասարակայնության ներկայացուցիչների հետ ունեցած իր զրույցի վերջում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովն ի միջի այլոց ասաց. «Յես վշտացած եմ Յելիզավետպոլի նահանգում տեղի ունեցած անկարգությունների առթիվ: Ինձ



Յերեանում այն տունը, վորտեղ Ստ. Շահումյանը գեկուցել է ՌՍԳԿ Ստոկհոլմի համագումարի մասին (1907 թ.)

¹ Տե՛ս Պետարխով, Գ. 27, դործ № 38, Յերեան:

հաղորդել են, Վոր հողային հարցերի շուրջը շատ անկարգու-
թյուններ են լինում նաև Ղաղախի գավառում: Դա լավ չէ: Յե-
կհոդամ նաև այդ մասին»¹:

Ղաղախի գավառի համարյա բոլոր գյուղերում մասսայակա-
նացվում էյին հողի բռնադրամյան մասին բողոքական լողունդ-
ները, սրբկլամացիաները և ընկեր Ստալինի դրած դանազան
հողվածները:

«Կայծ» թերթը գրում է, Վոր Բաշենդի գյուղացիները, հաս-
կանալով հողի բռնադրամյան լողունդի եյությունը և մանրամա-
սըն ծանոթանալով Գուրիայի գյուղացիների հեղափոխական
պայքարի հետ, կազմակերպված կարգով միջանի անդամ հար-
ձակվեցին հայտնի կարվածատեր Ալիևի կարվածքի վրա, բայց
Ալիևան հրամանատարությամբ վրա հասած զորքերը ջախջախե-
ցին ապստամբ գյուղացիներին:

Ղաղախի գավառական դատարանը ամիսներով դատված եր-
Բաշենդի իրադարձություններով: Վստոիկանությունը և դա-
տարանն իրենց առջև խնդիր էյին դրել յերևան բերել ապստամ-
բության ղեկավարին, սակայն վորքան էլ Վոր դատարանը դա-
ժան եր իր հետապնդումների մեջ, Բաշենդի գյուղացիները հա-
մախմբված ու հաստատակամ դռնվեցին դադտնիքը պահպանելու
դործում: Այդ գյուղում պահվում եր պատժիչ ջոկատ, Վորը հըս-
կում եր, Վորպեսղի «անկարգություններ» չծաղեն, բռնում եր
Բաղվից ուղարկվող բողոքական գրականությունը և ձերբակա-
լում եր այդ գրականությունը փոխադրողներին:

1906 թվի դարնանը, Ալավերդու դործադուլավոր բանվորնե-
րին, Վորոնք բացելուց առաջադրել էյին բողոքական պահանջ-
ներ, հարեցին նաև գյուղացիները:

Ալավերդու շրջանի չորս գյուղերի ղինված գյուղացիները
բանվորների հետ միասին շարժվեցին Արամյանցի կարվածքի
վրա: Այնտեղ նրանք խոշոր ցույց կազմակերպեցին Արամյանցի և
այլ շահադործողների դեմ:

1906 թվի մայիսի 12-ին «զանազան գյուղերի գյուղացիները,
հավաքվելով Այգեհատ գյուղում, ՌՄԴԲԿ Բորչալի կազմակեր-
պության անդամների ղեկավարությամբ, միտինգ կազմակերպե-
ցին և Վորոչեցին փոխել հարկերի ու կապալի գոյություն ունե-
ցող կարգը»²:

¹ Տե՛ս Պետարխիլ, Գ. 27, դործ № 38, Յերևան:

² «Նոր խոսք», 1906 թ.:

Ցուցարարները միահամուռ կերպով վորոշեցին.

1. Իբրև արոտավայր ոգտադորձել կալվածքները այն տեղերը, վորոնց համար յերեք անգամ հարկ է վճարված:

2. Այն տեղերի համար, վորոնք միայն արոտատեղեր են, կամ կապալով են վերցված, վճարել մասնակիորեն, կամ նույնպես ոգտադորձել վորպես արոտատեղ:

3. Թող գլխենան բոլորը, վոր մի քանի գյուղերում այս վորոշումն արդեն կենսադորձվում է»¹:

Յարական կառավարութեան, կալվածատերերի, ինչպես նաև դաշնակների ու սպեցիֆիկների կողմից հետապնդվող ու հալածվող բանվորներն ու գյուղացիները հանդես եկին դալիս պաշտպանելու իրենց իրավունքները, սրայքարելու աղատութեան համար:

Թիֆլիս կայարանի յերկաթուղայինների սկսած դործադուլի ազդեցութեամբ սկսվեց Աղստաֆա կայարանի յերկաթուղայինների դործադուլը: Աղստաֆայի դործադուլը փաստորեն հանդիսացավ Թիֆլիսի դործադուլի շարունակութունը:

Թիֆլիսի գեպոյի բանվոր Ստեպանովը և ուրիշները, վորոնք մասնակցել էին Աղստաֆա կայարանում տեղի ունեցած դործադուլին, պատմում էին, թե իրենք ինչպես են դործադուլ կադմակերպել իրենց մոտ և ինչպիսի պահանջներ են ներկայացրել: Գանվոր Սարգսյանը և ուրիշները, 1905 թվի հեղափոխութեան անմիջական ազդեցութեամբ, այդ որն ունեցան հիանալի յեղույթներ, վորոնց մեջ նրանք ասում էին.

«Մոսկվան մնացել է առանց ջրի: Քաղաքային ջրմուղի բանվորները միջանի որ իրար հետևից չեկին աշխատում:

Սպանդանոցի բանվորները նույնպես դործադուլ եկին հայտարարել:

Գեներալ-նահանգապետը բացարձակապես անդոր եր, չնայած վոր իր տրամադրութեան տակ ուներ դորք, վոստիկանութուն և ինչ վոր կամենաք:

Նույնն եր նաև Թիֆլիսում ու ամենուրեք...»²:

Հոկտորի ճառի թե՛ պահին ցույցի մեկ ծայրում վոստիկանութունը ծեծում և ձերբակալում եր ցուցարարներին, իսկ մյուս ծայրում անվեհեր հոկտորը շարունակում եր խոսել.

«Իսկ ի՞նչ կարող ենք մենք անել:

¹ «Նոր խոսք», 1906 թ.:

² «Նոր խոսք» № 19:



ՌՍԴԲԿ Կովկասյան Միութեանական Կոմիտեն

Մենք նույնպես, նրանց որինսով, կապալարենք հա-
նուն ազատ, յերջանիկ կյանքի...»:

Վերջին բառերը դեռ չարտասանած, հռետորը կրծքից խոց-
վեց գնդակով: Գլորվելով ձախ կողքի վրա, նա այլևս վեր կենալ
չկարողացավ:

Ձենքի հարվածները տակ ցուցարարները ցրվեցին, բայց
նրանց հեղափոխական վողին և սպաքարը շարունակելու պատ-
քաստակամությունն ե՛լ ավելի ուժեղացավ:

1906 թվի ապրիլ ամիսն էր: Անդրկովկասի բոլոր ծայրերից
մարդիկ շտապում էին Ղազախ քաղաքի տոնավաճառը, վորը
տեղի յեր ունենում ուրբաթ օրերը:

Արևաշող սարդ առավոտ էր:

Ղազախի լայնարձակ դաշտերը նոր էյին ազատվել գիշերային
խավարից: Յեղները ղանդաղ քաշում էյին դյուղացիական սայլե-
րը: Մի ընդհանուր շղթա կազմած, ճռնչալով, Աղստաֆա դետի
յերկարությամբ մեկը մյուսի հետևից շարժվում էյին և
կանաչ մարդագետնում կանդ առնում դյուղացիական սայլերը:
Առջևում վեր եր խոյանում Դիդեանի հակայական ամբոցը, վորի
մոտ մի քանի ամիս առաջ թափվել էր այնքա՛ն արյուն, դոհվել
էյին այնքա՛ն մարդկային կյանքեր...

Այդ սայլերի վրա իրենց ընտանիքներով և «դուլքով» տեղա-
վորվել էյին Ն.-Բայազետի, Ախտայի, Դիլիշանի, Քոթլի, Քար-
վանսարայի, Ղարաքիլիսայի և այլ շրջանների դյուղացիները:

Դրանք դադթական դյուղացիներ էյին: Նրանք հռանում
էյին իրենց դյուղերից, վաշխառուների, խոշոր հողատերերի,
կալվածատերերի կողմից և ցարական ինքնակալության սպանիչ
արյունարբու քաղաքականությամբ ճնշված ու քայքայված:

Թե ո՞ւր էյին գնում նրանք, իրենք ել չգիտեյին: Մեկ բան
նրանք լավ գիտեյին, վոր հարկավոր ե աղատվել ճնշումից ու
չահադործումից, աղքատությունից ու իրավադրկությունից:

Դիմենք Կովկասի հողագործության և հողաշինարարության
գլխավոր վարչության տվյալներին: Կառավարիչ Կրիվոշեյինը
գրում ե.

«Հողագործական արդյունաբերությունը Կովկասում
գտնվում ե առայժմ իր նախկին վիճակում և, առաջադի-
մելու փոխարեն, հետադիմում ե: Դրանով իսկ հերքվում
ե այն սխալ ու չափազանցված կարծիքը, վորն առհասարակ

բակ դոյություն ունի Կովկասի, այդ «յերկնային դրախտի», մասին»:

Յերկար ճանապարհ անցնելուց հետո, դյուղացիական սայլերը կանդ առան Ղաղախի տոնավաճառի հրապարակում:

Այնտեղ, Ղաղախի տոնավաճառում, դուք կարող եյիք դեռնել ամեն աղղի մարդկանց, բոլոր դյուղերից ու քաղաքներից, դանադան սլոփեսիայի ու հայացքի տեր մարդկանց: Մակայն սյուրտեղ դործող յեռանդուն ու հեռատես մարդը դիտեր, թե վորտեղ և ում հետ ինչ սկսեք ե անել:

Տոնավաճառի աջ կողմում, այնտեղ, վորտեղ համալրված եյին դյուղացիներն իրենց ընտանիքներով ու սայլերով, խմբից մեծ բաղմություն: Միակեց բաղմաղդ միտինդը: Գյուղական սայլի վրայից խոսում եր սևաքարեցի մի յերիտասարդ:

«Ո՛ւր եք գնում դուք ձեր ընտանիքներով: Վերադարձե՛ք ձեր դյուղերը: Միայն միավորվելով դուք կարող եք ստեղծել անխորտակելի ուժ և կղառնաք հողի խիական տերը: Հողն այնտեղ սպասում ե այնպիսի աշխատավոր մարդկանց, ինչպիսին դուք եք: Յեկե՛ք միավորվենք և խլենք (բռնադրալենք) հողը կալվածատերեր՝ Իսթանդար-բեկից, Վեքելովից ու դրանց նման սղորակներից: Հողը մերն ե, նրանք չսկսեք ե հող ունենան»:

Յերիտասարդը նոր եր միայն սկսել իր կրակոտ ճառը, յերբ հարձակվեցին մի խումբ վոստիկաններ և ցրեցին ցուցարարներին, իսկ հոգևորին տարան վոստիկանական տեղամաս:

Այդ ցույց-միտինդն իր հեղափոխական ուժով լրջորեն վախեցրեց տեղական վոստիկանական չինովնիկներին: Գլուխները կորցրած, նրանք հեռադրեցին.

«Աղստաֆա, 21 ապրիլի: Կովկասի վոստիկանական

Վարչության պետին:

Սպանված են 23 բանվոր: Թուրքերը, միացած մի շարք հայկական դյուղերի դյուղացիներին հետ, հարձակվեցին Իսթանդար-բեկի կալվածքներին և պետական հողերի վրա: Դժվար ե դսպել ապստամբած դյուղացիներին:

Ողնության կարիք ենք դդում:

Ղաղախի գավառապետ՝ Առնոլդ»¹:

Հեռադրերը դեռ չեյին հասել վոստիկանական Վարչությանը, յերբ Գոթի, Սըռի, Ղոշղոթան, Կըրխի, Բայրամլի և այլ

դյուղերի աշխատավոր դյուղացիներն ապստամբության դրոշ բարձրացրին:

Հիշյալ դյուղերի աշխատավորները, Ղաղախի ս.-դ. կաղմակերսպության ղեկավարությամբ, ապստամբեցին միաժամանակ և դրաձեցին Հասան-բեկի կալվածքներն ու հողերը, վորոնք գտնվում եյին Ղոշղոթանի ու Բայրամլուի միջև:

Գյուղացիները մասսայաբար հարձակվեցին կառավարական սլահեստների, հողերի ու հիմնարկների վրա: Վախենալով աշխատավոր դյուղացիներին զինված ուժից, քահանա Ջաքար Ասլրեսյանը 1906 թվի ապրիլի 28-ին հայտնեց գավառապետ Առնոլդին, նահանգապետին և վորոնցով-Պաշկովին, թե արդեն յերդրդ անդամն ե, ինչ դյուղացիների զինված խմբերը հարձակվում են կալվածատեր Թիրաբովի, պետական հողերի ու դոյքի վրա: Տեղական տանուտերն ի վիճակի չե վորևե միջոց ձեռք առնելու ապստամբների դեմ: Գյուղերում տեղի յեն ունենում արտեմատիկ աղբարային անկարգություններ:

Քահանա Ջ. Ասլրեսյանը գրում եր, թե՝ «գավառում մոլեգնում ե սովը: Գյուղացիները տնտեսապես քայքայված են, ուստի դյուղերում շարունակվում են աղբարային անկարգությունները: Իջևանում դեռ դոյություն ունի դժգոհություն: Մեղ հարկավոր ե մեծ ողնություն»:

Վոստիկանական մի այլ ղեկուցադրի մեջ մենք կարդում ենք.

«Գանձակ: Նահանգապետին:

Ղաղախից, 13 մայիսի, 1906 թ.:

Այսօր Առնոլդի աղբարային մոտ մեծ խմբերով համալրվել եյին դյուղացիները և սպասում եյին կալվածատեր Իսթանդար-բեկին: Յեթե վոստիկանությունը միջամտած չլիներ, նրան կծեծեյին... Այդ բռնտի հետևանքով քաղաքի բոլոր խանութները փակվել եյին:

Գաղաքապետ...»:

Ծավալված բողբոջիկյան սլոպադանդայի ու աղիտացիայի շնորհիվ Շամչաղինի շրջանի դյուղացիներն ամբիլի ու ամբիլի եյին համախմբվում:

Ստալինյան սլոպիամացիաները լայնորեն մասսայականացնելու, բողբոջիկյան թերթերը տարածելու, ընկեր Ստալինի սլաղ, վորոշակի ու վոգեշնչող խոսքերը դյուղացիների լայն մասսաներին հասցնելու շնորհիվ Շամչաղինի շրջանի աշխատավորները բաղմիցս բարձրացնում եյին զինված ապստամբության դրոշ:

¹ Տե՛ս Բաղլի արխիվը, վոստիկանական դործ № 983:

Մի շարք դյուղերում (Թոռուղ, Նաուր և այլն) դյուղացիները բոլորտ հայտարարեցին տեղական իշխանություններին, հրաժարվեցին վճարել հարկերը և այլն:

Հենց այդ և վկայում փոստիկանական գործակալ Բորզակովի այդ ժամանակ գրված ինֆորմացիան:

«Թոռուղ կայարանի շուրջը գտնվող հայկական դյուղերի դյուղացիները բաղմիցս հարձակվում եյին կայարանի և Ալիևվի կալվածքի վրա: Վերջին անգամ, նկատի ունենալով դյուղացիներին բացահայտ սպառնալիքը, դինվորները կրակ բաց արին: Գյուղացիներին 9 մարդ սպանվել են և մի քանի մարդ վիրավորվել: Ձերբակալված և փոյլի դյուղացի Հաջի Բայրամ Ալի ողլին»¹:

Ստալինյան խոսքի թափանցող ուժի ազդեցության տակ, ս.՝դ. կաղմակերպությունների քրտնաջան ու յեռանդուն գործունեությունների շնորհիվ, Հայաստանի բոլոր շրջաններում ծավալվում էր հեղափոխական հուժկու շարժումը:


Ահա մի փաստաթուղթ ևս, վորը ցույց է տալիս, թե Հայաստանի աշխատավոր դյուղացիներն ինչպես ջերմորեն արձագանդեցին 1905 թվի ռուսական առաջին հեղափոխությանը.

«Գյուղացիները հարկեր չեն վճարում և սպառնում են ուժ գործադրել: Մ. Իսախանյանի, Կ. Իսկանդարյանի, Ս. Հաբիր-ողլու, Ա. Շիրին-ողլու և ուրիշների ղեկավարությամբ բնակչությունն ապստամբել էր, կտրականապես հայտարարելով, թե վոչ վոքի թույլ չի տա հարկ վճարել, թե մտադիր է սպանել հարկահավաքին ու հրկիզել նրա գույքն այնպես, ինչպես այդ արեցին Ռուսաստանում»²:

Կոտայքի շրջանի Արամուս դյուղի տանուտերն իր ղեկուցադրի մեջ գրում է, թե ինքն իր ողնականի հետ յեղել է Գեոկքլիսա դյուղում, հավաքել է դյուղացիներին, հայտարարել «նորին ազնվություն» հրամանը, բայց՝

«նրանք ղեմադրում եյին և հայտարարում, թե չեն ճանաչում հաշտարար միջնորդի հրամանը և չեն ցանկանում հարկ վճարել Կարաղաչեվին:

Ուստի, խոնարհարար խնդրում եմ ձերդ գերազանցությունը և հաղորդում եմ, վոր հնարավորություն չկա



Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Սովետի Կառավարության կողմից հրատարակված փոստիկանական գործակալ Բորզակովի գրված ինֆորմացիան

¹ Ղազարի արխիվ, փոստիկանական գործ. № 9—83:

² Կենտրոնական արխիվ, ֆ. 27, 1906 թ., № 27:

հարկ հաշվաքելու Կարաղաշեվի համար, մինչև վոր ձեռ-
հրամանով չզան յեսաուելն ու զաղախները...»¹:

Թե յերբեմն ինչով եր վերջանում «յեսաուել ու զաղախներ»
ուղարկելը, ցույց ե տալիս հետեյալ փաստը. Կոտայքի շրջանի
Պողնի դյուղի համայնքը հրաժարվել եր հարկեր վճարելուց և
դյուղից վռնդել եր հարկահաւաքին: Հարկերը վարչական կար-
գով դանձելու համար ուղարկվել եր զինված ուժ: Յեւ ահա՝

«դեռ զաղախները,—ասված ե արձանագրության մեջ,—
առաջին խորճերը չեյին հաշվել, յերբ ամբողջ դյուղը՝
տղամարդիկ, կանայք, աղմուկ բարձրացրին, քարերով ու
մահակներով հարձակվեցին նրանց վրա և զլխովին ջախ-
ջախեցին զաղախներին»²:

Չափազանց հետաքրքրական ե «սուրբ հայրերի» «զԹասիրտ»
վերաբերմունքը դեպի դյուղացիները: Ահա բաղմաթիվ փաստե-
րից մեկը—մի քաղվածք Եջմիածնի սինոդի որդարից.

«18 սեպտեմբերի 1909 թ., № 537:

Հայկական վսեմափայլ սինոդ Սուրբ Եջմիածնի: Լսե-
ցին վանքապատկան Մուղնի դյուղի համայնքի ողոստոսի
20-ի դիմումը, վորի մեջ հաղորդում են, վոր յերաշտի
հետեանքով յայտ տարի դրկվել են բերքից և առաջիկա աշ-
նանացանի համար սերմացու չունեն, ուստի խնդրում են
սինոդին՝ սուրբ դահի ամբարից փոխարինարար բաց Թող-
նել 20 խալվար³ հացահատիկ»:

Հրամայեցին—«Մուղնի դյուղի համայնքի խնդիրը
Թողնել անհետեանք»:

Եջմիածնի վանքը զլացալ դյուղացիներին փոխարինարար
բաց Թողնել 20 խալվար հացահատիկ, բայց դրա փոխարեն նա-
յուրաքանչյուր տարի նույն այդ դյուղացիներին վաճառում եր
հարյուրավոր խալվարներով հացահատիկ, վորը ձեռք եր բերվել
նույն այդ դյուղացիների քրտինքով:

Հայաստանի աշխատավոր դյուղացիների հերոսական պայ-
քարը 1904—1907 թ. թ. ժամանակաշրջանում ընթանում եր
Կովկասյան Միութենական Կոմիտեյի ղեկավարությամբ, վորին
դուրիս կանդնած եր ընկեր Ստալինը:

Այդ բոլորի մասին ընկ. Միսա Յիսակյան միանգամայն ար-

¹ Կենտրոնական արխիվ, ֆ. 27, 1906 թ., № 617, էջ 109:

² Կենտրոնական արխիվ, ֆոնդ 27, դ. № 746:

³ Խալվարը հավասար ե 30 փթի:

դարձրի կերպով նշում է ՌՍԴԲԿ 3-րդ համագումարում տված իր գեկուլցման մեջ, շեշտելով Լոռու և Շամշադնի գյուղացիներին հեղափոխական պայքարը:

«Թիֆլիսի նահանգի Բորչալիի և Գորու գավառներում շատ հաճախ տեղի էյին ունենում խոշոր տարերային բռնություն, վորոնք վերջին ժամանակներս հասնում էյին այն բանին, վոր գյուղացիները ղինված ղեմադրություն էյին ցույց տալիս իշխանություններին և հրաժարվում էյին ճանաչել այն:

Թիֆլիսի կոմիտեյի գերատեսչությանը յենթակա այլ շրջանները (այդ թվում նաև Յելիզավետպոլի նահանգը) ղրականություն և ուղարկվում վրացերեն ու հայերեն լեզուներով:

Նա (Կովկասյան Կոմիտեն—Ս. Հ.) կազմակերպում է պրոպագանդիստական խմբակներ և աղիտացիա յե մղում լայն մասսաների մեջ, հրավիրելով բազմամարդ միտինգներ (հարյուր-հազարավոր ու ավելի մարդիկ):

Հեղափոխականացված և քաղաքներում ու յերկաթուղային կայարաններում աղիտացիայի յենթարկված գյուղացիներն իրենք են պրոպագանդա անում: Հեղափոխության ավիճակելի ու ավելի առաջ է շարժվում ընդհուպ մինչև Կովկասյան լեռները և անցնում է Անդրկովկասի այն կողմը...»¹:

Անդրկովկասի գյուղացիների հեղափոխական շարժման մասին ընկ. Մ. Յիսակյայի հիշողություններից յերևում է, վոր ՌՍԴԲԿ 3-րդ համագումարը ղրադվել է նաև Հայաստանի գյուղացիական շարժամբ:

Դեռ ավելին:

ՌՍԴԲԿ 3-րդ համագումարը Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների մասին իր բանաձևի մեջ, վորը ղրել էր Վ. Ի. Լենինը, նշելով Կովկասի կյանքի սոցիալ-քաղաքական հատուկ պայմանները և ուրվադժեկով հետադա խնդիրները, միաժամանակ ղրում է.

...«ՌՍԴԲԿ III համագումարը Ռուսաստանի ղրտակից պրոլետարիատի անունից բոցավառ վողջույն է հղում Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը»...²:

Այդպես, հեղափոխության մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ, նրանց անդուլ հողատարության

շնորհիվ, աճում ու ծավալվում էր Անդրկովկասի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումը:

Սակայն 1905 թ. հեղափոխության մեջ չկար բանվորների և գյուղացիների մեջ ամուր դաշինք ցարիզմի դեմ մղվող պայքարում:

Գյուղացիները՝ դաշինք կնքելով բանվորների հետ ընդդեմ կալվածատերերի, դեռ չէյին հասկանում, վոր առանց ցարին տապալելու հնարավոր չէ տապալել կալվածատերերին:

Լենինն ասում էր՝

«... գյուղացիները գործում էյին չափազանց ցիրուցան, անկազմակերպ, վորչ բավականաչափ հարձակողական կերպով, և ղրանումն է կայանում հեղափոխության կրած պարտության արմատական պատճառներից մեկը»¹:

III

Հեղափոխական խոշոր շարժում սկսվեց նաև ցարական բանակում: Այդ տեսակետից բնորոշ են Ալեքսանդրապոլի, Յերեվանի և Ղարսի կայազորներում տեղի ունեցած իրադարձությունները: Ալեքսանդրապոլում 1905 թվին ստեղծվեց «ՌՍԴԲԿ ղինվորական խումբ», վորը ղեկավարում էր կայազորում կատարվող ամբողջ հեղափոխական աշխատանքը:

1905 թվին բոլշևիկյան «Пролетарий» թերթը լայնորեն լուսաբանում է Ալեքսանդրապոլի կայազորում տեղի ունեցող իրադարձությունները և հաղորդում է, վոր ՌՍԴԲԿ ղինվորական խմբի անդամները թիվը 150 հոգուց ավելի յե: ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի ղինվորական խումբը լույս էր ընծայում բոլշևիկյան պրոկլամացիաներ, կազմակերպում էր ղինվորական ցույցեր (որինակ, ղինվորների հայտնի գործադուլը 39-րդ հրետանային բրիգադայի 2-րդ մարտկոցում): Այդ ցույցերի ժամանակ լողունգներ էյին արձակվում՝ «Վորչի՛ պատերազմը», «Կեցցե՛ դավիճ հեղափոխությունը»:

Այդ աշխատանքի շնորհիվ ե՛լ ավելի յեր ամրապնդվում էր տերնացիոնալ դաշինքը զանազան ազգությունների ղինվորների միջև:

Այս տեսակետից ուշադրության արժանի յե հետևյալ փաստաթուղթը.

«Վոր ղինվորներն այժմ ել համակրում են ժողովրդին, յերևում է թեկուղ այն հասարակ ու ակնբախորեն պարզ

¹ Տե՛ս ՌՍԴԲԿ III համագումարի արձանագրությունները:

² Տե՛ս «Համկ(բ)կ-ն բանաձևերում», մաս I, էջ 52:

միաստից, վոր ապստամբությունը ճնշելու ժամանակ այդ-
պիսի փոքր տարածության վրա այդչափ խիտ մասսայի
մեջ արձակված համադարկերից կամ համադարկերով կրա-
կոցներից հաղթի միջանի մարդ էյին ընկնում սպանված
կամ վիրավոր: Դրանից հետևում է, վոր ղինվորների մե-
ծամասնությունը ղնդակներն ուղարկում է «կաթի» (այ-
սինքն՝ կրակում է ուղի մեջ), իսկ իրոք կրակում եր սրի-
կաների մի աննշան մաս, վորոնցից յերկու-յերեք հոգի
միշտ կգտնվի ամբողջ վաշտում¹:

Բազմաթիվ ղեպղերում զորքը հրաժարվում եր ապստամբ-
ներին կրակելուց:

Հեղափոխական բոլշևիկյան տրամադրությունները հատկա-
պես ուժեղանում են 1905 թվի վերջերին, յերբ ամբողջ Ռուսաս-
տանում սկսվում է հեղափոխական վերելքը:

Նոյեմբեր ամսին Ալեքսանդրապոլի կայազորում տեղի յեն
ունենում մի շարք դադտնի ժողովներ, վորոնք վերածվում են
ցույցերի: Այդ ցույցերի ժամանակ կոչ է արվում ղինված ապս-
տամբության դիմել, տապալել ցարական ինքնակալությունը:
Զինվորները միանում են յերկաթուղային կայարանի ու դեպոյի
բանվորների ցույցերին:

1905—1907 թվականներին խոշոր իրադարձություններ են
տեղի ունենում նաև Ղարսի ու Նոր-Բայազետի կայազորների
զինվորների մեջ:

1906 թվի հունիսի 29-ին ղինվորական մեծ ցույց է կազմա-
կերպվում Ղարսի «Սուրատսկի բաղարում»: Յուլյի համար
առիթ ծառայեց այն, վոր Վրաստանից Ղարս էյին ուղարկել Մին-
դերեական ղնդի հեղափոխական ապստամբ ղինվորներից 27 հոգի՝
ղնդակահարելու համար: Ինչպես Թիֆլիսի, այնպես և Ալեքսան-
դրապոլի ղինվորներն իրենց համերաշխությունն արտահայտեցին
ղնդակահարման դատապարտված հերոս-հեղափոխականներին
նկատմամբ և հրաժարվեցին նրանց վրա կրակելուց:

Ալեքսանդրապոլի կայազորում տեղի ունեցած հեղափոխական
հուզումների մասին Պետերբուրգում հրատարակվող «ՅՈՒՍ»
թերթը 1906 թվի նոյեմբերի 14-ի համարում գրում է.

«Ալեքսանդրապոլում տեղավորված զորքերի մեջ տեղի
յեն ունենում ուժեղ հուզումներ: Կազմակերպվում են մի-

տինդներ, վորտեղ քննարկվում են ժամանակակից ամենա-
հրատապ հարցերը:

Հունիսի 26-ին քաղաքում լուրեր տարածվեցին, թե
իբր Թիֆլիսից ղնդակահարության համար Ալեքսանդրա-
պոլ են փոխադրվել Մինդերեական ղնդի 27 ղինվոր, վորոնք
մեղադրվում են իշխանության դեմ ղինված դիմադրու-
թյան մեջ: Այդ լուրերը զորքի մեջ դժգոհություն առա-
ջացրին, վորը շուտով դրսևորվեց: Սապյորային գումար-
տակի առաջին ու յերկրորդ վաշտերը մարտական լիակա-
տար պատրաստությամբ անհապաղ դուրս յեկան զորանոց-
ներից՝ իրենց ընկերների ղնդակահարությանը խանդարելու
համար: Անհանդստացած հրամանատարությունը շտապ
միջոցներ ձեռք առավ «բունտը» ճնշելու համար: Կանչ-
վեցին ղրադուններ, Կարադինական հետևակ ղնդի միջա-
նի վաշտ, հրետանի: Սապյորները ղինաթափ արվեցին:
Կատարված են ձերբակալություններ: Հուզումներն ուժե-
ղանում են»:

Ղարսի կայազորի ղինվորները նույնպես հրաժարվեցին իրենց
յեղբայրների վրա կրակելուց: Յուլյի ժամանակ բոլշևիկ հե-
տորները ղինվորներին կոչ էյին անում չկրակել հեղափոխական
մինդերեցիների վրա, միանալ բանվորներին և դյուղացիներին պայ-
քարին, հողը խել կալվածատերերից ու հանձնել դյուղացիներին:
Զինվորներն «ուռա» բացականչություններով ծափահարում էյին
բոլշևիկ հետորներին և տարածում էյին բազմաթիվ կոչեր ու
պրոկլամացիաներ:

* *

Բանվորական շարժման աղղեցության տակ հեղափոխական
պայքարի յելան նաև սովորողներն ու ուսանողները: 1904—1905
թվերին ամբողջ Ռուսաստանում, հատկապես Մոսկվայում և Պե-
տերբուրգում ծավալված ուսանողական շարժման ակիքը հասավ
նաև մինչև Հայաստան, ցարական Ռուսաստանի այդ ամենահե-
ռավոր ծայրամասը: Յերևանում, Ալեքսանդրապոլում, Նոր-Բա-
յազետում, Գորիսում աշխատավոր խավերին պատկանող առա-
ջավոր ուսանողներն սկսում են ակտիվանալ, նրանց մեջ կատար-
վող աշխատանքն աշխուժանում է: Նրանք կազմակերպվում, կաղ-
մում են հեղափոխական խմբեր: 1904 թվի վերջին Յերևանում
ստեղծվում է սոցիալ-դեմոկրատական բջիջ, վորի ղեկավարն եր

¹ «Пролетарий», ՌՄԴԲԿ կենտրոնական օրգան, № 11, 9 օգոստոսի
1905 թ.:

Տոմսերի Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող բոլշևիկ Ալեքսանդր Մալխասյանը (մեռել է 1906 թվին)։ Այդ բլիշի մեջ մըտնում էին գիմնազիայի և այլ դպրոցների աշակերտները։

Մարքսիստական խմբակների թիվն ուսանողության մեջ ե'լ ավելի աճեց 1905—1906 թվականներին։ Այդպիսի խմբակներ կազմակերպվում են Յերևանի թեմական դպրոցում, Նշմիածնի սեմինարիայում և Ալեքսանդրապոլի ուսումնարաններում։ Այդ խմբակների անդամների մի մասը կապ էր պահպանում բանվորական կոլեկտիվների հետ, ոժանդակում էր բանվորների ինքնակրթությանը, ոգնում էր ՌՄԴԲԿ կազմակերպությանը՝ կոչերի ու թերթերի տարածման գործում։ Այդ խմբակների ղեկավարությամբ Յերևանի թեմական դպրոցում, գիմնազիայում և Նշմիածնի սեմինարիայում կազմակերպվում են աշակերտական դասադուլներ, վորոնք ուղղված էին դպրոցներում տիրող հոգևորական—վոստիկանական դաժան կարգերի դեմ, ուսուցման նացիոնալիստական սխոլաստիկ մեթոդների դեմ։ Թեմական դպրոցում, այսպես, դասադուլը շարունակվեց ամբողջ 2 ամիս ու 25 օր։

Անդրկովկասի բանվոր դասակարգը ուսական առաջին հեղափոխության շրջանում, Վ. Ի. Լենինի ղինակից Իոսիֆ Վխստրիոնովիչ Ստալինի ղեկավարությամբ, անցավ հեղափոխական պայքարի հսկայական դպրոց։

Վ. Ի. Լենինն արտասույր վրդեռությամբ էր խոսում ուսմեծ պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկի—Անդրկովկասի բանվոր դասակարգի հերոսական պայքարի և նրա բոցաշունչ ղեկավար ընկեր Ստալինի մասին։

Անդրկովկասի բանվոր դասակարգը, վորը մի ընդհանուր շղթա յեր կաղմում ուս պրոլետարիատի հերոսական պայքարի մեջ, ուսական առաջին հեղափոխության շրջանում պատմական հսկայական դեր խաղաց։ Պայքարի ու հաղթանակների այն պատմական ուղին, վորը կապված է կոմունիզմի մեծ ղեկակալ ընկեր Ստալինի անվան ու աշխատանքի հետ, ներկայացնում է ամենահարուստ հեղափոխական փորձ, վորով դաստիարակվում են սերունդները։

Ընկեր Ստալինը բացառիկ ուշադրություն էր նվիրում Հայաստանի հեղափոխական շարժմանը և, կապելով հայ ժողովրդի պայքարը ուս մեծ ժողովրդի հերոսական պայքարի հետ, մատնանշում էր, վոր հայ ժողովրդի ազատադրական պայքարը հա-



Ալավերդիի բանվորներն ուսումնասիրում են ընկեր Ստալինի «Ազրարային կարգի մասին» հոդվածը

Ջողությամբ կ'ստանալի միայն ռուսական պրոլետարիատի հաղթանակի հիման վրա:

Դեռ 1907 թվին, ամփոփելով Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին հեղափոխական շարժումները, ընկեր Ստալինը մատնանշում է, վոր հատկապես Ալավերդու բանվորները կայունության և արիության հիանալի որինակներ են ցույց տվել պայքարում:

Ընկեր Ստալինը գրում է.

«Վորպես յերրորդ հարց առաջադրեցին «ընտրությունները Բորչալում, Թելավում և այլ տեղերում»: Գլխավոր ուշադրությունը դրավեցին Բորչալի ընտրությունները:

«Կոլեկտիվի» ներկայացուցիչը Հայտարարեց, վոր Բորչալում վում ընտրել են յերկու պատգամավոր, բայց այդ ընտրությունները պետք է համարել անորինական, քանի վոր Բորչալում «չկա վոչ մի կազմակերպություն»: Իսկ Թելավը կարող է ուղարկել մեկ պատգամավոր, Գորին, Սաչուրին և Բորժոմը նույնպես կարող են ուղարկել մեկ պատգամավոր: Ինչո՞ւ: Վորովհետև այդ տեղերում գոյություն ունի կազմակերպություն: Յե՞րբ մենք կարող ենք ասել, վոր այս-ինչ տեղերում «գոյություն ունի կազմակերպություն»: Միայն այն ժամանակ, յերբ կազմակերպությունն ունի դրամարկդ և անդամները դրամ են մուծում: Իսկ Բորչալում, ասում եր նա, դրամ չեն հավաքում:

Այսպիսի «գեկուցում» եր տվել «կոլեկտիվի» «ներկայացուցիչը»:

Առարկողը նրան ասացուցում եր հակառակը: Նա ասում եր, վոր «գեկուցողը» հեռանում է իրականությունից», քանի վոր նրան լավ հայտնի յեր, թե Բորչալում վաղուց գոյություն ունի կազմակերպություն, վորը դեռ անցյալ տարվա հունվարին դեկտեմբրում եր Ալավերդու 4000 բանվորների գործադուլը: (Ընդգծումն իմն է—Ա. Հ.): Տաս ամիս դրանից առաջ «կոլեկտիվը» կնիք եր հանձնել Բորչալի կազմակերպությանը, վորպես կազմակերպության: Կովկասյան համագումարում (սեպտեմբերին) բոլորի համար պարզ եր Բորչալի կազմակերպության գոյությունն ու ընտրությունների անցկացնելու նրա իրավունքը, և համագումարը մեծ «սիստեմայի» արտահայտեց այն առթիվ, վոր միաժամանակ տեղյակ չեյին դարձրել Բորչալի կազմակերպությանը, յեթե վոչ նա կկարողանար ընտրությունների անցկացնել և պատգամավոր ուղարկել: Կովկասյան համագումարից հետո Բորչալի շրջանում յերկու անգամ տեղի յե ունեցել ս.—դ. կոն-

Ֆերենցիան, վարտեղ «կոլեկտիվը» յերկու անգամն եւ «գլուղական հանձնաժողովի» միջոցով ուղարկել եր իր ներկայացուցիչներին՝ ներկա գտնվելու համար... Ի՞նչ ե նշանակում այս բոլորը, յեթե վոչ այն, վոր «կոլեկտիվն» սկզբից հենց ընդունում եր ս. - գ. կազմակերպության դոյությունը Բորչալում: Հապա ինչո՞ւ յե նա այժմ ժխտում այդ: Վորովհետեւ Բորչալի կողմից ընտրված յերկու պատգամավորներն եւ բոլշևիկներ են, իսկ «կոլեկտիվը» մենչևիկյան ե: Ուստի, կարեոր ենք համարում ընտրել հանձնա- ժողով ե, քանի դեռ ուշ չե, տեղում հավաստիանալ, թե Բորչա- լիում կազմակերպության դոյություն ունի՞:

Այսպես եր ասում առարկողը:

Կոնֆերենցիան մերժեց հանձնաժողովի ընտրությունը (ակնե- բւաբար այն պատճառով, վոր վախեցալ ճշմարտությունից) ե հայտարարեց, վոր ինքը համաձայն ե Բորչալի ընտրություն- ները չեղյալ համարելու վերաբերյալ կոլեկտիվի բանաձևին:

Այսպես ե դրությունը:

Ակամայից հիշում ես Գուրիան, վորն այս տարի ունի 6000 անդամ ե համադումար ե ուղարկում 12 պատգամավոր: Հետա- քրքիր ե, չե՞, ընթերցող. Գուրիան, վորտեղ չկա վոչ մի դոր- ծարան, կունենա 12 պատգամավոր՝ մձուական ձայնով, իսկ Բոր- չալուն, վորտեղ կան պղնձի խոշոր դործարաններ, չպետք ե ունենա վոչ մի պատգամավոր:

Հետաքրքրական են նաև հետևյալ տվյալները:

Անցյալ տարվա համադումարի ժամանակ Գուրիայում հա- զիվ-հազ կար 800—900 անդամ (ունեյին 3 պատգամավոր—մեկը՝ 300-ից), այս տարի այնտեղ կա 6000 անդամ, այսինքն՝ համարյա 7 անդամ ավելի, այսինքն այնքան, վորքան չի աճել անդամների թիվը վոչ մի արդյունաբերության կենտրոնում:

Իսկ ի՞նչ ե նշանակում դա, յեթե վոչ այն, վոր մենչևիկները պատրաստ են սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցու- թյունը վերածել գլուղացիական կուսակցության, միայն թե ձեռք բերեն ավելի շատ «ձայներ»:

Անցյալ տարի Կովկասյան համադումարում Գուրիայի ներ- կայացուցիչ Կ. 2. —ն ասել եր, թե Գուրիայում հազիվ-հազ 300 անդամ կա, իսկ 7 ամսից հետո այդ 300 անդամները դար- ձան 6000:

Անցյալ տարի «Չվենի Յիտվրեբա» մենչևիկյան թերթը այսպես եր դրում Գուրիայում յեղած կուսակցության անդամներ

մասին՝ «Յերբ գլուղացիները հայտարարում են, վոր իրենք վոչ թե դեմոկրատներ են, այլ ս. - դեմոկրատներ, այդ անվիճելի ապացույց ե, վոր մեր աշխատանքը գլուղում անվանապես սո- ցիալ-դեմոկրատական ե, իսկ դործնականում՝ դեմոկրատական: Մենք պետք ե բացելուց խոստովանենք այդ... Յերկրորդ՝ մենք պետք ե ներկայիս գլուղական շարժման վրայից վերցնենք մեր դրոշը ե նրա փոխարեն բարձրացնենք դեմոկրատական դրոշը» (տե՛ս «Չվենի Յիտվրեբա» № 9):

Այո, անցյալ տարի մենչևիկներն այդպես եյին ասում դո- րիական «կուսակցության անդամներին» մասին, իսկ այս տարի այդ «դեմոկրատներին» հանդես են բերում իբրեւ սոց. - դեմ. կու- սակցության որենսդիրներ:

Յեւ դրանից հետո մեզ ասում են, թե՝ Բորչալի բանվոր- ները վոչ մի պատգամավոր չպետք ե ուղարկեն՝:

Բերված փաստաթուղթը լիակատար պարզորոշությամբ բնութագրում ե հեղափոխական շարժումը Հայաստանում: Այդ շարժման դնահատականը Խոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը տվել ե 1907 թվին: Այստեղից պարզորոշ կերպով յերևում ե այն ամուր ամենորյա կապը, վորին վոգեչնչում եր ընկեր Ստալինի ղեկավարությունը հայ ժողովրդի հերոսական պայքարի նկատ- մամբ:

Ռուսական առաջին հեղափոխության մեջ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, Լենինի լավագույն զինա- կից ընկեր Ստալինի ղեկավարությամբ, կազմակերպում, գլխա- վորում ե ուղղություն եյին տալիս Անդրկովկասի բանվորների ու գլուղացիների պայքարին՝ հանուն ինքնակալության տապալման, հանուն բանվոր դասակարգի ու գլուղացիության հեղափոխական դիկտատուրայի հաստատման:

Սկսվեցին ստոլիպինյան սև ռեակցիայի տարիները: Ճիշտ ե, ռուսական առաջին հեղափոխությունը վերջացավ պարտու- թյամբ, բայց նա մեր յերկրի պատմության մեջ խաղաց հսկա- յական դեր:

Զինված լինելով ռուսական առաջին հեղափոխության հա- րուստ փորձով, Ռուսաստանի սրբուհետարիատը Լենինի—Ստալի- նի ղեկավարությամբ վերջնականապես հաղթանակեց 1917 թվին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության հերոսա- կան մարտերում:

¹ «Իրո» թերթ, № 12, շաբաթ, 24 մարտի 1907 թ., էջ 1—2:

1905—1907 թ. թ. հեղափոխութիւնը ցույց տվեց, Վոր բո-
լոր կուսակցութիւններէց միայն մեկ կուսակցութիւն—բոլշևիկ-
ներէ կուսակցութիւնն է վարում հեղափոխական ճիշտ տակտի-
կա, Վորը լիովին համապատասխանում է բանվոր դասակարգի և
գյուղացիութեան շահերին:

ԳԼՈՒԽ III

ՊԱՅՔԱՐ ԸՆԴԴԵՄ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ, ԴԱՇՆԱԿՆԵՐԻ,
ՍՊԵՏԻՖԻԿՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՌԵԱԿՏԻՈՆ ՈՒԺԵՐԻ

Ռուսական առաջին հեղափոխութեան ժամանակաշրջանում Անդրկովկասի բանվորները և գյուղացիները, սերտ դաշն կնքած, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ, պայքար ելին մղում աղա-տութեան համար:

Անդրկովկասի սրբաշնորհաբար հերոսական պայքարը, վորը գլխավորում և կազմակերպում եր բոլշևիկյան կուսակցութեանը, պատմութեան մեջ մտալ վորպէս մի պայծառ, հոգիւն պայքար, վորով մենք հիշալի կարող ենք պարծենալ:

Յարական խնդրակցութեանը ժամանակին ամենամոտոք մի-ջոցներին յե գլխի՝ բանվորութեան հեղափոխական շարժման վե-րելքը կանխելու համար, սակայն վոչ մի արդյունքի չի հասել և չեր ել կարող հասնել, վորովհետեւ Ռուսաստանի սրբաշնորհա-տի պայքարը ղեկավարել են հեղափոխութեան մեծ նախաձեռններ Լենինը և Ստալինը:

Հեղափոխութեան թշնամիները, իրենց վերջին ջանքը դո-ծադրելով, դաշն կնքեցին բուրժուազիայի և ամեն տեսակ ռեակ-ցիոն տարրերի հետ, վորպէսզի խեղդեն բանվորներին և գյուղա-ցիներին հեղափոխական պայքարը. բայց այդ չհաջողվեց նրանց:

Հեղափոխութեան ամենատոք թշնամիները՝ մենչևիկները, տրոցիստները, դաշնակները, Ֆեդերալիստները, նացիոնալ-ուկ-լոնիստները, ուղղակի խաբեբայութեան և դավաճանութեան ճա-նապարհը բռնեցին, սակայն նրանց ևս չհաջողվեց դադարեցնել սրբաշնորհաբար հեղափոխական պայքարը:

Ընկեր Ստալինը բանվորներին և գյուղացիներին անդուլ կեր-պով բացատրում եր մենչևիկի, դաշնակցութեան ու հակահեղա-փոխական այլ կուսակցութեաններին ռեակցիոն ելութեանը և անողոք պայքար եր ծավալում նրանց՝ վորպէս բոլշևիկի դը-խալոր թշնամիներին՝ դեմ:

«ՌԴԲԿ Լոնդոնի համագումարը» հոգւածում ընկեր Ստալին-

ներ մերկացնում և ջախջախում եր հեղափոխութեան մենչեիկյան լիբերալ-բուրժուական «սխեման»:

Նույն հոգւածում ընկեր Ստալինը զարգացնում եր բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան լենինյան թեորիան:

Պատմութեանը հայտնի յե, թե ինչպէս

«Ընկեր Ստալինը պայքար է ծավալում մասսայական բանվորական կազմակերպութեան համար և խիստ փնտաւատութեան է յենքարկում դաշնակցների բռնած դիրքը, վորոնք պահանջում էին կուսակցական, ըստ էութեան ազգային, արհեստակցական միութեաններ»¹:

Ընկեր Ստալինը Անդրկովկասի բուլչեիկներէ, բանվորներէ և դյուղացիներէ առանձնապէս համառորեն պահանջում եր սրել պայքարը դաշնակցութեան դեմ, վորն աշխատում է շեղել պրոլետարիատի ուժերը հեղափոխական պայքարէ և դրադեցնել նրանց նացիոնալիստական հարցերով:

«Արհեստակցական միութեանները Թիֆլիսում» հոգւածի մեջ ընկեր Ստալինը գրում է.

«Ի՞նչ է նշանակում «կուսակցական արհեստակցական միութեաններ»»: Յեւ պատասխանում է.

«Այդ, նախ և առաջ, նշանակում է, վոր դանազան կուսակցութեաններն անդամները պետք է միանան, կադմեն դանազան միութեաններ... Յեղեթախտները՝ առանձին արհեստակցական միութեան, դաշնակցականները՝ առանձին, վրացիները՝ առանձին, հայերը՝ առանձին և այլն: Մինչդեռ բոլոր դործարանատերերը միանում են, անկախ իրենց քաղաքական համոզմունքներից, մի միութեան են կազմում, դաշնակցականները մեզ խորհուրդ են տալիս առանձին խմբերի բաժանվել և այդպիսով ջլատել մեր միասնութեանը»:

Նույն հոգւածում ընկեր Ստալինը ցույց է տալիս, թե կուսակցական-արհեստակցական միութեանները փոս են փորում դիտակից և վոչ-դիտակից բանվորների միջև:

Ընկեր Ստալինը հանդամանորեն պարզաբանեց, վոր «կան այնպիսի բանվորներ, վորոնք վոչ մի կուսակցութեան չեն պատկանում... Մի՞թե հարկավոր չէ նրանց ներգրավել: Յեւ ահա, փոխանակ նրանց ևս ներգրավելու, դաշնակցականները փակում

¹ Լ. Բեքիա, «Անդրկովկասի բուլչեիկյան կազմակերպութեան պատմութեան հարցի շուրջը», էջ 71:

են նրանց առջև արհեստակցական միութեանների դռները, խրտնեցնում են նրանց, ջարդում են դիտակից և անդիտակից բանվորների միջև դռնվող կամուրջը և դրանով իսկ զգալիորեն թուլացնում են բանվորների միասնութեանը»:

Անողորմ սրայբար ծավալելով դաշնակցների դեմ, ընկեր Ստալինն իր մի շարք հոգւածներում՝ «Անկախականներէ» կուսակցութեանը և սոցիալ-դեմոկրատիան», «Դասակարգերի պայքարը» և այլն (վորոնք տպագրվել են Ի. Բեստշիլիի ստորագրութեամբ 1906 թ.) հիմնավորեց, թե ինչու անհրաժեշտ է կուսակցական ամուր դեկավարութեան արհեստակցական միութեանների նկատմամբ:

1903 թ. Ժընեւում (Շվեյցարիա) Լենինի ղեկավարութեամբ ՌՄԴԲԿ Կի-ին կից հիմնվում է «Սոցիալ-դեմոկրատական հրատարակչութեան», վորին կից կազմակերպվում է հայերեն և վրացերեն լեզուներով ս.-դ. կուսակցական դրականութեան հրատարակչութեան Անդրկովկասյան սեկցիա: Այդ սեկցիան իր հերթին հրատարակեց Մարքսի—Ենգելսի աշխատութեանները և մարքսիստական այլ դրականութեան հայերեն ու վրացերեն լեզուներով:

1903—1904 թվականների շրջանում հայերեն, վրացերեն և այլ լեզուներով հրատարակվեցին նաև «Ծանուցում ՌՄԴԲԿ II համագումարը հրավիրելու մասին», «ՌՄԴԲԿ ծրագիրը՝ ընդունված II համագումարի կողմից», Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» և այլ գրքեր ու բրոշյուրներ:

1904 թվականին հայերեն և վրացերեն լեզուներով ս.-դ. կուսակցական դրականութեան հրատարակչութեան Անդրկովկասյան սեկցիան, անձամբ ընկեր Լենինի ղեկավարութեամբ, առաջին անգամ հայերեն լեզվով հրատարակում է «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստը»:

«Մանիֆեստը» թարգմանել եր Լենինի—Ստալինի աշակերտ Ստ. Ծահումյանը: 1904 թվականին «Մանիֆեստը» հայերեն լեզվով առաջին անգամ լրիվ հրատարակելը քաղաքական, դաստիարակչական և հեղափոխական հսկայական նշանակութեան ունեցավ Հայաստանի բանվորների և դյուղացիների համար այն պայքարում, վոր մղում էին նրանք ցարկովի դեմ՝ կապիտալիստական կարգերը տապալելու համար, պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու համար՝ հանուն կոմունիզմի վերջնական հաղթանակի:

«Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» հայերեն առաջին հրատարակութիւնը 1904 թվականին պատմական խոշոր դեր խաղաց Հայաստանում մարքսիստական մտքի դարգացման համար:

«Մանիֆեստի» հայերեն թարգմանութեան հրատարակման պատմութիւնը ցույց է տալիս, Վոր դեռ 1897 թվականից փորձեր են յեղել այդ աշխատութիւնը թարգմանելու:

«Մանիֆեստի» հայ թարգմանչին Յնդեւսի դրած պատմական նամակից մեզ հայտնի յե դառնում, Վոր «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» թարգմանիչ Աթաբեկյանը, աշխատութեան հրատարակման կապակցութեամբ, դիմելով Յնդեւսին, խնդրել է թարգմանութեան համար առաջարկներ դրել:

Սակայն Յնդեւսը, ծանոթանալով թարգմանչի նամակի բուրժուական-նացիրոնալիստական բովանդակութեանը, կտրականապէս հրաժարվում է առաջարկներ դրելուց:

Հանճարեղ Յնդեւսը դիտել է խորապէս համոզված էր, Վոր այդպիսի բուրժուական-նացիրոնալիստական հրատարակչները «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» ու նրա առաջարկները կողտադործեն իրենց նացիրոնալիստական, բուրժուական շահերի համար:

Յնդեւսն ուղղակի դրում է, թե «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» այդ տեսակ հրատարակչները նույնիսկ կարող են նրա մտքերը դիտակցարար հրատարակել խեղաթյուրված ձևով: Ֆրիդրիխ Յնդեւսը կատարելապէս իրավացի յեր այդ հարցում, Վորովհետեւ (ինչպէս ավելի մանրամասնորեն պարզվեց հետագայում) «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» 1894 թվականի հայ թարգմանիչներից մեկն է յեղել ադնվականի Վորդի, նացիրոնալիստ, հետադայում կադետ և Պետական դոմայի անդամ (1907 թ.) Աթաբեկյանը, իսկ թարգմանութեան գործում Աթաբեկյանին ողնող մյուս թարգմանիչն է յեղել դաշնակ, հետադայում Դաշնակցութեան լիդեր, մարքսիզմի վոխերիմ թշնամի Միքայել Վարանդյանը:

Նրանք, մարքսիստի դիմակի տակ, ուղում էին խեղաթյուրել Մարքսի-Ենդեւսի հանճարեղ ստեղծագործութիւնը՝ «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստը» ու Յնդեւսի առաջարկները և ողտադործել դրանք իրենց նացիրոնալիստական նպատակներով:

Մենք մատնանշեցինք, Վոր 1904 թվականին Լենինի ղեկավարութեամբ հայերեն հրատարակվել էր «Մանիֆեստի» լրիվ թարգմա-

նութիւնը, սակայն ժողովրդի մերկացված թշնամի Ս. Կասյանը, կեղծելով այդ հայտնի պատմական փաստը («Մանիֆեստի» հրատարակումը 1904 թ.), դրում է, թե «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» հայերեն թարգմանութիւնը առաջին անգամ հրատարակվել է 1906 թվականին, ընդմիջ Ս. Կասյանը մի կողմից դիտալորյալ կերպով լուծութեան է մատնում Լենինի դերը հրատարակութիւնը ղեկավարելու գործում, և մյուս կողմից Վորդի խոսք չի ասում այն հսկայական աշխատանքի մասին, Վոր կատարել էր այդ ասպարեղում պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը, ինչպէս և Վորինչ չի ասում նրա աշակերտ Ստ. Շահումյանի աշխատանքի մասին:

Կեղծելով պատմական այդ հայտնի փաստը, հակահեղափոխական Ս. Կասյանը մաքսանենդութիւն էր անում և աշխատում էր թաղցնել այն հսկայական դերը, Վոր կատարել են պրոլետարիատի հանճարեղ առաջնորդներ Լենինը և Ստալինը՝ մարքսիզմի դադալարները հայ աշխատավորութեան լայն խավերի մեջ տարածելու գործում:

Հակահեղափոխական, տրոցկիստական, դաշնակ-սպեցիֆիկ-նացիրոնալիստական մենչևիկյան վիժվածքները փորձում էին «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստը» թարգմանելու և հրատարակելու առաջին փորձերը վերագրել հակահեղափոխական հնչակյաններին, մենչևիկներին, Վորոնք իրենց դավաճանական ստոր աշխատանքով փորձում էին կեղծել մարքսիզմը, կատաղի պայքար մղելով մարքսիզմ-լենինիզմի դեմ:

Այդ հակահեղափոխական տարրերը և Անդրկովկասի ժողովուրդների դրականութեան ու հայ դրականութեան Լենինյան բուլչևիկյան պատմութիւնը կեղծողները, 1904 թվականին «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստը» հայերեն հրատարակվելու կապակցութեամբ, առաջ էին քաշում այն հակահեղափոխական տեսակետը, թե իբր բուլչևիկները և մենչևիկները 1903-1904 թվականներին աշխատել և պայքարել են միասին, ձեռք ձեռքի տված:

Այս և հակահեղափոխական այլ պնդումներ ընդհանուր վորինչ չունեն բուլչևիկյան պատմութեան հարցերի և «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» հայերեն հրատարակութեան պատմութեան հետ: Բուլչևիկները, Լենինի դիտալորութեամբ, միշտ և ամենուրեք անհաշտ պայքար են մղել մենչևիկներին դեմ, բանվոր դասակարգի մյուս բոլոր թշնամիների դեմ:

«Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» և մարքսիզմի վրասկիները այլ աշխատութիւնները մինչհոկտեմբերյան հայերեն հրատարակութիւնները կապակցութեամբ. դրականութեան մեջ տեղ են գտել նաև հակամարքսիստական այն տեսակետը, թե հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնից առաջ, բացի Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» գրքից, մարքսիզմի վրասկիները հայերեն այլ հրատարակութիւններ չեն յեղել: Դրանով իսկ փորձ են արել հերքելու Հայաստանում մարքսիստական մտքի տարածման փաստը:

Անվիճելի յե այն փաստը, Վոր 1904—07 թվականներին, «Կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» հայերեն հրատարակման հետմիտին, հայերեն լեզվով հրատարակվել են նաև Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի մի շարք աշխատութիւնները և այդ մարքսիստական դրականութիւնը լայնորեն տարածվել է Հայաստանում:

Այդպես ուրեմն, ուսական առաջին հեղափոխութեան շրջանում Անդրկովկասի բանվորները և գյուղացիները, բոլշևիկները կուսակցութեան ղեկավարութեամբ, ամբողջովում և կոփովում ելին, պայքար մղելով ընդդէմ մենշևիկներին, դաշնակներին և ռեսկին, հակահեղափոխական այլ ուժերին:

Հայաստանի ս.—դ. կազմակերպութիւնները, ընկեր Ստալինի գլխավորութեամբ, ջանքատէր հարվածներ ելին հասցնում դաշնակներին, սպեցիֆիկներին և այլ հակահեղափոխական ուժերին:

Բորչավի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն, ընկեր Ստալինի ցուցումներով զինված, աշխատավորներին պարզաբանում էր դաշնակների հակահեղափոխական ելութիւնը: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնները փաստական տվյալներով, հանդամանորեն ցույց ելին տալիս, թե ինչպէս Դաշնակցութիւնն ամեն տեսակ միջոցների յե դիմում Հայաստանի հեղափոխական շարժումը խեղաթյուրելու համար:

Բերենք Բորչավի ս.—դ. կոմիտեյի կողմից բանվորներին և գյուղացիներին ուղղված կոչի այն մասը, վորտեղ խոսվում է դաշնակների հակահեղափոխական դործունեյութեան մասին:

Բորչավի ս.—դ. կոմիտեն իր կոչի մեջ գրում է՝

«Յեմ ի՞նչ, յերբ Գուրիայի և Ռուսաստանի գյուղացիները բոյկոտ յեն յենթարկում կալվածատերերին, հրաժարվում են ինքնակալ կառավարութեանն ու կալվածատերերին հարկ վճարելուց, այդ նույն պահին մեզ մոտ

Բորչավում, այսպես կոչված «դաշնակցութիւն» կուսակցութեան «կոմիտեները»՝ բողոքացած վաշխառուներից և անպիտան մարդկանցից, քերթում են խեղճ գյուղացու կաշին, պահանջում են, վոր նա անպայման հարկեր վճարի կալվածատերերին և ինքնակալ կառավարութեանը: Յեթե աղքատ գյուղացին վճարելու միջոց չունի, ծախում են նրա վերջին գույքը կամ հանձնում են վաշխառուին»:

Դաշնակցական կուսակցութիւնն իր հիմնադրման օրից միշտ էլ հայ ժողովրդի ամենափոխերիմ թշնամին է յեղել:

Նա հալածում, տանջում էր Հայաստանի աշխատավորներին, գրկում էր նրանց ամեն տեսակ իրավունքներից:

Ահա թե ինչու մեր բանվորները, գյուղացիները, մեր ինտելիգենցիան, խորը դրմանքով են արտասանում դաշնակցութիւնը բառը:

Դաշնակցութիւն կուսակցութիւնը ցարական պահնորդական բաժնի դործակալն էր, նա կատարում էր ժանդարմական վոստիկանութեան դեր և խեղդում էր աշխատավորներին:

Ահա թե սեհարյուրյակային միևիտր դահլճ Ստոլիպինն ինչ էր գրում կոմս Վորոնցով-Դաշկովին դաշնակցութիւն կուսակցութեան մասին.

«Դաշնակցութիւն կուսակցութիւնը... իր վրա յե վերցրել վոստիկանական ֆունկցիաները... Դաշնակցութեան կոմիտեն փաստորեն տիրապետել է դատական ու վարչական իշխանութեանը. հալածելով զգալի դրամական միջոցներ, գնել է զենք, սարքավորել է իր արհեստանոցներն ու լաբորատորիաները՝ ուսմբեր սրտորաստելու համար, ստեղծել է իր բանտերը և դործադրում է ազատազրկումն ու դրամական գանձումները: Հիշյալ կազմակերպութիւնը յերկրամասում դործում է բացելբաց, ճանաչված լինելով իշխանութիւնների կողմից, վորոնց վորոշ ներկայացուցիչներն առանձին հարցերի վերաբերյալ բանակցութիւնների մեջ են մտնում դաշնակցութեան հետ: Այդ կազմակերպութեան անդամները յերբեմն փոխարինում են վոստիկանութեանը»¹:

Իր հերթին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Ստոլիպինին ուղարկած նամակի մեջ այսպես էր բնութագրում «դաշնակցութիւն» կուսակցութեան դործունեյութիւնը.

«Այդ ժամանակաշրջանում «դաշնակցութիւն» կազմակերպ-

¹ Նամակը գտնված է փոխարքայի գրասենյակին կից հատուկ բաժնի նախկին վարիչի թղթերի միջից:

պությունը հատկապես զեկալար աղղեցություն եր ձեռք բերել
Բաղու քաղաքում՝ հայ-թուրքական անկարգություններից և
1905—1906 թ. թ. խառը ժամանակաշրջանից հետո: Դա բացա-
րովում է նրանով, վոր այն ժամանակ հայ բնակչության առա-
վել աղղեցիկ և հարուստ մասը կաղմակերպության մեջ տեսնում
եր իր զինված պահպանությունն ընդդեմ մուսուլմանների ու
հեղափոխության ծնունդը հանդիսացող անարխիստական կաղմա-
կերպությունները և դաշնակցականներին լայնորեն աջակցում եր
նյութական միջոցներով, վորը չնորհիվ վերջիններս հիանալի
զինված եյին. բացի իրենց անձնավորության պահպանումից,
առավել հարուստ հայերը դաշնակցականներին ոգտադրծում
եյին իրենց գույքը և ունեցվածքային շահերը պահպանելու հա-
մար. այսպես, որինակ, պատահում եր, վոր դաշնակցականները
նալթահանքերում սպառնալիքների միջոցով դադարեցնում եյին
գործադուլները...»¹:

Ռուսական հեղափոխության շրջանում Հայաստանի բանվոր-
ների և աշխատավոր դյուղացիության հեղափոխական շարժումը
տեղի յեր ունենում հետևյալ լողուններով՝

«Կորչի՛ ցարիզմը», «Կորչի՛ դաշնակցությունը», «Կեցցե՛
դեմոկրատական հանրապետությունը»:

Աշխատավորները դիտակցում եյին, վոր «Հայաստանի
ազատագրումը կարող է տեղի ունենալ միմիայն ռուսա-
կան ցարիզմի տապալման որը»²:

Դաշնակները հայ ժողովրդի արյունն եյին խմում: Ս. Սպան-
դարյանի արտահայտությամբ՝

«Դաշնակները հայ կյանքի ցեցերն եյին, նրանք
ամենամաքուր շահագործողներ և կողոպտիչներ եյին»:

Ս. Սպանդարյանը, բոլշևիկին հատուկ խստությամբ և հաս-
տատակամությամբ, բացահայտեց և մերկացրեց դաշնակ-
ների կողոպտիչ քաղաքականությունը:

«Կայծ» թերթի 1906 թ. 1-ին համարի «Մեր որդանը» վերնա-
գրով առաջնորդողում Ստ. Շահումյանը ջախջախիչ հարված
հասցրեց դաշնակցություն կուսակցությանը:

Խոսելով Հայաստանի բանվորների և դյուղացիների հեղա-
փոխական պայքարի մերձավորագույն խնդիրները մասին,

¹ «Красный архив» Ժողնալ, հ. 34-րդ, էջ 206:

² Ենգելս, տե՛ս «Պրոլետարիատի կռիվ» Թերթը, 1903 թ., № № 2—3:

Ս. Սպանդարյանը չափազանց անհրաժեշտ է համարում ամենա-
անողորմ պայքար ծավալել դաշնակները դեմ:

Նա դրում է.

«Կարծես ամբողջ աշխարհը չդիտե, վոր այդ կուսակ-
ցությունը (դաշնակցությունը—Ս. Հ.), իր ամբողջ միլի-
տարիզմով, իր վրստիկանությամբ, իր բանտերով, իր դա-
տարաններով, իր բռնություններով ինչ-վոր սարսուցու-
ցիչ, անտանելի, դժոխային դրություն ստեղծեց դժբախտ
հայկական միջավայրում...»¹:

Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը, ընկեր Ստալինի դեկա-
վարությամբ, հսկայական պայքար ծավալեցին ընդդեմ դաշնակ-
ների, սպեցիֆիկների, բունդականների և ռեակցիոն այլ ուժերի:

Ընկեր Լենինը և ընկեր Ստալինը միշտ սրել և զլխավորել
են դաշնակները ու մենչևիկները դեմ մղվող պայքարը:

1905 թվականին սպեցիֆիկները վործում եյին մասնակցել
Համառուսական սոցիալ-դեմոկրատական կոնֆերենցիային, վոր-
պես Հայաստանի բանվոր դատակարգի «ներկայացուցիչներ»:

Լենինը կտրականապես առաքելում եր դրան:

1905 թ. սեպտեմբերի 7-ին բոլշևիկները Կենտրոնական Կո-
միտեյի անդամներին ուղղած իր նամակում, խոսելով սպեցի-
ֆիկների մասին, Լենինը դրում է.

«Խիստ դուռացնում եմ «Հայկական սոցիալ-դեմոկրա-
տական ֆեդերացիային» նկատմամբ: Յեթե դուք համա-
ձայնել եք, վոր նա մասնակցի կոնֆերենցիային, ապա մա-
կառագրական սխալ եք գործել, վորն ինչ գնով ել լինի
պետք է ուղղել: Նրանք Ժընևի մի բուռ կաղմալուծիչներ
են, վորոնք այստեղ ամենադատարկ բաներ են հրատարա-
կում, առանց վորևե լուրջ կապ ունենալու Կովկասում:
Դրանք բունդական վիժվածքներ են, ուրիշ վոչինչ, վոր
հնարվել է հատկապես կովկասյան բունդիզմին սնունդ տա-
լու համար: Յեթե դուք այդ մարդկանց ռուսական կոնֆե-
րենցիան թողնեք, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող
կաղմակերպությունների կոնֆերենցիան, դուք սոսկալի
կերպով կխայտառակվեք: Կովկասյան ընկերները բոլորն ել
դեմ են կաղմալուծիչ դրականադետների այդ շայկային
(այդ յես դիտեմ շատերից): Դուք առաջ կբերեք Կովկասի
բողոքները միայն և «միացման» փոխարեն՝ նոր սկսկա:

¹ Ս. Սպանդարյան, «Կայծ», 1906 թ. № 31:

Ներեցե՛ք, ինչպե՞ս կարելի չե անտեսել Կովկասյան Միությունը, Ռուսաստանում աշխատող անթիվ մարդկանց, և մտերմանա՛լ ժընեի ճահճի տակաճեններին հետ: Արտասովա-լից աղերսում եմ՝ մի՛ անեք այդ բանը»¹:

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, ղեկաված Լենինի այդ ցուցումներով, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, ջախջախում էին սպեցիֆիկներին, դաշնակներին, հնչակյաններին, մենչևիկներին:

Հայ ժողովրդի յերգվյալ թշնամին եր նաև Հնչակյան կուսակցությունը, Վորը վորձում եր նացիոնալիստական իդեոլոգիա սերմանել ժողովրդի մեջ:

Բոլշևիկյան կազմակերպությունները, ընկեր Ստալինի գլխա-վորությամբ, ջախջախեցին հնչակյանների «ճյուղերը» և «յենթա-ճյուղերը»:

Պայքար մղելով մենչևիկներին, դաշնակներին, սպեցիֆիկներին դեմ, ընկեր Ստալինը պաշտպանում, հիմնավորում և սրբապա-զանդա յեր անում լենինյան հեղափոխական թեորիան:

Ընկեր Ստալինը, Կովկասից դրած «Նացիոնալիզմի ճանապարհ-հին» նամակում, ասում է.

«Կովկասի կազմակերպություններն իրենց հրապարակ դալու հենց սկզբից (90-ական թվականների սկիզբը) խիստ ինտերնացիոնալ բնույթ են կրել: Թշնամիները դեմ միա-համուռ պայքար մղող վրացի, ռուս, հայ և մուսուլման բանվորների միասնական կազմակերպություն—այս եր կուսակցական կյանքի պատկերը... 1902 թվականին, կովկասյան (իրականում Անդրկովկասյան) ս.-դ. կազմակերպությունների առաջին հիմնադիր համագումարում, վորը Կովկասյան Միության հիմքը դրեց, նորից հուշակվեց կազմա-կերպության կառուցման ինտերնացիոնալ սկզբունքը, վոր-պես միակ ճիշտը: Այդ ժամանակից ի վեր Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան աճում է նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում: Վրացական ս.-դեմոկրատները պայքարում էին «իրենց» նացիոնալիստների դեմ, նացիոնալ-դեմոկրատների և ֆեդերալիստների դեմ, հայ սոց.—դեմոկրատ-ները՝ «իրենց» դաշնակցականների դեմ, մուսուլմանա-կանները՝ պանիսլամականների դեմ: Յեվ նրանց դեմ մղ-վող պայքարում ընդարձակում ու ամրապնդում եր իր

կազմակերպությունները Կովկասյան սոցիալ-դեմոկրա-տիան...»¹:

1904 թվին «Պրոլետարիատի բրձուլա» (Պրոլետարիատի կոիվ) թերթում լույս տեսավ ընկեր Ստալինի «Սոցիալ-դեմոկրատիան ինչպես և հասկանում ազգային հարցը» մեծապույն նշանակութուն ունեցող հոդվածը:

Այդ հոդվածում ընկեր Ստալինը մատնացույց է անում, վոր պրոլետարիատի հանդես դալու հետ միասին նրա համար «ազգա-յին հարցը» նոր ձևով ու բովանդակությամբ է դրվում:

«Պայքարի ասպարեղ ի՞նչալ,—ասում է ընկեր Ստալինը,—նոր դասակարգը, պրոլետարիատը,—և նրա հետ միասին ծագեց նոր «ազգային հարցը», պրոլետարիատի «ազգային հարցը»:

Վորչափով պրոլետարիատը տարբերվում է աղնվականու-թյունից ու բուրժուազիայից, նույն չափով էլ պրոլետարիատի առաջ քաշած «ազգային հարցը» տարբերվում է աղնվականության ու բուրժուազիայի «ազգային հարցից»:

Ընկեր Ստալինը «Սոցիալ-դեմոկրատիան ինչպես և հասկա-նում ազգային հարցը» խոչորապույն նշանակութուն ունեցող այդ ծրագրային հոդվածում պարզաբանում է, վոր պրոլետարիա-տի հաղթանակի համար անհրաժեշտ է բոլոր բանվորների միա-ցումն առանց ազգային խտրության: Խոսելով ռուսական պրոլե-տարիատի հաղթանակի պայմանների ու շահերի մասին, ընկեր Ստալինը դրում է.

«Պարզ է, վոր ազգային միջնորմների կործանումը և ռուսական, վրացական, հայկական, լեհական, հրեական և մյուս պրոլետարների սերտ համախմբումը հանդիսանում է Ռուսաստանյան պրոլետարիատի հաղթանակի անհրա-ժեշտ պայմանը: Սրանք են ռուսաստանյան պրոլետարիա-տի շահերը»²:

Այդ նույն հոդվածում ընկեր Ստալինը հանգամանորեն խոսում է «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակեր-պության» «մանիֆեստի» և առհասարակ նրա էություն մասին: Ընկեր Ստալինը ցույց է տալիս, վոր ինչպես բոլոր ֆեդերալիստ-սոցիալ-դեմոկրատները, այնպես և «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը», պնդում են, վոր պետք է բաժանվել առանձին ազգային կուսակցությունների և ստեղծել

¹ ՏԼՍ «Սոց.—դեմոկրատ», № 13, 1913 թ.:

² «Պրոլետարիատի բրձուլա» («Պրոլետարիատի կոիվ»), 1904 թ.:

նրանցից «ազատ միություն»։ Մի խոսքով,—ասում է ընկեր Ստալինը,—մեզ ասում են՝ դորժեցե՛ք ի խնդություն թշնամիների և թաղեցե՛ք ձեր սրբազան նպատակը ձեր խել ձեռքով»։

Այնուհետև ընկեր Ստալինն ասում է .

«Յեթե մենք ընթանալու լինենք այդ ուղիով, ապա վաղ թե ուշ հարկադրված կլինենք յեղբակացեալու, վոր, որինակ, հայկական պրոլետարիատի «ազդային» և ելի վորէն ալ «տարբերություններ» նույնն են, ինչ վոր հայկական բուրժուազիայինը, վոր հայ պրոլետարիատը և հայ բուրժուազիան ունեն միանման սովորություններ ու բնավորություն, վոր նրանք կազմում են մի ժողովուրդ, մի անբաժանելի «ազգություն»։

Ընկեր Ստալինը ջախջախում է այդ վնասակար, ուսակցիոն թեորիան, նշելով, վոր պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ է բոլոր բանվորների միացում, միահամուռ և միաձույլ շարքերով, առանց ազգային խտրության։

«Սոցիալ-դեմոկրատիան ինչպես է հասկանում ազդային հարցը» հոդվածում ընկեր Ստալինը խոսելով «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպության» ելության մասին, նշում է, վոր այն չի արտահայտում հայ պրոլետարիատի շահերը։

Ընկեր Ստալինը գրում է, վոր

«Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը» . . . իր «Մանիֆեստում» վճռականապես հայտարարում է, վոր «պրոլետարիատին (հայկական։—Ի. Ս.) չի կարելի բաժանել հասարակությունից (հայկականից։—Ի. Ս.) . միացյալ (հայկական) պրոլետարիատը պետք է լինի հայ ժողովրդի ամենախելացի և ուժեղ որդանը», վորը «սոցիալիստական կուսակցության մեջ համախմբված հայկական պրոլետարիատը պետք է ձգտի վորոշելու հայկական հասարակական միտքը, վոր հայկական պրոլետարիատը կլինի իր ցեղի հարազատ զավակը» և այլն (տե՛ս «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպության» «Մանիֆեստի» 3-րդ հոդվածը)։

Նախ և առաջ, հասկանալի չէ, թե ինչո՞ւ «չի կարելի հայկական պրոլետարիատին բաժանել հայկական հասարակությունից», յեթե այդ «բաժանումը» տեղի չէ ունենում ամեն քայլափոխին։ Մի՞թե հայկական միացյալ

պրոլետարիատը չ«բաժանվեց» հայկական հասարակությունից, յերբ նա 1900 թվականին (Թիֆլիսում) պատերազմ հայտարարեց հայկական բուրժուազիային և բուրժուականորեն մտածող հայերին։ Իսկ ի՞նչ է ներկայացնում իրենից «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը», յեթե վոչ հայ պրոլետարների դասակարգային կազմակերպությունը, պրոլետարներ, վորոնք «բաժանվել են» հայկական հասարակության մյուս դասակարգերից։ Կամ, մի դուցե, «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը» հանդիսանում է բոլոր դասակարգերի կազմակերպությունը։ Բայց կարո՞ղ է արդյոք, պայքարող հայ պրոլետարիատը սահմանափակվել «հայ հասարակական մտքի վորոշումով»։ Պարտավոր չե՞, արդյոք, նա առաջ դնալու, պայքար հայտարարելու այն՝ մինչև ուղն ու ծուծը բուրժուական «հասարակական մտքին» և նրան ներշնչել հեղափոխական վողի։ Փաստերն ասում են, վոր նա պարտավոր է։ Բայց յեթե դա այդպես է, ապա ինքնին պարզ է, վոր «Մանիֆեստը» ընթերցողի ուշադրությունը պիտի դրավի վոչ թե «հասարակական մտքի վորոշման» վրա, այլ այդ մտքի դեմ պայքարելու վրա, նրան հեղափոխականացնելու անհրաժեշտության վրա. դրանով նա ավելի լավ բնութագրած կլինի «սոցիալիստական պրոլետարիատի» պարտականությունները։ Յեւ, վերջապես, մի՞թե հայկական պրոլետարիատը կարող է լինել «իր ցեղի հարազատ զավակը», յերբ այդ ցեղի մի մասը՝ հայկական բուրժուազիան՝ սարդի նման ծըծում է նրա արյունը, խել մյուս մասը՝ հայկական հոգեվորականությունը, բացի նրանից, վոր ծծում է բանվորների արյունը, սխտեմատիկ կերպով ապականում է նրա դիտակցությունը։ Այդ բոլոր հարցերը հասարակ ու անխուսափելի յեն, յեթե դորժի վրա նայելու լինենք դասակարգային պայքարի տեսակետից, բայց «Մանիֆեստի» հեղինակներն այդ հարցերը չեն նկատում, վորովհետև նրանք դորժի վրա նայում են ֆեդերալիստական-նացիոնալիստական տեսակետից, վորը նրանք բնորոշակել են Բուհդից (հրեական բանվորական միություն)։ Յեւ ընդհանրապես, «Մանիֆեստի» հեղինակները ասես իրենց նպատակ են դրել՝ ամեն ինչով նմանվել Բուհդին։ Նրանք իրենց «Մա-

նիֆիստի» մեջ մտցրել են նաև Բուենդի Վ համադումարի բանաձևի յերկրորդ հոդվածը՝ «Բուենդի դրուժյունը կուսակցութեան մեջ»։ Նրանք «Հայ բանվորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան» անվանում են հայ պրոլետարիատի շահերի միակ պաշտպանը (տե՛ս մատնանշված «Մանիֆիստի» 3-րդ հոդվածը)։ «Մանիֆիստի» հեղինակները մոռացել են, Վեր մեր կուսակցութեան կուկապան կոմիտեներն ահա արդեն միջանի տարի յե համարվում են հայկական (և ուրիշ) պրոլետարներին ներկայացուցիչները Կուկապում, Վեր նրանք այդ պրոլետարներին մեջ վարդապետում են դատակարգային ինքնագիտակցութեանը՝ հայկական բեղմով բանավոր ու տաղերը պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով, պայքարի ժամանակ դեկլամարում են նրանց և այլն, մինչդեռ, յերբ «Հայ բանվորներին սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան» ծնվել և միայն յերեկ չե մյուս օրը։ Այդ ամենը նրանք մոռացել են, և, պետք է հուսալ, ելի շատ բան կմոռանան, միայն թե ճշտութեամբ ընդորինակեն Բուենդի կազմակերպական ու քաղաքական հայացքները։

Ահա այսպիսի վճռականութեամբ ընկեր Ստալինը ջախջախում է Ֆեդերալիստներին ու բուրժուական նացիոնալիստներին։

Անդրկովկասի բոլշևիկները, ընկեր Ստալինի գլխավորութեամբ, զինված լենինյան տակտիկայով և ստրատեգիայով, գլխավորում եյին բանվորներին և դյուղացիներին հեղափոխական պայքարը։

Այդպիսով ուսական առաջին հեղափոխութեան ժամանակաշրջանում Անդրկովկասի և Հայաստանի բանվորներին ու դյուղացիներին հեղափոխական շարժման ամեն մի հաջողութեան արդյունք է յեղել անողորմ ու հետևողական այն պայքարի, Վոր մղել են բոլշևիկները ընդդեմ մենշևիկների, դաշնակների, սպեցիֆիկների և բուրժուական նացիոնալիստական բոլոր կուսակցութեաններին։

Ստալինի լավագույն աշակերտ, իսկական լենինյան ընկեր Լավրենտի Պավլովիչ Բերիան ասում է․

«Մասսայական հեղափոխական շարժման յուրաքանչյուր հաջողութեանն առաջին հեղափոխութեան մեջ (1905—1907 թ. թ.) բոլշևիկների կողմից նվաճվել և մենշևիկներին

դեմ և բոլոր մանր-բուրժուական ազգայնական կուսակցութեաններին դեմ մղած անհաշտ պայքարում»¹։

Ընկեր Ստալինը կազմակերպել և դատարարակել է Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպութեանները։ Նա վրդեփել է Հայաստանի բանվորների և դյուղացիների պայքարի յուրաքանչյուր հերոսական քայլն ընդդեմ ցարական ինքնակալութեան, ընդդեմ բուրժուակալի, ընդդեմ հայ ժողովրդի վրեժների թշնամիներ՝ դաշնակներին։

Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպութեաններին, հեղափոխական շարժումների ամբողջ պատմութեանը անխզելիորեն կապված է հայ ժողովրդի մեծ ազատարար, հաճախյալային պրոլետարիատի համարեղ առաջնորդ ընկեր Ստալինի անվան ու աշխատանքի հետ։

¹ Լ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպութեաններին պատմութեան հարցի շուրջը», էջ 116։

ՌՍԴԲԿ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎՆԵՐԸ

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՐԵՐԻ ԱՌԹԻՎ՝

Նկատի ունենալով,

1. Վոր Կովկասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանները նպաստել են այնտեղ մեր կուսակցության ամենամարտական կազմակերպությունների ստեղծմանը.

2. Վոր հեղափոխական շարժումը Կովկասի բնակչության մեծամասնության մեջ ինչպես քաղաքներում, այնպես և գյուղերում, արդեն հասել է համաժողովրդական ապստամբության ընդգեղմ ինքնակալության.

3. Վոր ինքնակալ կառավարությունն արդեն զորք ու հրետանի՝ յե ուղարկում Գուրիա, պատրաստելով ապստամբության բոլոր կարևորագույն ոջակների ամենաանխնա ալերումը.

4. Վոր ինքնակալության հաղթությունը ժողովրդական ապստամբության դեմ Կովկասում, — մի հաղթություն, վոր հեշտանում է այնտեղ բնակչության ալլացեղ կադմով, — ամենալինասակար հետեանքներ է ունենալու ապստամբության հաջողության համար ամբողջ Ռուսաստանում, —

ՌՍԴԲԿ III համադումարը Ռուսաստանի դիտակից պրոլետարիատի անունից ջերմադին վողջույն է հղում Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը և հանձնարարում է կուսակցության կենտրոնական ու տեղական կոմիտեներին՝ ձեռք առնել ամենայնուանդադին միջոցներ, վոր Կովկասի գործերի դրություն մասին ամենաալայն կերպով տեղեկություններ տարածվեն բրոշյուրներ, միտինգներ, բանլորական ժողովներ, խումբակային գրույցներ և այլ միջոցներով, այլև ժամանակին աջակցություն ցույց տրվի Կովկասին իրենց տրամադրության տակ յեղող բոլոր միջոցներով:

1 Տե՛ս «Համկ(բ)ի-ն բանաձևերում», 1 մ., էջ 52:

Նկատի ունենալով,

1. Վոր ներկայումս ծավալվող գյուղացիական շարժումը լինելով տարերային ու քաղաքականապես անդիտակցական, այնուամենայնիվ, անխուսափելիորեն դառնում է գոյություն ունեցող հասարակակարգի դեմ և առհասարակ ճորտատիրությունների դեմ.

2. Վոր սոցիալ-դեմոկրատիայի անելիքների մեջ մտնում է գոյություն ունեցող հասարակական և քաղաքական կարգի դեմ ուղղված հեղափոխական ամեն մի շարժման աջակցելը.

3. Վոր այդ պատճառով սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի մաքրելու գյուղացիական շարժման հեղափոխական-դեմոկրատական լավանդակությունը ունակելուն ամեն տեսակ խառնուրդներից, դարգացնելով գյուղացիների հեղափոխական ինքնագիտակցությունը և մինչև վերջը հասցնելով նրանց դեմոկրատական պահանջները.

4. Վոր սոցիալ-դեմոկրատիան, իրիս պրոլետարիատի կուսակցություն, բոլոր դեպքերում և բոլոր պարագաներում անշեղորեն պետք է ձգտի ինքնուրույն կերպով կազմակերպելու գյուղական պրոլետարիատին և բացատրելու նրան նրա շահերի անհաշտելի հակադրությունը գյուղացիական բուրժուազիայի շահերի նկատմամբ, —

ՌՍԴԲԿ III համադումարը հանձնարարում է կուսակցական բոլոր կազմակերպություններին.

ա. պրոպագանդա մղել ժողովրդի լայն խավերում, վոր սոցիալ-դեմոկրատիան իրեն նպատակ է դնում ամենայն յեռանդով աջակցել գյուղացիության այն բոլոր հեղափոխական միջոցառումներին, վորոնք ընդունակ են բարելավելու գյուղացիության դրությունը՝ ընդհուպ մինչև կալվածատիրական, պետական, յեկեղեցապատկան, վանքապատկան ու ուղեւային հողերի բռնադրավումը.

բ. վորպես գյուղացիության մեջ ագիտացիա անելու գործնական լուղուղ և վորպես գյուղացիական շարժման մեջ ամենամեծ գիտակցություն մտցնելու միջոց, առաջադրել գյուղացիական հեղափոխական կոմիտեների անհապաղ կազմակերպման անհրաժեշտությունն այն նպատակով, վոր գյուղացիությունը վոս-

1 Տե՛ս «Համկ(բ)ի-ն բանաձևերում», 1 մ., էջ 48—49:

տիկանական-չինոյնիկական ու կալվածատիրական ճնշումից ազատելու համար կիրառվեն հեղափոխական-դեմոկրատական բոլոր բարեփոխությունները.

դ. ինքնակալությունը կազմավորվելու և նրա դեմ մղվող հեղափոխական դրոշին աջակցելու նպատակով կոչ անել դյուղացիությունը և դյուղական պրոլետարիատին ամեն տեսակ քաղաքական ցույցերի, կոլեկտիվորեն հրաժարվել տուրքեր ու հարկեր վճարելուց, դիմադրական ծառայություն կատարելուց և կառավարություն ու նրա դործակալներին վերջումներն ու կարգադրությունները կատարելուց.

զ. ձգտել այն բանին, վոր դյուղական պրոլետարիատը ինքնուրույն կերպով կազմակերպվի, վոր նա սոցիալ-դեմոկրատական կուսակցություն դրոշի ներքո միաձուլվի քաղաքային պրոլետարիատի հետ և նրա ներկայացուցիչներն անցկացվեն դյուղացիական կոմիտեներին մեջ:

ԸՆԿԵՐ ՍՏԱԿԻՆԻ ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՎՍՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՓԱՆՈՒՍՏՆԵՐԻ ԽՐԱՆԻԿԱՆ

5 ապրիլի 1902 թ.

Ընկեր Ստակինի ձերբակալությունը Բաթումում (առաջին ձերբակալություն):

19 ապրիլի 1903 թ.

Ընկեր Ստակինին փոխադրում են Քուլթայիսի նահանգական բանտը:

Նոյեմբեր, 1903 թ.

Ընկեր Ստակինին Բաթումի—Նովոբոսիյսկի վրայով արտաքսում են Արևելյան Սիբիր, Իրկուտսկի նահանգը, յերեք տարով (առաջին աքսոր):

5 հունվարի 1904 թ.

Ընկեր Ստակինի փախուստն աքսորից (Բալադանսկից Իրկուտսկի նահանգ) և նրա գալն սկզբում Բաթում, իսկ այնուհետև Քիֆլիս (առաջին փախուստը):

25 մարտի 1908 թ.

Ընկեր Ստակինի ձերբակալությունը Բազում, Գալոզ Նիժարածե անվան տակ: Ընկեր Ստակինին նստեցնում են Բայկովյան բանտը (յերկրորդ ձերբակալություն):

20 սեպտեմբերի 1908 թ.

Ընկեր Ստակինին յերկու տարով աքսորում են Վոլոդզայի նահանգի Սուլիշևսկի քաղաքը (յերկրորդ աքսոր):

24 հունիսի 1909 թ.

Ընկեր Ստակինը փախում է Վոլոդզայի նահանգից (յերկրորդ փախուստ):

23 մարտի 1910 թ.

Ընկեր Ստակինի ձերբակալությունը Բազում (յերկրորդ ձերբակալություն):

27 ոգոստոսի 1910 թ.

Կովկասի փոխարքայի կարգադրությամբ ընկեր Ստակինին 5 տարի ժամանակով արգելվում է ապրել Կովկասյան յերկրամասի սահմաններում:

23 սեպտեմբերի 1910 թ.

Ընկեր Ստակինին աքսորում են Վոլոդզայի նահանգի Սուլիշևսկի քաղաքը (յերկրորդ աքսոր):

- 6 հուլիսի 1911 թ.
Ընկեր Ստալինը փախչում է արտերկրյ (չեքոսլովակացի) փախուստը):
- 9 սեպտեմբերի 1911 թ.
Ընկեր Ստալինի ձերբակալությունը Ս.-Պետերբուրգում (չորրորդ ձերբակալություն):
- 14 դեկտեմբերի 1911 թ.
Ընկեր Ստալինին արտերում են վաճառողի նահանգի Սոլովիցիովսկի քաղաքը (չորրորդ արտեր):
- 29 փետրվարի 1912 թ.
Ընկեր Ստալինի փախուստն արտերկրյ (չորրորդ փախուստ):
- 22 ապրիլի 1912 թ.
Ընկեր Ստալինի ձերբակալությունը Ս.-Պետերբուրգում (հինգերորդ ձերբակալություն):
- 1912 թ. ամառվա սկիզբը
Ընկեր Ստալինին 4 տարով արտերում են նարիմյան յերկրամասը (հինգերորդ արտեր):
- 1912 թ. ամառ
Ընկեր Ստալինի փախուստն արտերկրյ (նարիմյան) և վերադարձը Ս.-Պետերբուրգ (հինգերորդ փախուստ):
- 1913 թ. մարտ-ապրիլ
Ընկեր Ստալինի ձերբակալությունը Ս.- Պետերբուրգում (վեցերորդ ձերբակալություն):
- 1913 թ. հունիս
Ընկեր Ստալինին չորս տարով արտերում են Տուրուխանյան յերկրամասը, վոստոկանություն հսկողության տակ (վեցերորդ արտեր):
- 1913 թ. հունիս—
- 1917 թ. փետրվար
Ընկեր Ստալինը դաժնում է արտերում, Տուրուխանյան յերկրամասում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	62
Գլուխ I. Հայաստանը 1905—1907 թ. թ. հեղափոխության նախա- բյակին	7
Գլուխ II. Ընկեր Ստալինը Հայաստանի հեղափոխական շարժման կազ- մակերպիչ ու վարչապետը	9
Գլուխ III. Պայքարը ընդդեմ մենշևիկների, դաշնականների, սպեցիֆիկ- ների և այլ ուղիղ ռևոլյուցիոն ուժերի	47
Հավելվածներ.	105
ԲՄԴԲԿ III Համադումարի բանաձևերը («Կուլկասի դեպքերի առթիվ», «Վերաբերմունք դեպի գյուղացիական շարժումը»)	122
Ընկեր Ստալինի ձերբակալությունները, արտերները և փախուստները խրոնիկան	125

Թմբազբեցին Բ. Մարտիրոսյան, Ս. Ղևոնդյան
Տեխն. թմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դոլուխանյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արովյան

Հանձնվել է արտադրության 20/VII 1940 թ.

Ստորագրվել է ասիլով 22/XI 1940 թ.

Հրատ. № 782, պատվեր № 257, տիրաժ 3500

Заказ № 257, тираж 3500

Դինը 3 ս. 50 կ., կազմը լիդերինից 2 ս., կալենկորից 1 ս. 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահաբեգյան № 65

Типография Гос. изд. полит. литературы,
Ереван, Аллавердян № 65

ՎՃ 2079

630

ՀՀ Ազգային գրադարան



NL0411462

2599

9(47)

2-39